



ՌՆ Գ

Ժ. ՏԱՐԻ


Հոկտեմբեր

ԼՍՐԻԱՅԻՆ

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱՆՆԻ

X

1953



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԴՐԱԿԱՆ.— Ամենայն Հայոց Բնդնանական Հայրապետությունը	
Ե ՄԼԺԻ Տաճը Կիլիկիո Կարողիկոսությունը	3
ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԱՂԱՏՅԱՆ.— «Ուխտ դի՛մ ե կատարեցէ՛մ»	8
ԱՄՆՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅԲԱՊԵՏԻ պատասխանը Դերենիկ Եպիս- կոպոսի	10
ԿԵՈՐԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱԹՅԱՆ.— Որո՞ւ պատվիրանը Հիսուսի վարդապե- տության մեջ	11
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ	14
ՄԵԼՏԻՐՈՍ ՏԵՐ-ՈՏԵՖԱՆՅԱՆ.— Իրական-գեղարվեստական հանգես II. Համիաձեռն՝ եվրոպա՞ն սրբոց բարգմանչաց սրբազան հիշա- կին	17
ՊՐՈՒՃ. Հ. ԱՆՈՒՅԱՆ.— Հայոց անձնանունները	21
Ա. ԵՐԵՄՅԱՆ.— Սանդանկարիչ Սարգիս Պիճակ	30
ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ.— Կոմիտաս վաղապետի պեր խաղալուորյան ե հալ Էկեղեցական երաժշտության ասպարեզին մեջ	36
Հ. ԱՐԱՄՅԱՆ.— Վարպետը	40
Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Նոր ուսումնական շենքեր Երևանում	47
ՈՏԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ	51
ՀՍՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	55
ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ Հարությունի Տերտիսյան	58
ՐԱՆԱՍԻՐ.— Փալատոս Թուրանդի Հայոց պատմությունը ուսման	61

ԽՄԲԱԴՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵՆՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿ, ԷՋՄԻՇԵՄԻՆ

«ԷՋՄԻՍՄԻՆ» ՍՍՍՐԳՐԻ ԽՍՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР. Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Redaction of the magazine «Etchmiadzin». Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1953 թ.

Հ Ր Ա Ս Ա Ն Ա Ւ
Տ. Տ. ԳԵՈՐԳՅԱՅ ԶԻ
ՎԵՀԱՓԱԹ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԴՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԸՆԴՀԱՆՐԱՊԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՐԻԿԻՈ ԿԱՐՈՂԻԿՈՍԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ



Եձի Տանն Կիրիկիո Էրջան-կանիշատակ և հավետ ան-մոռանալի Նորին Ս. Ոծու-րյուն Տ. Տ. Գարեգին Վենի-անփոխարինելի մանից հետո, սգի սև շղար-շը դեռ չի վերացվել Կիրիկիո Հայրապետա-կան Աթոռի վրայից: Կարողիկոսական ընդ-հանուր փոխանորդ ամենապատիվ Տ. Խոսր-արհեպիսկոպոսի խոհուն և շրջանայաց վար-չագիտությամբ, Մեծի Տանն Կիրիկիո Կա-թողիկոսի ընտրության նախապատրաստա-կան աշխատանքները վերջանալու վրա են և մոտ ժամանակներս Անթիլիասի Հայրապե-տանոցում կընտրվի արժանավորագույն եկե-ղեցականը և այդ արժանավոր ընտրու-րյամբ մի անգամ ևս կփառավորվի Հայաս-տանյայց Առաքելական Եկեղեցին՝ ի մխի-բարություն Կիրիկյան բեմերի հայ հավա-տացույ ժողովրդի և ի սփռված Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետ Նորին Ս. Ոծուրյուն Տ. Տ. Գեորգ Զ. հայրենասեր Կա-թողիկոսի:

Լինի Ամենայն Հայոց Ընդհանրական Հայ-րապետի, լինի մեր մյուս նվիրապետական Աթոռների գահակալների ընտրությունը— միշտ էլ՝ մեծ ու պատմական իրադարձու-թյուն է հանդիսացել Հայաստանյայց Առա-

քելական Եկեղեցու կյանքում: Կարողիկոսա-կան ամեն մի ընտրություն, առավել կամ նվազ չափով, նոր ու պատմական իրադար-ձություն է հայ հավատացյալ ժողովրդի կյանքում և մեր եկեղեցական տարեգրու-թյան մեջ: Մեծի Տանն Կիրիկիո Կարողիկո-սի ընտրության հարցը այսօր, սակայն, Կի-րիկյան բեմերի մասնավոր ու տեղական հարցը չէ միայն, այլ նաև՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ընդհանուր հարց, որը շոշափում է Հայաստանյայց Առաքելա-կան Եկեղեցու կենսական շահերը և առըն-չրվում է մեր ազգային-եկեղեցական կարևոր մի հարցի՝ միասնականության հարցի հետ:

Ապրում ենք ազգովին քաղաքական բարդ և դժվարին իրադրության մեջ— «Աշխարհ ամենայն ի չարի կայ» (Ա. Հովհ., Ե 19): Շատ փափուկ է Սփյուռքի մեր հայության, առանձնապես Կիրիկյան բեմերի և Հայաս-տանյայց Առաքելական Եկեղեցու կացու-թյունը: Գաղտնիք չէ, որ այսօր Սփյուռքում, հատկապես Սիրիայում և Լիբանանում կան հայ ժողովրդի, Հայաստանյայց Առաքելա-կան Եկեղեցու միասնության հայտնի և բա-ժուն բշեռմիներ, քաղաքականապես վա-ճառված, բարոյապես ալլապերված, «ան-պիաանք ի հաւատս» մարդիկ, որոնք քալո՛ր

անեների միջոցներով աշխատում են հայ-
ֆայել հայ ժողովրդի կոոս միասնությունն ու
համախմբվածությունը իր նկեղեցու շուրջը:

Անցյալում Հայրապետական Արոտի հա-
յածական վտարանդիությունը, հայ ժողո-
վրդի բոնադատյալ զաղթականությունը և
խորայնյան բափառումները «զօրէն մոլո-
րական աստեղաց», մեր հաղափական ան-
կայուն ու անապահով վիճակը պատճառ են
հանդիսացել նորանոր ազգային-էկեղեցա-
կան կենտրոններ ստեղծելու, և «Մայր ու
միակ Հայրապետական Արոտ»ից բացի ունե-
ցել ենք նաև նվիրապետական ուրիշ Արոտ-
ներ:

Պատմական ու հաղափական այդ տխուր
դեպքերի հարկադրանքով ստեղծված այս
վիճակը նպաստավոր եղել է ստեղծել Հայոց
նկեղեցու և հայ ժողովրդի բշխմանների հա-
մար՝ փորձելու նակագրել մեր էկեղեցական
բեմերն իրար, մեր էկեղեցական բեմերը՝
Ընդհանրական Հայրապետության, պառակ-
տելու մեր նկեղեցին և համայնները և այդ
անազնիվ հանապարհով աշխատելու քույա-
կամ հավատացյալներին ձգելու իրենց
ցանցը:

Ի պատիվ մեր բազմաշարժար ժողովրդի
պետի է ասել, որ հայ ժողովրդի և Հայ նկե-
ղեցու բշխմաններին, ճիմնականում, չի հա-
ջողվել հասնել մեծ հաջողությունների— խա-
փանել Հայաստանյայց Առաքելական էկե-
ղեցու միության զապափուր, որովհետև նայ
հավատացյալ ժողովուրդը հոգեին փառել է և
սիրում է Հայաստանյայց Առաքելական
էկեղեցին: Հայ ժողովուրդը ո՛ր էլ որ
դտնվել է, երկրի ո՛ր ծայրում էլ նրանք նե-
տել է տխուր նակատագիրը, նա նայն էկե-
ղեցու նարագատ զավակն է մնացել, էջ-
միածնի հողերն ձեռնողը: Ամենայն Հայոց
Հայրապետությունը հայ ժողովրդի կյանքում
հանդիսացել է ռսկի խաբիսիսը, «վէմն հաս-
տատուրեան, անշարժութեան և սիւնն որե-
ղէն»: Այսպէ՛ս է բացատրել ու սովանդել մեր
ժողովրդին Միածնի իջման տեղի գերաբարձ
խորհուրդը՝ մեր հավատի հայրն ու խոսա-
վորիչը:

Հայաստանյայց Առաքելական էկեղեցու
գերագան Արոտը՝ նախամեծար Արարատյան
Մայր Արոտն է, «նաստատեալ և պայծա-

ռացեալ ի տեղին իջման Միածնին ի յու-
ստորշահիմն Ս. էջմիածին»»: «Ժամանակի
ընթացում,— գրում է Օրմանյանը,— տե-
ղափոխվեւ է Արոտը, այլ չէ տեղափոխվեւ
աստվածաբարձ տեղին իջման և չէ փոխվեւ
Արոտը ի յաշխարհայն և ի յաշխարհայնց,
արտոնությանց և պաշտամանց կերպն ու
կարգը»:

Հայաստանյայց Առաքելական էկեղեցու
պատմությունը ցույց է տվել, որ Սփյուռքի
հայության այն հատվածը, որը թույլացել է
իր կապերը Մայր Արոտ Ս. էջմիածնի հետ,
այդպիսին կորցրել է մեր կարգերի, ավան-
դությունների նախանձախնդրությունը, մեր
նախնյաց ոգին ու եռանդը: Մահն արմատով
է ծառ, տունն հիմամբ է տուն:

«Մի և հայր մեր, մի և միակրօն ազգն
Հայոց»:

«Հայաստանյայց Առաքելական էկեղեցու
միության արտահայտությունն է Ամենայն
Հայոց Հայրապետությունը,— գրում է իրա-
վամբ ազգիս սիրելի ու հայրենասէր մեծ
կարողիկոս Գևորգ Զ.ը,— որի նշանակու-
թյունն այժմ ոչնչով նվազ չէ անցյալից: Յու-
րաբանչյուր ազգ պետի է մի կենտրոն, մի
օրբավայր ունենա, ուր ուղղել կարողանա
յուր աշխեր իբր ամբողջություն: Այդ կեն-
տրոնն ու օրբավայրը հայ ժողովրդի համար
Ս. էջմիածինն է, Հայաստանյայց Առաքե-
լական էկեղեցու ծագման ու հաստատու-
թյան օրրանը: Ամենայն Հայոց Հայրապետու-
թյունը հայի զգայուն սիրտն է եղել, որ զա-
բեր շարունակ ապրել է նրա տնտուն ցավե-
րով և սակավ ռուսխություններով: Ամենայն
Հայոց Հայրապետությունը հայի ստեղծող
միտն է եղել, որ յուսավորված ֆրիստո-
նեական երկնային յուշտով՝ ստեղծել է գրա-
կանություն և գեղարվեստ, ներկա հայի
փառն ու պարծանքը: Ամենայն Հայոց Հայ-
րապետությունը՝ հայի ազնիվ և տոկուն
կամֆի արտահայտությունն է եղել, տալով
առաքինության ներոսներ, աստվածային
կամֆի նշմարիտ աշակերտներ»:

Ս. էջմիածինը «Մայրն է Հայաստանյայց
Առաքելական էկեղեցիներին»: Ամենայն Հա-
յոց Ընդհանրական Հայրապետության
բախտն ու պատմությունը սերտորեն կապ-
ված են եղել հայ ժողովրդի պատմության

ու բախտի հետ: Քրիստոնեական ո՛չ մի եկեղեցի ո՛չ մի ժողովրդի կյանքում այնքան վնասական ու ֆակտացրական դեր չի կատարել, որքան Հայաստանյայց Առաքելական եկեղեցին՝ հայ ժողովրդի կյանքում: Ե՛վ իր փառքի օրերին, և՛ իր դժբախտ օրերին, Ս. էջմիածինը հանդիսացել է հայ ժողովրդի միասնության և գոյության խորհուրդը, հայ ժողովրդի ազգային-եկեղեցական զգացման կենտրոնը: Ս. էջմիածինն իր բեռի տակ առել ու պահպանել է հայ ժողովրդին, Վրացիս հալածման ժամանակ: Ս. էջմիածինն հայել ու ապրել, կովել ու ստեղծագործել են մեր հայրենիքը: Այդ գաղափարը պատկերավոր ենթակայացված է պատմահայր Խորենացու կողմից Վահան Ամատունու սխրագործության օրինակով. «Յայնժամ քաջին Վահանայ Ամատունույ հայեցեալ յեկեղեցին կաթողիկէ, ասէ,— Օգնեա՛ ինձ Աստուած, ուղղեա՛ և զնիգակն իմ ական հղօրիս այսմիկ»: Մեր լուսամիտ մատենագիրներինց մեկ ուրիշը՝ Առաքել Բաղիշեցին, էջմիածինը բնորոշել է հետևյալ կերպ. «էջմիածին կաթողիկէ... էջմիածին պարծանք Հայոց, էջմիածին ժողովարան...»:

Ահա քե ինչո՞ւ ամեն մի փորձ, ամեն մի ձեռնարկ, որ նպատակ ունի բուլացնել մեր բնմեծի կապը Մայր Աթոռ Ս. էջմիածնից, որ նպատակ ունի հակադրել մեր Պատրիարքարաններն ու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունն Ընդհանրական Հայրապետությանը — բխում է պղտոր աղբյուրներից:

Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության փոխհարաբերությունների հարցը վճռվել է մեր ազգային-եկեղեցական ժողովներում: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձրագույն և գերագույն Աթոռի՝ Ս. էջմիածնի և մեր մյուս նվիրապետական Աթոռների միջև սահմանվել է պատշաճ ու օրինավոր հարաբերություն, հռչակվել է սեր և միություն, և Ամենայն Հայոց Հայրապետը համարվում է Պետ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, ռաստումարեալ Քառանգապետ, որ աստուածատիպ գաղաքան օծութեամբ ինքնիշխան գլուխ եկեղեցույն կարգեալը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու

պատմության հատկապես վերջին հիսնամյակում սկսվել է Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջև ցանկալի ու սիրալիր հարաբերություն: Խրիմյանի և Խալապանցի օրերից սկիզբ է առնում այդ համագործակցությունը, որը Գեորգ Զ.ի և Գաբրիել Ա.ի օրով վերածվել էր սրտառույ մտերմության:

1945 թվականին էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովը, որը բացառիկ երևույթ էր մեր եկեղեցական պատմության մեջ, սրբագործեց և կանոնականացրեց երկու Աթոռների այդ սրտագին հարաբերությունը: Ամենայն Հայոց Հայրապետի բնորոշության մասնակցեցին ինչպես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գաբրիել Վեհր՝ իր եկեղեցական ու աշխարհական պատգամավորներով, այնպես նաև Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքությունները, և ուր մի անգամ ևս հռչակվեց ի լուր աշխարհի և հայ ժողովրդի, որ՝ ՄԻ Է ՀԱՅԱՍՏԱՆՑԱՑԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԵՎ ՄԻ Է ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ:

Գաբրիել Վեհր՝ իր գրական-բանասիրական, պատմական, կրոնական չգերազանցված վաստակների հետ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ավանդ թողեց նաև մի կենդանի և հոգևոր ժառանգություն. դա հայ-բենասիրության և էջմիածնասիրության բուրբախ զգացումն էր, որով նա ապրեց և ստեղծագործեց ավելի քան 60 տարիներ: «Պարտականություն ենք համարում,— հայտարարել է նա,— մեր բոլոր ուժերը, գրիչը, խոսքը, փորձառությունն ու պաշտոնի հեղինակությունը ի սպաս դնել բոլորանվեր ընդհանուր Հայաստանյայց եկեղեցու փառքի, պայծառության և բարոյական ազդեցության գործընթացին համար... Ընդունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերագույն դիրքը, կկամենայինք, որ ըստ ամենայնի պահպանվեր նրանց պատշաճ հարաբերությունը, ըստ պաշտոնի և կոչման: Միասնականությունը կամենում ենք իրականացնել տեսնել գիտակցական փոխադարձ հասկացողությամբ և հարգանքով կառարված պարտքերի, նպատակների և ձգտումների միության մեջ: Մենք իբրև Կիլիկիո Հայրապետական Աթոռի Գաբրիել պատրաստ ենք Մեր կարեկին բերել,

հավերժացնել ավելի սերտ. ավելի գիտակցական և միևնույն ժամանակ ավելի շրջահայաց հաշտություն Մայր Աթոռի հետ»:

Հայրապետական իր անդրանիկ կոնդակում, որը մեր եկեղեցական նորագույն մատենագրության ղոհաբերներից մեկն է, Վենդրել է. «Մի՛ մոռացու՛մ թէ՛ մե՛կ ոսա՛ք էմք ի միոյ ծառոյն կենդանութեան Ազգիս Հայոց, որ բնակի ի պատմական Հայրենիս, ի սահմանս Խորհրդային Հայաստանի»:

«Ո՛չ երբեք այնպէս խօսեցաւ մարդ, որպէս այրն այն» (Հովհ., է 47):

Աչբի յույսի պէս պատմիչ և պահպանիչ Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետական Աթոռի հետ բարեկամական կապը, որը կենսական նշանակություն ունի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կյանքում մանավանդ այսօր:

Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետությունը, իր պատմության ողջ ընթացքում, ղեկավարվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մյուս նվիրապետական Աթոռների նկատմամբ բոլորակողմանի լայնախորհրդանոց ոգով և օրինակով, փոխադարձ սիրու և հարգանաց մեծ սկզբունքներով. պարտի և պարտականությունաց փոխադարձ ըմբռնումով: Կրոնական բռնապետությունը, «միասնականություն» անվան տակ՝ միապետությունը, փառասիրական տխուր ձգտումները, իշխանասիրության հիվանդագին երևույթը խորք են եղել Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետներին, քստ առաքելական պատվերի՝ «Մի՛ իբրև տիրելով վիճակացն. այլ լինել օրինակ հոտին» (Ա Պետրոսի, Ե 3):

Մայր Աթոռի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մյուս նվիրապետական Աթոռների ազդալին-եկեղեցական իմաստուն և հեռատես հաղափականության շնորհիվ, փոխադարձ հարգանքի և հասկացողության պայմաններում, սերտ համագործակցությամբ միայն կարելի է ապահովել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ցանկալի միասնությունը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի համար բախտավորություն է այսօր, որ ունենք էրանանի հյուրընկալ փառաբան Մեծի Տանն Կիլիկիո պատմական Հայրապետական Աթոռը, որը կանգուն է ու

պայծառ, իր կոշման ու պարտականության զիտակից ծառայությամբ մեջ, և ուր լուսահողի Տ. Սահակ, Տ. Քարգեն և մանավանդ Տ. Դաբեղին կարողիկոսների շնչով հասակ է առել շնորհալի ու խոստովանալից հոգևորականների մի նոր սերունդ, որը նախնայաց ոգով ու նախանձախնդրությամբ աշխատում է բարձր պահել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գիրեն ու պատմական դերը՝ հայ ժողովրդի կյանքում:

Այդ հանգամանքը ո՛չ միայն մեծ ուրախություն է պատճառում հայ հավատացյալ ժողովրդին, այլ նաև մեծ սփոփանք ու մխիթարություն է Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետ Դեոդ Զ.ի համար:

Մխիթարական է նաև այն, որ Անթիլիասի միաբանության շարժում գտնվում է Կարողիկոսական Դառնի արժանավոր այնպիսի մի քնկնածու, ինչպիսին Մեծի Տանն Կիլիկիո Կարողիկոսական Ընդհանուր փոխանորդ ամենապատիվ Տ. Խաղ առաքելիկոսպոս Առաքելյանն է. որը վայելում է ո՛չ միայն Ամենայն Հայոց Հայրապետի բարձր համակրանքն ու վստահությունը իր տիպար, հայրենասեր ու կշմիսծնասեր եկեղեցական, այլ նաև իր Աթոռի միաբանության և Կիլիկյան հայ ժողովրդի անվերապահ սերն ու հարգանքը, որի անհերքելի ապացույցն է այն փաստը, որ տեղի միաբանությունը միաձայն բնուրել է նրան Կարողիկոսական տեղապան:

Առաքելյանները մեծ երախտիք են քաղել անցյալում Մեծի Տանն Կիլիկիո Կարողիկոսաբանում, նրանք ժողովրդաբար նստել են այդ Աթոռի վրա 1734—1866 թվականներին. նրանցից եփրեմ Ա.թ (1771—1784 թ.թ.) եղել է ժամանակի մեծ ժողովրդականություն վայելող կարողիկոսներից, իսկ Կիրակոս Ա.թ (1801—1822 թ.թ.) որպես շինարար հռչակել է Սոսի Հայրապետանոցը և պարսպապատել այն: Խաղ սուրբազանի անունը երբեք չի արատավորվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, հայ ժողովրդի և նրա սիրելի Հայրենիքի կենսական շահերին նահապետական նկատմամբ մի ուրեք մուր ու վատահամբավ արարեով: «Անա՛ իսրայելացի, յորում ոչ գոյ ենեցօրիսն»: Խաղ սուրբազանը այսօր, Սփյուռքի մեր բարձր հոգևորականու-

թյան շարժում գրավում է բացառիկ տեղ իբր հայրենասեր ու էջմիածնասեր անբասիր հոգեւորական, որը նախնայաց ոգով աշխատում է ամենասերտ կապով և հավատարմությամբ կապվել իր Եկեղեցուն ու Հայրենիքին՝ ինչպես Երջանկանիշատակ Գարեգին Վեհը: Խաղ սրբազանը արդարացրել է հանգուցյալ Դարեգին Վեհի բարձր վստահությունը, Մեծի Տանն Կիլիկիո միաբանության և հայ ժողովրդի ակնկալությունները իր Կաթողիկոսական ընդհանուր տեղապահի պաշտոնով:

Հարկ է հանդես բերել արիություն, սկզբունքայնություն, ֆազաֆական զգոնություն, շրջահայեցողություն, մանավանդ կաթողիկոսական այս ընտրություն կապակցությամբ. «Քարգամիտ լինել որպէս աղանի. բայց զխորագիտութիւն օձին մեզ ունիմք. և ոչ տամք զողանալ զմեզ ֆանասար զայլոցս ի լուսակազմ փառախէ» (Օրբելյան):

Կիլիկյան թեմերի հայ հավատացյալ ու հայրենասեր ժողովրդի. Անթիլիասի հոգևորականության, ազգային-եկեղեցական թեմերի, մամուլի, մտավորականության ՊԱՏՎՈՒ, ԽՂՃԻ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆ Է՝ ընտրել այնպիսի մեկին, որ վառ պահի Կիլիկիո պատգուիստ բայց հայրենասեր ու ազնիվ ժողովրդի հագում նախնայաց հայրենասիրական ու էջմիածնասիրական բացառա ոգին ու զգացումը, ընտրել այնպիսի մեկին, որ այսօրվա բարդ ու դժվար աշխատանքներում կաշնեա բարձր պահել Մեծի Տանն Կիլիկիո պատմական Աթոռի հմայքը, կարենա խորացնել իր Արտոնում սրտագին ավանդությունը յարձան հայ ազգային-եկեղեցական միասնությունը, նախանձախնդիր լինի, նախնայաց ոգով, աչի լույսի պես պահել-պահպանելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաքելաբանատա կարգն ու կանոնը, մեր դարավոր Եկեղեցու յուրահատուկ ազգային սրբազան ավանդությունները, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ինքնուրույնությունը, ազգային եկարագիրը, ուղղավառությունը, ժողովրդական սկզբունքները, և աշ-


խատի ավելի քան երբեք սերտացնել կապը Ս. էջմիածնի և Մայր Հայրենիքի հետ:

Հարկ է կազմակերպված անցկացնել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական ընտրությունը՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ընդհանրականության և հայ հավատացյալ ժողովրդի միասնականության սկզբունքներով: Պատմական այդ ընտրությունը հարկ է վերածել հայ ժողովրդի միասնականության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միության տոնի, հայ ժողովրդի սիրո և հարգանքի, խմբավածության տոնի՝ իր Մայր Եկեղեցու և նրա արժանավոր ու փառ հովվի շուրջը:

Չպիտի տարվել կուսակցական ամուլ պայքարներով, որոնք ո՛չ մի լավ բան չեն խոստանում մեր Եկեղեցուն և ժողովրդին, քացի նրանից, որ կարող են վարկաբեկել հայ խաղաղասեր ու աշխատունակ ժողովրդի բարի անունը և շարաշահել մեզ հյուր-ընկալող ազնիվ և բարի արաբ ժողովրդի համբերությունն ու հանդուրժողությունը:

Մեծի Տանն Կիլիկիո նոր կաթողիկոսի ընտրությունը պայծառ ու անհերքելի ապացույցը պետք է լինի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միության և հայ ժողովրդի միասնականության, մի փայլուն ինքնաբերական սրտագին ակտ՝ Կիլիկյան ժողովրդի և թեմերի հայրենասիրության և էջմիածնասիրության: Այսօր, ավելի քան երբեք, այդ ընտրությունը մեզ պետք է դրսևորվի Կիլիկիո հայ ժողովրդի կամքի, ձգտումների, գործողությունների միասնությունը: Ա՛յդ է պահանջում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի գերագույն շահը, ա՛յդ են պահանջում ժամանակի ոգին և հանգամանքները:

Թո՛ղ Ամենակալն իր Աջը հովանի դարձնի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական Աթոռի վրա, իմաստություն պարգևի ընտրվելիք Կանակալին, որ հա ավելի գորացնի, ավելի սերտացնի հայ ժողովրդի միությունը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միասնականությունը:





ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԺՈՒԱՏՅԱՆ

«ՈՒՒՏՍ ԴԻՔ ԵՒ ԿԱՏԱՐԵՑԷՔ»

(Ողջուլնի խոսք, ասված Ս. Իշման սեղանից, Վեհափառ Հայրապետի անվանակոչությամբ տոնի առթիվ, յաբար, 26 «Էպտեմբերի 1953 թ.):

Մի րեւի՜ հաճատացաւ ժողովուրդ:

Սաղմոսերգուն, Բարայի մեկ տառապալից ժամանակաշրջանին, իր խոսքն ուղղելով ժողովրդի հաճատավոր զավակներուն, ռասած է. «Ուխտս դի՛ք և կատարեցէ՛ք»։ Իսրայելի ժողովուրդը պետք է ուխտեր, որ ինք հաճատարի՜մ էր աստվածային պատգամն և Աստուծո առաջնորդող ճանապարհին։ Ան հոգեռանդն ուխտելու էր ծառայել իր Հայրենիքին և հաճատարի՜մ մնալ իր ազգային սրբությունց։ Եվ Իսրայել չսասանեցա՞վ դարերու ուժգին փոթորիկներէն, որովհետեւ ճշմարիտ ուխտյալներու փաղանգ մը ունեցա՞վ, որ զինք առաջնորդէր իրով հավերժության։

Մեր նախնիք հորի տւ սուրի մեքեն անցան իրենց Հայրենիքն ու Եկեղեցին պահպանելու համար։ Մեր սուրբերն ու մարտիրոսները, քաջամարտիկ հերոսներն ու եռամեծ վարդապետները շարունակ գործեցին և փ զին փրկեց կյանքին պաշտպանեցին հայ կրօնքն ու Հայրենիքը, ազգային ավանդութիւններն ու ստեղծագործութիւնները։ Ի՜նչ բարբառոս հորդաներու ականատես եղեր է այս Սուրբ Կաթողիկէն, հայ հաճատքին պատվանդանը, հայութեան Սրբություն Սրբոցը՝

Ս. Էջմիածինը, Որպիսի՜ անզգամ ձեռքեր հանդգներ են խորտակել զայն, թայց պարտավոր են ու Կոթողիկէն հաղթապանծ կոթողացեր է Արարատյան աշխարհի կապույտ եթերին մեջ։ Ուխտյալներ, Հայաստանյայց եկեղեցւո և Ազգի զույգ խորաններուն սպասարկող, փրկեց խոր հաճատքով, աննկուն կամքով, նվիրումի և ծառայության տեսականով զոտիպնդված, պաշտպանեցին Վրենց Մայրենի Ս. Եկեղեցին և Մայր Հայրենիքը։ Այսօր արտասահմանի և Հայաստանի հայութիւնը իր գոյութիւնը անվիճելիորեն կպարտի հաճատավոր այն հոգիներուն, ըլլան անոնք աշխարհական կամ Եկեղեցական, որոնք ամեն նկրտութիւն ու շարժարանք հանձն առած, ուխտեցին ծառայել իրենց եկեղեցւոյն, Ազգիին և Հայրենիքին, սրտեռանդն պաշտպանել զանոնք և նույնիսկ մեռնել անոնց հովիւր՝ պահպանման և անսասանութեան համար։ Ու կատարեցին իրենց ուխտը...

Այդպիսի ուխտյալներէն, եռամեծ վարդապետներէն, հաճատավոր հոգիներէն հանդիսացա՞վ Նորին Ս. Օծություն Վեհափառ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հոս եկած ենք այսօր, այս հոծ քաղմութեան հետ, Ս. Իշման սեղանի առաջ, մեր երանաշնորհ հայրապետներու հոգիներուն հետ,

որոնք ներկա են այս վեհաժողովին ներս, տոնախմբելու անվանական կոչությունը հանուր ազգեն սիրված ու պաշտանքի արժանի ծերունազարդ Հայրապետին, Գեորգ Զ. Կաթողիկոսի կյանքը եղած է համակ ճշիւրում հայ ժողովուրդի, Հայաստանյայց Ս. Եկեղեցւոյ և Մայր Հայրենիքի պայծառութեան, հարատւութեան և անսասանութեան: Ան հանդիսացաւ միութեան ջատագովը և իրագործողը Հայաստանյայց Եկեղեցւոյ նվիրապետական բոլոր Աթոռներուն: Հայ ժողովուրդն ամենուրեք, արտասահմանի և Սովետական Միութեան մեջ, կաթողին սիրով և խոր պատկառանքով կապված է նորին Ս. Օժտութեան փորձ հեռատես և քաջարթուն հովիւականի, անխոնջ ու ժիր մշակի Հայոց Եկեղեցւոյ, և իր աշքերը սեւեռած են իրեն՝ Իրմով առաջնորդելու համար:

Այս սրբազան պահուն, կանգնած Իջման սեղանի առաջ, հոս, ուր իշեր է Ինքը՝ Աստվածորդին լուսեղեն կերպով տրամաբ, մեր հոգիներու խորեն սրտազխտ կմաղթենք, որ մեր նախահայրերուն Աստվածը երկար կյանք շնորհէ մեր աստվածաբայլ Հայրական տէրն որ ապրի, կյանք, որ մեզ ապրեցնէ, և դարձայլ կյանք, որ պահպան իրմով այս Ս. Աթոռը և Հայոց Եկեղեցին գոյատևեն: Եվ այս մաղթանքը, Վեհափա՛ն Տեր, վստահ եղեք, որ համայն հայութեան ազոթքն է ուղղված առ Աստված:

Ուստի հանուն մեր սուրբերուն, հերոսներուն, վարդապետներուն և մարտիրոսներուն, հանուն խառնվորիչ Հոր, որ աստվածային լույսը տարածեց Հայոց աշխարհին մեջ, հանուն սրբոց թարգմանյաց փառանքին, որոնք Սրբազան Մատյանին շունչը ժաւելեցին հայ հոգիներում մեջ, հանուն Շնորհալիների խումբին, որոնք մեր Ս. Եկեղեցին աստվածային նորով զարդարեցին, հանուն Տաթևացիներու և անոնց հետևող եռամեծ վար-

դապետներուն, որոնք մեր Եկեղեցին պաշտպանեցին մարդորս թշնամիներեն, և հանուն էջմիածնական և արմաշական այն ընտիր և մեծ մշակներուն, որոնք մեր օրերուն հայ ժողովուրդի և Հայաստանյայց Եկեղեցւոյ փառքը հանդիսացան, ու վերջապես հանուն այն հայրենասեր ու հավատավոր հոգիներուն, որոնք բոլոր ժամանակներու մեջ իրենց կյանքը զոհեցին մեր սուրբ կրօնին, մեր Հայրենիքին ու ժողովուրդին համար, կոխտենք, Վեհափա՛ն Տեր, հետևիլ Ձեր շաղկին և զՁեզ ունենալ որպէս առաջնորդ մեր կյանքի: Այո՛, կոխտենք և պիտի կատարենք մեր ուխտը: Ու կհավատանք, որ այս պահուն տ՛լ թե Ձեր անվանական կոչութեան տունը պիտի հրճվեցնէ Ձեր հոգին, այլ այս սրբազան ուխտը:

Բայց ընթացին պիտի ուզեմք, որ այդ ուխտը մասնավորաբար ընենին Ս. էջմիածնի Հոգևոր Զեմարանի սաները և այն բոլոր սաները մեր բոլոր դպրեմանքներուն և կրթական հաստատութիւններուն, որոնք կոչված են ժառանգելու իրենց նախնիքներուն սրբազան հրիտակը. և ոչ սոսկ նկրտեին ժառանգելու դա՛ն, այլ փոխանցելու իրենց հաջորդներուն. այս է ճշմարիտ միջոցը հավերժացնելու մեր ազգային ու կրօնական ինքնուրույնութիւնը: Այս ուխտով ու անոր կատարումով պիտի խայտան հոգիները բոլոր անոնց, որոնք մոտ տասնյոթը դարեր պարբեր ու գործեր են այս նվիրական հաստատութեան՝ հավերժական Ս. էջմիածնի մեջ. և այս ուխտով, որպէս Հայր և Առաջնորդ Ազգին, պիտի հրճվի Ձեր հոգին անասելի հրճվանքով:

Թող հավերժաբնակ մեր սուրբերուն Աստվածը Ձեր անվանական կոչութեան տունին առթիւ Ձերդ Ս. Ոճութեան, Ազգիս Սրբազնազույն Հայրապետիդ շնորհէ հոգեկան այդ երանական հրճվանքը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Դ Ե Ր ա պ ա տ ի վ Ե ս ի Ր Լ ի
Դ Ե Ր Ե Ն ի կ Ս Ե Ր ա գ ա ն .

Ձեր զգածված Բառոգը, որի բնաբանն է «Ուխտս յի՛՛հ և կատարեցէ՛հ», հոգուս ուրախություն բերավ և մխիթարեց: Սաղմոսերգոյի պահանջած ուխտը Խառայելի ժողովրդից, որ է ծառայել իկեղեցուն, Հայրենիքին և հայրենի ժողովրդին, եղել է և Մեր կյանքի նշանաբանը և է այսօր. նա եղել է նաև մեր փառապանծ նախնյաց նշանաբանը, որի համար նոխ պայտարել են, մարմնով մարտիրոսացել, րայց հոգով հաղթանակել ու փառաց այսակի ևն արժանացել, և քաղաքաբան կան լավանդ բողբի ևն տնորդներին: Ձեր Բառոգը հոգեպես մխիթարում է Մեզ, որովհետև Ձեր վկայությունը լսեցինք բե՛ այսօր էլ եղա ժառանգներ՝ Սփյուռքի հայությունը հավատարիմ է Սաղմոսերգոյի պահանջած ուխտին և պատրաստ է ծառայելու Հայ եկեղեցուն, հայ ժողովրդին ու Հայրենիքին. սիրում է Հայ եկեղեցին գլխավորող Ս. Էջմիածինը՝ իր դարավոր պատմական Սրբություն Սրբոցը, սիրում է բնախարհի հայ ժողովրդին՝ իր հարսգատ արեւակից եղբայրներին և իր վերածնված Շոթափրիք Հայրենիքը: Ձեր այս Բառոգը աներկբայեի հավաստիացում է բե՛ Սփյուռքի հայություն-

ըր՝ հավատարիմ իր նախնյաց յողած ուխտին և հավետ կապված Ս. Էջմիածինն ու Նորափրիք Հայրենիքին, որոնք եղել են և են Ազգի անկախ գոյության ճիմն ու պաշտպանը. Երբեք ի վիճակի չէ խախտելու իր ուխտը, որքան էլ զորեղ լինի դավադիր որոգայթը:

Ինչպե՛հ, տաւե՛հ Մեր հայրական և բնախարհի հայության եղբայրական ողջույնը, պատմեղե՛հ Ձեր տեսածը Հայաստանում՝ հայրենի Լեւրի խաղաղ ու հանդիստ կյանքը, եղա բարգավաճ վիճակը, 30 կարն տարիների ընթացքում՝ նորա անհավատալի ու աննկարագրելի վերելքը, նորա անմահ հույսն ու փափագը՝ օր առաջ տեսնելու Սփյուռքի իր հարազատներին և զրկարաց ընդունելու իրենց հարկի տակ միասին ապրելու, միասին խորհելու, միասին զործելու և միասին ստեղծագործելու իրենց կույտութեան և տնտեսական կյանքը:

Իսկ Մենք կմնանք մշտապես աղոթող և խարհի խաղաղության համար, որովհետև պատերազմը չարիք է և խաղաղությունը բարիք համայն մարդկության և առաջնապես հայ ժողովրդի համար, և մաղթող, որ մարդասեր Փրկչի Աջը հովանի և սպառապան լինի վտարանդի և անպաշտպան Մեր սիրելի ալ հոռին, ամեն:





Ք Ա Ր Ո Ջ

ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱԹՅԱՆ

ՍԻՐՈ ՊԱՏՎԻՐԱՆԸ ՀԻՍՈՒՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Այս է պատուէր իմ, զի սիրեալի՜մ զմիմեանս, որպէս
և ես սիրեցի զձեզ»:

ՀՈՎՀ., ԺԵ 12:

Քրիստոնեական կրօնի առաջին և մեծագոյն պատվիրանը սերն է, սեր առ ընկերն, սեր առ մարդն և սեր առ Աստված: Քրիստոնեական կրօնի ողջ բարոյականը հիմնվել է այդ սիրո վրա և հենց դրա համար էլ մեր Փրկիչը իր նոր կյանքի և նոր աշխարհի օրենք հռչակեց ու ավանդ թողեց իր աշակերտներին սիրո մեծ կտակը: «Այս է պատուէր իմ, զի սիրեալի՜ք զմիմեանս, որպէս և ես սիրեցի զձեզ»: Սիրո այդ կտակը կամ քարոզը ցույց է տալիս քրիստոնեական կրօնի գերազանցությունը: Քրիստոս ապրեց այդ սիրո կյանքով և այն ավանդ թողեց իր ընկերացուն: Հիսուսի պատվիրած սերը քրիստոնյա հավատացյալի դրոշմն է: Մարդկության Փրկիչը իր պայքարի և սիրո դրոշմը բարձրացրեց աշխարհի անիրավությանց, չարիքի, ագիտության, մեղքի և մահվան դեմ: Եւ քրիստոնեությունը հաղթանակեց ու հաղթանակում է սիրո այդ մեծ ու հավիտենական քարոզով, որովհետեւ Հիսուսի ավանդած սերը, դրոշմը մարդկային ձեռագործ չէր, այլ աստվածատուր մի պարզ և անկեղծ աւաքված, և այդ մարմնացած սիրո դրոշմը ինքը Փրկիչն էր, Մարդ-Աստվածը, համակ սերը, մարդկության մարմնացած ու խտացած խիղճը, անարդարության դեմ՝ պայքարի,

արդարության ու ճշմարտության հաղթանակի դրոշմը:

Աստված այնքան սիրեց աշխարհն ու մարդկությունը, որ նրանց փրկության համար տվեց իր Միածնին:

Այդ աստվածառաք սերը փրկության, աղափության կոչ էր բերում ժամանակակից աշխարհին ու մարդկության: զա աղափության կոչ էր բոլոր ճնշվածների, հալածվածների համար: «Եմկայք առ իս ամենայն վատակեալք և բռնաւորք և ես հանգուցից զձեզ»:

Քրիստոսի բերած սերը, նրա թողած սիրո մեծ կտակը կերպարանափոխեց աշխարհն ու մարդկային բոլոր հարաբերությունները: Մարդասիրության ու հայրենասիրության ծով սերը ալեկոծում էր Փրկիչ Հիսուսի սիրտը, նա իր աստվածային շրթների վրա սիրո, քաջալերության, մխիթարության խոսք ուներ բոլորի համար: Նա սիրում ու տառապում էր մարդկանց հոգու համար, սիրում էր մարդկանց և այդ սիրով ուղում էր նրանց բարձրացնել դեպի ճշմարտության, արդարության, առաքինության բարձունքը, դեպի կատարելություն, դեպի Աստված: Եվ հենց դրա համար էլ նոր պատգամ էր տալիս իր աշակերտներին, որոնք իր Ավետարանի լույսն ու ճշմարտությունը պիտի հասցնեին

աշխարհի բոլոր կողմերը՝ սիրելի իրար ու մարդկանց այնպես, ինչպես ինքն էր սիրում:

«Մեծ քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ դանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց խորոց»: Եվ արդարեւ, մեր սիրո Փրկիչը, ինչպես նրան կոչում է մեր մեծ Շնորհալին («Սէր անուն Յիսուս»), զոհեց իր անձը, թափեց իր անգին արյունը հավատացյալների փրկութեան համար և նույնը պահանջեց անել իր աշակերտներից և հետևորդներից: Սիրեցիք զմիմեանս...»: Սիրելի նշանակում է անձը սիրահոգար զոհողության ենթարկել, տալ անձը՝ ապրեցնելու համար ուրիշներին:

Ուր սեր կա, սիրելի եղբայրներ՝ և քույրներ, այնտեղ կ'ոտրի խաղաղութիւն, արդարութիւն, ճշմարտութիւն: Սերը մարդկանց կպահի խաղաղության ու անդորրության մեջ, սիրով զանգված հոգին անպարտելի կլինի մարտերում և չի նահանջի զժգարութիւններէ առաջ: Սերը մարդկանց կբարձրացնի, կաստվածացնի, որովհետեւ «Սէր... ոչ խորհի զլար. ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն» (Ա. կորնթ., ԺԳ Ծ), «Սէր ոչ ամբարհասաճէ, ոչ հպարտանայ, ոչ յանգգնի, ոչ զրգուի»: Պողոս առաքյալը կորնթացվոց առաջին թղթի ԺԳ գլխում գերազանց գրելով ու մտքով վերլուծել է քրիստոնեական սիրո գերազանցութիւնը:

Իր սրտի մեծ սիրով Քրիստոս սիրում էր մարդկանց և իր աշակերտներին, բայց և սրտի խորունկ ցավով, ալեկոծ հոգու վրշտով ցավում էր մարդկային անարդարության, կեղծիքի վրա: Նրա սիրո քարոզը խորթ էր հնչում ոմանց ականջներին, նրանք Փրկչի սիրո քարոզին սլատասխանում էին ատելության խոսքերով: Աստվածորդին ինքն էլ դարձավ հալածական ու աստանդական և սրտի ցավով արտահայտեց սա խոսքերը. «Ալուեսուց որչք գոն, և թուչնսց ւերկնից բոյնք, այլ Որդույ մարդայ ոչ գոյ ուր դիցէ վզուիս իւր» (Մատթ., Ը 20): Եվ ահա դարերի խորքից հնչում է Քրիստոսի քաջալերական խոսքը բոլոր նրանց համար, ովքեր սեր քարոզեցին, բայց ատելութիւն գտան. «եկայք առ իս, ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ» (Մատթ., ԺԱ 28): Ան-

սահման սեր ավանդող Հիսուսը բռնա ցասումով էր լցվում հաճախ դեպի սիրո, խաղաղության թշնամիները, երբ նրանք, մանավանդ Երուսաղեմում, շուղեցին յսել նրա սիրո մեծ քարոզը, ու վերջին անգամ վրդովվեց նաև նրա հայրենասիրի մեծ սիրտը և արտասովաշաղախ խոսքերն արտասանեց. «Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կտտորէիր զմարգարէս և քարկոծ առնէիր պատաքեայսն առ քեզ, քանի՜ ցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո, որպէս հաւ դձագս ընդ թեովք. և ոչ կամեցարուքս»:

Այդ խոսքերի մեջ Փրկիչը իր մեծ սրտի անկեղծ ձայնն էր դրել իր կյանքի ամենափութորկալի ու հալածանքի մոտեցող օրերին. նա խարաղանել է անարդարության ու անիրավության, բռնության ու շարիքի տխուր ասպետներին, որոնք, կտրացած իրենց նեղ կրքերից, չէին ցանկանում յսել նրա փրկարար ձայնը, և սիրո քարոզչին լռեցնելու համար Դողգոթա բարձրացնելու զազիր դավադրութիւնն էին որոճում:

Փրկիչ Հիսուսի արտասանած վայերն ու երուսաղեմին ուղղած խոսքերը՝ հայրենասիրական ու մարդասիրական ջերմ սիրով էին շաղախված դեպի մարդկութիւնն ու աշխարհը: Նա ցանկանում էր, որ մարդիկ, աշխարհի բոլոր ժողովուրդներն իրար սիրեն այնպես, ինչպես ինքն էր ցանկանում:

Մարդկային հոգու ապերախտութեան դիմաց ծով վիշտն էր համակել Աստծու Որդուն և Ժողովրդի փրկութեան համար զոհվելու պարտքի վեհ գիտակցութիւնն էր այրում նրա ծով սիրով հեղեղված սիրտը: Բայց մարդկության ու աշխարհի փրկութեան գործը պիտի պլուխ բերվեր հետևողական սիրո, եղբայրության քարոզով: Ի՛նչ հրաշալի է երգում Շնորհալին. «Սէր անուն Յիսուս, սիրով բով ճմլմա՝ սիրո իմ քարեղէն»:

Քրիստոնեական մարդասիրական սերը դարերի քարեղեն ճանապարհները ծաղկեցրեց Քրիստոսի սիրով: Հալվեց ու խորտակվեց դարերի ատելութեան սառույցը Քրիստոսի սիրո կրակի առաջ: Փրկիչը իր այդ սիրո կտակով հզորների դեմ հաղթանակով ելավ և աշխարհ եղավ Քրիստոսի հետ:

«Սիրեցիք զմիմեանս»:— Այսօր էլ աշխարհ կարիքն ունի սիրո այդ քարոզին՝ խա-

ղազության ու անդորրության մեջ ապրելու համար, թեթեւ ոք սիրէ զիս, զրանն իմ պահեսցէ՛ք (Հովհ., ԺԴ 22)։

Մարդկութիւնը, հատկապէս քրիստոնեական աշխարհը հացի, ջրի, օդի շափ ալսօր կարիքն ունի Քրիստոսի աստվածային սիրոյ և խոսքերին։ Սերը հրաշքներ է գործել նկեղեցու անցյալ կյանքում և կգործի ալսօր։ Ամեն մի գործ, լինի այն պայքար, թե խաղաղ աշխատանք, եթե սերը րացականում է, ապա պայքարը կպարտվի, աշխատանքը կմնա անկատար։

Մեր մեծ Վարդապետի սերը, սիրելի եղբայրներ՝ և քույրներ, աշխատեցն՝ք դուք էլ զգալ և ապրել, և այդ սիրով առաջնորդվեցն՝ք ձեր ամեն մի քայլում։ Սիրով աշխատեցն՝ք և սիրով կատարեցն՝ք ձեր վրա դրված բոլոր պարտականութիւնները ձեր Մայր նկեղեցու, ձեր ժողովրդի, ձեր Հայրենիքի հանդեպ։ Սիրեցն՝ք ձեր ժողովրդին, Հայրենիքին, մարդկության այնպես, ինչպես Քրիս-

տոս սիրեց. «Աէր ոչ խնդրէ զիւրն»։ Մանավանդ ձեր զավակներին դաստիարակեցն՝ք նկեղեցու և Հայրենիքի սիրով։

Եթե յուրաքանչյուր ազգ, ժողովուրդ, ընտանիք Հիսուսի պատվիրած սիրոյ վրա հիմնելի, Հիսուսի սիրով առաջնորդվի, Հիսուսի սիրով կապվի, ապա խաղաղութիւնն ու երջանկութիւնը հաջողության հետ անպակաս կլինեն մարդկանց կյանքում։

Եթե ամբողջ աշխարհը Հիսուսի սերը իր ուղեցույց դարձնի, այլեւ չին լինի մարդաջինջ ու աշխարհավեր պատերազմները և խաղաղութիւնը կտիրի ամենուր։

Այդ սիրով առաջնորդվենք, սիրելի հավատացյալ եղբայրներ՝ և քույրներ, որովհետեւ այդ սիրով ապրել է անցյալից մինչև ալսօր մեր ժողովուրդը։

Հիսուս Քրիստոսի աստվածական սերը լինի ձեր կյանքի առաջնորդ, և «Աէր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ընդ ամենեւեանդ, ամէն»։





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Հունիսի 21-ին, հավատացյալների խոստովանության և ներկայությամբ, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագին էր քարեկրոն Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանը։ Սուրբ պատարագի աշխատմին հետո Ս. Էջմիածնի սեղանի առջև տեղի ունեցավ հոգևորականության արարողություն՝ Մեծի Տանն Կիլիկիո հանգուցյալ լուսահոգի Տ. Տ. Քարեկրոն Ա. Կաթողիկոսի մահվան տարելիցի կապակցությամբ։ Սրտառուչ և հուզմունքալից քարոզ խոսեց Մայր Աթոռի միաբաններից գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Հակիրճ և ազդեցիկ խոսքով սրբազանը վեր հանեց և քննարկեց հանգուցյալ նրանաշնորհ Հայրապետի քաղաքական կյանքը, որը մինչև վերջ նվիրված էր հայ ժողովրդին և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ծաղկմանն ու բարօրությանը։

Իր խոսքի վերջում սրբազանն ասաց. «Աիրելիք, աղոթենք առ ամենաարթնշարժ Աստված, որ նա արդարոց օթնանին արժանացնի բոլորի կողմից սիրված նրանաշնորհ Տ. Քարեկրոն Ա. Կաթողիկոսի հոգին։ Արդեն մեկ տարի է, որ թափուր է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը, աղոթենք, որ Աստված շնորհի արժանքնտիր մի նոր քահանայի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Քահանայի վրա»։



Սեպտեմբերի 20-ին, Կիրակի օրը, Ս. Էջմիածնում, ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց Մայր Տաճարի ավագ սեղանի վրա։ Որվա պատարագին էր Մայր Աթոռ ժամանած գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը։ Սրբազանը պատարագի ընթացքում սրտառուչ խոսք ասաց, ընտրելով ընթացան՝ Դարևիսաստիվամբ վերին քո դօրացդ, միշտ անշարժ պահեա՝ դԱթոռ Հայկազնեայց»։

Նա իր մեծ ուրախությունը հայտնեց այն առթիվ, որ երկրորդ անգամ իրեն քախտ է վիճակվում ուր ղենել հայրենի սրբազան հողի վրա, համարել այն և աղոթել Ս. Էջմիածնի նվիրական խնկարույր կամարների տակ, և Սփյուռքի հայության կարոտակեզ սղջույնի խոսքերը բերել Մայր Հայրենիքի հայության և Հայրենիքից զուրս գտնվող հայ ժողովրդի լավագույն իղձերի ու ցանկությունների թարգմանը հանդիսանալ Մայր երկրում։

«Հայոց Աթոռ» Ս. Էջմիածինը, — ասաց սրբազանը, — նախոր հայության աղգային և կրոնական կյանքի կեդրոնն է։ Հայերը, ուր որ ալ գտնվին, միշտ հավատարիմ մնալու են Մայր Աթոռին և բանիվ ու գործով իրենց ծառայությունը մատուցանելու են անոր։ Էջմիածինը մեր գոյություն արմատն է, փրկության խաբիսը ու միշտ և հավերժ ամեն հավատավոր հայու համար պիտի մնա իր արդարիտը։



Հոկտեմբերի 4-ին, Կիրակի օրը, Նրեանի Ս. Սարգիս Մայր Եկեղեցում մեծ հանդիսավորությամբ պատարագեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռից Մայր Աթոռ Կիած գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը։ Ժողովրդի հոծ բազմությունը լցվել էր եկեղեցու ներսը՝ լսելու եպիսկոպոսական պատարագը։ Այնքան շատ էին սրբազանի աչք համարել ցանկացողները, որ խնկարկություն ժամանակ նա հնարավորություն չունեի առաջ շարժվելու։ Երբեք ուղում էին տեսնել և իրենց հարզանքը մատուցել Սփյուռքից եկած սրբազան հյուրին։

«Հայր մերից առաջ սրբազան հայրը քաղով խոսեց, ընտրելով քարոզի բնաբան՝ «Ես եմ ճանապարհ, ճշմարտություն և կենսաքովեր հանելով Աստվածորդու սուրբ, ճշմարտանք ու առաքինի մեծ ու սրանելի կյանքը, նա կոչ արեց հավատացյալներին՝ ընթանալ ազգ ճանապարհով և հավատարիմ մնալ

Փրկյի մարդասիրական, խաղաղասիրական վեհ գաղափարներին, «Կյանքը կարժևորի և իսկական նշանակություն կունենա այն ատեն,— ասաց նա,— երբ մարդեր ու ժողովուրդներ ընդունին զՔրիստոս որպես իրենց կյանքը, որ դիրենք կառաջնորդե ճշմարիտ և ուղիղ ճանապարհին, բուն և իրավ ճշմարտություն»:

Հավատացյալները մեծ հետաքրքրությամբ լսեցին սրբազան հոր ազդեցիկ քարոզը:



Սույն թվականի հոկտեմբերի 8-ին թեմական գործերով Մայր Աթոռից Թբիլիսի մեկնեց Վրաստանի թմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, գերաշնորհ Տ. Գերոնիկ եպիսկոպոս Փոլատյանի հետ միասին: Վերջինս Թբիլիսիում մի քանի օր մնալով շրջեց հայկազնի եկեղեցիները, դիտեց քաղաքի հնությունները և տեսարժան այլ վայրեր: Ամենուրեք Վրաստանի թեմի հայ հավատացյալները մեծ ուրախությամբ ու գրկադաց էին բնորոշում արտասահմանից ժամանած իրենց հայազատ սրբազան հյուրին:



Հոկտեմբերի 11-ին, կիրակի օրը, գերաշնորհ Տ. Գերոնիկ եպիսկոպոսը պատարագեց Թբիլիսիի Ս. Գեորգ եկեղեցում: Ասիղ գցելու տեղ ընտրեց Թբիլիսիի հայ հավատացյալները այդ օրը ուշույն էին տեսնել Սփյուռքից եկած սրբազան հյուրին, լսել նրան և հաղորդակից լինել նրա հետ:

Սրբազանը «Շայր մերձից առաջ քարոզեց ժողովրդին: Քարոզի բնագրան էր՝ «Այլ ինձ բաւ լիցի պարծիլ, բայց միայն ի խաչն Տեսուն մերով Յիսուսի Քրիստոսի»:

Սրբազանը մանրամասն քաջատրեց խաչի ունեցած խորհրդանշական նշանակությունն ու իմաստը քրիստոնեության համար: Նա իր բարոզը վերջացրեց հետևյալ խոսքերով. «Շայր, որպես քրիստոնյա և բարեպաշտ ժողովուրդ, իր ազգային ինքնությունությունը պահած է գործերու մշտնջերու և արշալույսներու մեջն: Քրիստոսի կենարար խաչը եղած է հայ ժողովուրդի փրկություն նշանը, հույսի ապավենը, անոր հավատքին կեդրոնը»:

Նույն օրը սրբազանը Թբիլիսիի էջմիածնից Ս. Գեորգ եկեղեցում երկնյան ժամերգությունից հետո քարոզեց ժողովրդին, ընտրելով իր քարոզին հետևյալ բնագրան.

«Ճանե՛լ ի մեզ, Տէ՛ր ամենակալ, զհասարակույս, զաէր և զամենայն գործս առաքինութեան»:

Սրբազան հայրը քաջատրեց՝ թե մարդկային կյանքի մեջ, մասնավորապես հայի համար ինչ իմաստ ունեն հավատը, հույսը, սերն ու առաքինի գործերը. նա կոչ արեց ժողովրդին, որ իրենց նախնիքների նման միշտ լցվեն կենդանի հավատով, լիսորտակվող հույսով, սրտեռանդ սիրով և առաքինի բարի գործերով:



Հոկտեմբերի 18-ին, կիրակի օրը, գերաշնորհ Տ. Գերոնիկ սրբազանը պատարագեց Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում: Եպիսկոպոսական սուրբ պատարագ լսելու էին իկել Երևան քաղաքի քույր ծայրերից և շրջակայաններից: Պատարագի սրբազանը սուրբ պատարագի ընթացքում քարոզեց հետևյալ բնագրանով. «Է՛ից և զմեզ Հոգւովդ քով Սրբով: Նա հավատացյալներին քաջատրեց «Հոգիս բառի նշանակությունը, օրինակներով ցույց տվեց թե՛ ինչպես առաքյալները, սուրբերը և ուրիշ եռամեծ վարդապետներ Սուրբ Հոգով լցված ինչպիսի մեծամեծ ծառայություններ մատուցեցին Քրիստոնեական եկեղեցուն, հավատի դարգացմանն ու տարածմանը»:

«Ճշմարիտ քրիստոնյան պետք է լցվի Ս. Հոգւով, որպեսզի լավագույնս ծառայի փրկեղեցիին և ազգին»,— ասաց սրբազանն իր քարոզի վերջում:



Հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Ռումինա-սովետական բարեկամության ընկերության պատգամավորությունը՝ բաղկացած 13 հոգուց: Վանքի գավթում հյուրերին դիմավորեցին Մայր Աթոռի միաբանության անդամները: Հյուրերը եղան Տաճարում և Տաճարին կից եկեղեցական-հնագիտական թանգարանում: Ամենուրեք նրանց ուղեկցում և մանրամասն քաջատրություններ և տեղեկություններ էր տալիս Մայր Տաճարի շտաբարարապետ դերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը: Վերջում հյուրերը եղան Վեհարանում, դիտեցին հայկական հին ձեռագրերի գեղեցիկ նմուշներ և արվեստի տարիք գործեր: Մեկնելուց առաջ հյուրերը երախտագիտորեն փրկեց շնորհակալությունները հայտնեցին Մայր Աթոռի միաբանությանը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից իրենց ստացած լավագույն տպավորությունների համար:



Հոկտեմբերի 25-ին մեծ հանդիսավորությամբ տոնվեց «Գիտ խաչի» եկեղեցական տոնը Ս. Էջմիածնում: Վանքի զավիթն էին լցվել քաղմաթիվ ուխտավորներ, որոնք եկել էին Թբիլիսիից, Բաքվից, Երևանից:

Հանդիսավոր սուրբ պատարագին ներկա էր Վհհափառ Հայրապետը: Օրվա պատարագին էր բարձրապատիվ Ս. Գևորգ վարդապետ Վաթյանը: Սուրբ պատարագի ընթացքում քառաձայն երգում էր Մայր Աթոռի և Թբիլիսիից ժամանած Ս. Գևորգ եկեղեցու միացյալ երգչախումբը: Այդ օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուխտի էին եկել Ռբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցու հարգարժան երեք սարկավաղուհի կույսեր, որոնք մասնակցում էին սուրբ պատարագի արարողություններին: Սուրբ պատարագի ավարտից հետո, հավատացյալ այցելու ուխտավորները և ուրիշ շատեր այցելեցին Մայր Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանկարանը, որ նրանց միաբանությունն անդամների կողմից տրվեցին ամենամանրամասն քաջատրություններ:



«Գիտ խաչի» տոնի օրը, գերաշնորհ Ս. Գեորգի եպիսկոպոսը պատարագից Երևանի Ս. Զորավար եկեղեցում: Արդեն Երևանի երրորդ եկեղեցում էր, որ սրբազանը պատարագ էր մատուցում և միշտ էլ, այս անգամ ևս առավել, հավատացյալների խառներամ

քաղմությունը ներս էր լցվել տաճար՝ լսելու սուրբ պատարագը, մանավանդ, որ «Գիտ խաչի» տոնի օրն էր և Երևանի շրջականներից շատ ուխտավորներ և հավատացյալներ էին եկել:

Սրբազանը «Հայր մեր»ից առաջ հանդիսավորապես քարոզեց: Քարոզի բնութանն էր՝ «Եւ ամենայն, որ կենդանի է և հաւատայ յիս՝ մի՛ մեռցի յաւիտեան»: Նա քաջատրեց այն մասին, որ Քրիստոսին ճշմարտապես հավատացող համիտյան չպիտի մեռնի: Հավատացյալները շերմեռանդորեն և ուշադրությամբ լսեցին սրբազանի կրոնաշունչ գեղեցիկ քարոզը:



Վհհափառ Հայրապետի քարհան կարգադրությամբ, Մայր Աթոռի միաբան գերաշնորհ Ս. Սահակ եպիսկոպոս Տեր Հովհաննիսյանը «Գիտ խաչի» տոնի կապակցությամբ սուրբ պատարագ մատուցեց Երևանի Ս. Սարգիս մայր եկեղեցում: Տաճարը լի էր խուտն քաղմությամբ: Ուխտավորներ էին եկել ամեն կողմերից: «Հայր մեր»ից առաջ սրբազանը քարոզ խոսեց հետևյալ բնաբանով. «Եթէ ոք կամի զկնի իմ դալ, ուրաացի դանձն և առցի զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ» (Մատթ. ԺԶ 24):

Հավատացյալները մեծ հետաքրքրությամբ լսեցին սրբազան հոր հակիրճ և ըզնվաբան կալից քարոզը:

Սրբազանը նույն օրը վերադարձավ Ս. Էջմիածին:





ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԵՍ Ս. ԷԶՄԻՆԺՆՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՐԲՈՑ ԹԵՐԳՐԱՆԶՍԵ ՍՐԲԱԶՆԵ ՀԻՇՍՏԱԿԻՆ

Հոկտեմբերի 22-ի երեկոյան ժամը 8-ին, Ս. էջմիածնի Հոգեւոր Ժեմարանի սրահում տեղի ունեցավ Ժեմարանի վերատեսչության կարգադրությամբ ուսանողության կողմից կազմակերպված գրական-գեղարվեստական հանդեսը, առ ի պանծացումն «Մերոց քարզմանը վարդապետացն մեռոց՝ Մեսրոպ-բայ, Եղիշէի, Մովսիսի Քերրոզին, Գաւրի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նաւեկացուն և Ներսիսի Կլայեցուն» և «Գիւտի նշանագրաց և քարգմանութեան Սուրբ Գրոց», որոնց հիշատակին ազգային և եկեղեցական հատուկ տոն է սահմանել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին:

Նախագահում էր Վեհափառ Հայրապետը, աջակողմում ունենալով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության Անթիքիայի Դպրեմանքի վերատեսուչ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանին:

Կոստանյան սրբաղանի արտասանած Տերունական աղոթքից և կոմպոզիտոր Հրանտ Գեորգյանի ղեկավարությամբ երգչախմբի նրգած Հայկական ՍՍԻ-ի Պետական հիմնից հետո, որոնք ունկնդրվեցին հոտնկայս, Հոգեւոր Ժեմարանի վերատեսուչ տիար Մինասյանը, հակիրճ՝ բայց կուտ բառերով հարգանք ընծայեց սուրբ Թարգմանիչների հայ մշակույթի համար մարտնչած սերնդի հիշատակին և նրանց անմահ գործի պաշտ-

պան և շարունակող Վեհափառ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի բարձր նախագահության ներքո բացված հայտարարեց հանդեսը: Լեզա շնորհալի սարկավազ Իգնատիոս Մարտիրոսի կողմից գործադրվեց՝ շարականներով, ազգային երգերով, արտասանություններով, ինքնագիր ուղերձներով և սուրբ Թարգմանիչներից ոմանց մասին խնամյալ ուսումնասիրություններով ըստ բավականի ճոխ հայտագիրը:

Խորհրդավոր լուծւթյան մեջ երգչախմբի կողմից երգված «Որք զարդարեցին» շարականից հետո խոսքը տրվեց Ժեմարանի դասախոս Արթուր Հատիտյանին, որի բանախոսութեան թեման էր՝ «Ընդհանուր ակնարկ քարգմանիչների գործունեւորյան մասին»: Բանիքուն ճառախոսը, պարզ ու հասկանալի ձևով նկարագրելուց հետո 4-րդ դարի վերջերում (387 թ.) Հռոմի՝ Բյուզանդական և Տիւրքոնի՝ Սասանյան կայսրությունների միջև բաժանված Հայաստանի տխուր վիճակը, և այդ տխուր կացութեան մեջ հայ ժողովրդի և՛ կրոնական, և՛ պետական ղեկավարների մտահոգութունը՝ երկրի միասնութիւնն ու ազգային միասնականութիւնը ապահովելու և պահպանելու արմատական միջոցն եղող հայ սեփական գիր և ազգային ինքնուրույն գրականութիւն ստեղծելու անհրաժեշտութեան մասին, հիացախառն բառերով ուրվա-



Գևրաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը՝ Հոգևոր Ճեմարանի մի խումբ սարկավազների հետ:

գծեց լուսավոր պատկերը Սահակ Պարթև Հայրապետի գործակից Մեսրոպ Մաշտոցի, որ ռու ի քուն երազ է ոչ յարթնութեան տեսիլս հոգեվիճակում ստեղծագործեց հայոց մեծասքանչ լեզվի գրերը և հիմքը դրեց ազգային ինքնուրույն գրականության:

Հռետորը խանդավառութեամբ ու հիացմունքով ունկնդիրներին ծանոթացրեց բանաստեղծ-պատմիչ, ոսկեծղի-սկեզրիչ Նղիշին, որ զրի է առած որջան կրոնական, նույնքան և ավելի ազգային-քաղաքական բնույթ ունեցող Վարդանանց պատերազմի գրվազները: Մովսես Խորենացուն՝ հայ պատմագրության հորը, որ Սահակ Բագրատու-

սնրանք՝ թարգմանիչները, — եզրափակեց բանախոսը: — Երգ ու երազ են տվել հայ ժողովրդին, Աստուծո շունչը դրել նրա հոգու մեջ, ի պահանջել հարկին իջել են կռվի դաշտը՝ պաշտպանելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ինքնուրույնությունը, հայրենի հողի անձեռնմխելիությունը և հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը: Մերունդներ են դաստիարակվել, ապրել, աղոթել նրանց շնչով, ընթացել նրանց գծած լուսավոր ճանապարհով ու հասել այսօրվա պայծառաշող իրականության: Նրանք՝ թարգմանիչները, փառքով կատարեցին իրենց պարտքը Հայաստանյայց Առաքելական Եկե-



Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փայտյանը՝ Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ տիար Մինաս Մինասյանի, սարկավազների և ուսանողների հետ:

նի ասպետի խնդրանքովը գրի է առել հայ ժողովրդի պատմությունը՝ սկզբից մինչև Արշակունիների թագավորության անկումը: Դավիթ Անհաղթ փրկիստփային, հեղինակը ժամանակակից աղանդավորների դեմ գրած խաչի ներքոդի, Խորենացու քեռորդին, որ դերազանցում էր իր ժամանակի բոլոր իմաստասերներին: հայ միստիկ գրականության մեծագույն վարպետ Գրիգոր Նարեկացուն, որի «Նարեկյան ունի ուժի դմայելի քաղցրություն և զեղեցկություն. ներսես Ենորհալուն, վանկական և հանգավոր տաղաշափության հաստատողն ու ծաղկեցնողը, հեղինակ շարականների ու նվազների, որոնք ցայսօր երգվում են հայ եկեղեցիներում:

դեցու, հայ ժողովրդի և Հայրենիքի հանդեպ և զնացին այս աշխարհից, բայց մնաց նրանց թողած կուլտուրան՝ մշակույթը: Հայ ժողովուրդը աշքի լուսիս պես պահել է ու կպահի այդ մշակույթը: Փառք թարգմանչաց հիշատակին»:

Դերենիկ, խնամյալ և ունկնդիրների կողմից զնահատված ինքնագիր ուսումնասիրություններ կարդացին Փայլակ սարկավազ «Խնթափյանը՝ ժողիշեի սվարդանանց պատմություն» գաղափարական և զեղարվեստական արժանիքները թեմայով, Ռուբեն սարկավազ Մարտիրոսյանը՝ «Նարեկացու Մատեան ողբերգության» պոեմի իդեական բովանդակությունը և վերլուծություն թեմայով

և Տիգրան սարկավագ Մարտիկյանը՝ «Մի քանի խոսք Սովսեւ Խորենացու մասին» թեմայով:

Թեթևագիր քանաստեղծություններ կարդացին Ճեմարանի սաներ՝ Գեորգ Շևիրկյանը («Անմահ Մաշտոցին»), Վաչագան Հովանյանը («Մենքու Մաշտոցին»), Հ. Մարգարյանը («Մենքու Մաշտոցին») և սարկավագ-քանաստեղծ Փայլակ Միածանը («Հայ դպրության մշակներին»): Հաջող արտասանություններով հանդեսին մասնակցեցին Ա. դասարանի ուսանողներ Հ. Գանիկյանը («Մաշտոցի դերեղմանի մոտ», Ս. Տարոնցու) և Հ. Կարողյանյանը («Հայոց լեզուն», Ջարյանի):

Գեղարվեստական-երաժշտական բաժինը, բացի «Տէր, կեցո՛ւ», «Մայր Արաքսի», «Բա՛մ, փորոտան» աղագային հայտնի երգերից, որոնք Լրդվեցին սարկավագներից կազմված Երզնախմբի կողմից և «Մի ծնունդի երգից, որ Լրդվեց Ճեմարանի սան Ա. Բալաքանյանի կողմից՝ նվագակցությամբ Տիգրան սարկավագի, հանդեսի զեղարվեստական-երաժշտական բաժինը հորատեցվել էր անմահ կոմպոզիտոր Կոմիտաս վարդապետի «Քի-յն՝ր, ցուլն՝ր», «Էս գիշեր, լուսնակ գիշեր» և «Ո՛վ մեծագանջ դու լեզու» երգերով, որոնք ներդաշնակորեն Լրդվեցին Մայր Տաճարի


Լրդիլ խմբի մենակատարների կողմից, այդ կերպով հարգելով նաև հիշատակը մեծանուն կյանիկ Երաժշտագետ Կոմիտասի, որի մահվան (1935 թ.) 18-րդ տարելիցը մեծարվում էր այսօր ամբողջ Հայաստանում՝ ուղիղից ձայնասփռված նրա երգերով:

Ամենավերջին խոսողն եղավ զերաշնոր, Գերևնիկ սրբազանը, որ բաղձանք հայտնեց, որ ժառանգավորաց վարժարանների, դպրեմանքերի և հոգևոր ճեմարանների ուսանողները, հետագայում լինեն ուսուցիչ կամ եկեղեցական, պետք է լցվեն թարգմանիչների հոգով ու հոգեկան տեսիլքով՝ նվիրվածությամբ ժառանգելու համար Հայրենիքին, Ազգին և Եկեղեցուն:

Մեր սուրբ թարգմանիչներու հոգիով ներշնչվելով և անոնց տեսիլքով սնանելով է, որ մենք կդառնանք անոնց հշմարիտ մատանդորդները:— Եզրափակեց Կիլիկիո Կաթողիկոսության միարան սրբազանը:

Հայտադրի վերջին երգն էր «Էջ Միածինն ի Հօրէ՛ շարականը, որ Լրդվեց իտնկայս ապա Վն հափառ Հայրապետի Պապականիքով փսիվեց այնքան հաճելի ու դաստիարակիչ այս հանդեսը, որի կազմակերպման համար շնորհավորելի են և՛ Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը, և՛ սարկավագների և ուսանողների շնորհալի խումբը:





ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐԻՆ. Ը. ԱՆԱՌՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ



նձնանունը այն գլխավոր միջոց-
ներից մեկն է, որով հաճախքը
կամ հասարակությունը զանա-
զանում է իր անդամներից այս
կամ այն անհատին՝ մյուս լանհատներից։
Այդ միջոցը ավելի է բնորոշվում կամ զար-
գանում, երբ անձնանվան վրա ավելանում է
մի մականուն, կամ հայրանունը, կամ ազ-
գանունը և կամ այդ բոլորը միասին։ Կա-
րող ենք ասել պարզապես Վահան, ավելի
ճշտած՝ Գայլ Վահան, կամ Վահան որդի
Հմայակի և կամ Վահան Մամիկոնյան և
այլն։

Մարդկային հասարակության մեջ չկա
թեկուզ ամենավաղների մի ցեղ, որի ան-
դամները անձնանուն չունենան։ Անձնանու-
նը համաշխարհային մի երևույթ է։

Շատերը կարծում են և կամ այնպես են
հավատացած, թե անձնանունները ծագում
չունեն, այսինքն աննշանակ ձայներ են, և
կամ ավելի դիտարկում են ձևով արտահայտվե-
լով՝ արմատական բառեր են։ Այս կարծիքը
առաջացել է նրանց մեջ հասարակ անուն-
ների համեմատությամբ։ Ինչպես որ՝ սեղան,
ջուր, արև, փայտ, ծառ բառերը արմատ են
և մենք միջոց չունենք վերածելու նրանց
իրենց մասերին, նույնպես են համարվում
նաև անձնանունները՝ Միքայել, Տիգրան,
Երվանդ, Քաղեոս, Հովսեփ և այլն։

Այս կարծիքը ճիշտ չէ։ Հասարակ անուն-
ների մեջ կան և պետք է որ լինեն արմատ-
ներ կամ արմատական բառեր, բայց անուն-

ների մեջ չկա արմատական բառ։ Բոլոր
հատուկ անունները, լինեն նրանց մարդու,
թե տեղի (լեռան, ծովի, լճի, փետի, քաղա-
քի, գյուղի և այլն), կաղմված են հասարակ
զոյականներից, և նաև բարդ կամ ածական
ոճեր։ Ուրիշ խոսքով՝ ամեն հատուկ անուն մի
բառ է, նշանակությամբ օժտված հասարակ
անուն։

Մեր հասարակության մեջ այս սխալ կար-
ծիքը առաջացած է հատկապես այն պատ-
ճառով, որ մեր ամբողջ շրջապատը լցված
լինելով անթիվ անհամար օտար անուննե-
րով, որոնց իմաստը անծանոթ է մեզ, են-
թադրում ենք, թե անունները առհասարակ
անիմաստ ձայներ են։

Թե ինչպես կարելի է իմանալ, թե այսինչ
անունը հայկական է թե օտար, պետք է
դիմել ստուգաբանության։ Եթե մի որևէ
անուն մեզ համար և մեր լեզվով որևէ
իմաստ տալիս է, ուրեմն հայկական է։ Իսկ
եթե ոչինչ չի նշանակում, ուրեմն օտար է։
Այսպես օրինակ՝ Աստվածատուր, Խաչատուր,
Տիրատուր, Հրաչյա, Վարդգես, Նորայր, Ժի-
րայր, Հրայր, Մարգար և այլն հայկական
անուններ են, որովհետև հայերեն են և հա-
լերենով մի բան նշանակում են։ Աստվա-
ծատուր նշանակում է Աստուծո տվածը,
Խաչատուր՝ խաչի տվածը, Տիրատուր՝ Տիրոջ
տվածը, Հրաչյա՝ հրային աչքեր ունեցող,
Վարդգես՝ որի գեսը, այսինքն մազերը վար-
դի նման են, Նորայր՝ նոր այր, նոր մարդ
է, Ժիրայր՝ ժիր այր, ժիր մարդ է, Հրայր՝
հուր այր, այսինքն կրակե մարդ է, Հրաճ

հուր է անդ, այնտեղ՝ սրտում կրակ կա վառված, Մարգարե՝ մի մարգարե է, ապագայի գուշակ և այլն:

Խակ Պետրոս, Պողոս, Լեոն, Դուրգեն, Դերգուր, Փիլիպոս, Արզուման, Ռուրեն, Ալավերդի, ՍԼԵՆԵՆԻԻՄ և այլն հայերենի մեջ ո՞ր մի իմաստ չունեն, հետևաբար հայկական անուն չեն: Նրանք օտար անուններ են և յուրաքանչյուրը պատկանում է այն ազգին, որի լեզվով ստուգարանվում է կամ որից որ առնված է: Պետրոս հունարեն է և հունարենում ՍԵՏՐՈՍ նշանակում է «քար».— Պողոս լատիններեն է և լատիններեն քալիս կամ քալիսոս նշանակում է «փոքրիկ».— Լեոն հունարեն և լատիններեն է, այս երկու լեզվով ԼԵՈՆ ԱԵՍՆ նշանակում է «սպյուն».— Դուրգեն պահլավերեն կամ պարսկերեն է և պարսկերեն կամ պահլավերեն gurg, gurgen նշանակում է «զայլ, փոքրիկ զայլ».— Դերգուր հունարեն է և հունարեն ԴԵՐԳՈՐՈՍ նշանակում է «արթուն».— Փիլիպոս հունարեն է, որովհետև ծագում է հունարեն ֆիլո օսիրեն և իլպոս «ծի» բառերից և նշանակում է «ծիասեր, ծի սիրող».— Արզուման պարսկերեն հասուկ անուն է, որովհետև ծագում է պարսկերեն աբզումանտ «փափագող, ցանկացող» բառից.— Ալավերդի տաճկական անուն է, որովհետև ծագում է Ալլահ Ալլաումադ և վերդի «տվեց» բառերից.— Ռուրեն եբրայեցիներեն է և եբրայեցիներեն րու րեն նշանակում է «տե՛ս, որդի».— ՍԼԵՆԵՆԻԻՄ ասորեստաններեն է և այս լեզվով ՏԻՆ ՆԻԷ ԵՐԷՆ նշանակում է «Աստված եղբայրներս շատացրեց»:

Իզական անունները արականներից այն առավելություն ունեն, որ նրանց մեջ հայկականները համեմատաբար ավելի շատ են: Այսպես օրինակ՝ հայկական ծագում ունեն Սիրանուշ, Մամրունի, Տիրունի, Թագունի, Արունի, Կսկունի, Հասմիկ, Մանիշակ, Վարդունի, Լսունարզ, Մայրանուշ, Համասիլուտ, Երջանիկ, Արմենունի, Արշալույս, Արևհատ, Արեգնազան, Նազենիկ, Վարսենիկ և այլն և այլն: Իզական անունների այս զրական հոգմը, սակայն, մի բացասական երևույթի արդյունք է— հին Հայոց մեջ կնոջ անունը տալը ամոթ էր համարվում, և փոխանակ կնոջ իր սեփական անունով կոչելու, ասում էին «այսինչի աղջիկը»: Արանից են առաջացել Տիգրանունի, Խոսրովիդուխտ, Սահականուշ, Սմբատունի, Սմբատանուշ և այլն, որոնք ո՞չ թե իրապես անուն են, ինչպես կարծում ենք սխալմամբ, այլ նշանակում են «Տիգրանի աղջիկը, Խոսրովի աղջիկը, Սահակի աղջիկը» և այլն: Տրդատի քույրը կոչ-

վում էր Խոսրովիդուխտ, որովհետև Մեծն Խոսրովի աղջիկն էր, Սմբատ Բագրատունու երկու աղջիկները կոչվում էին Սմբատանուշ և Սմբատունի: Մինչև այժմ էլ Հարաբադի կամ Զանգեզուրի գյուղերում կանայք և օրիորդները կոչվում են նույն ձևով. «Բայասանի աղջիկ» փոխանակ ասելու Արուսյակ և այլն: Երևույթը շատ տարբեր չէ եվրոպական երկրների այն սովորությունից, որով ամեն մի օրիորդ իր հոր ազգանունով և ամեն մի կին իր ամուսնու ազգանունով է կոչվում, առանց իր ծննդական անվան հիշատակության: Ֆրանսիացոց մեջ կնոջ քուն անունը տալը ամենամեծ անարգանքն է, այդպես են կոչվում միայն փողոցային կանայք: Այս պատճառով է ահա, որ մեր հին մատենագրությունն էլ չափազանց ժխտել է իզական անունների վերաբերմամբ: Հայոց պատմության մեջ իզական անուն չկա: Այս բացասական երևույթի դրական արդյունքն այն ճշգրտ, որ երբ անցյալ դարի կեսին սկսեց հայկական ինքնագիտակցության զարթոնումը, հայկական իզական անուններ չունենալու պատճառով՝ ազատ ապարեզ բացվեց բառակերպության և սկսեցին հորինել ամեն տեսակի իզական նորանոր անուններ:

Հայոց մեջ քուն հայկական անունների զգալի մասը օտար է: Համարյա նույն դրության են նաև մեր շրջակա ազգերը, այսպես, ռուսների մեջ գուտ ռուսական կամ սլավական ծագում ունեցող Վսևոլոդ, Վլադիմիր, Սվյատոսլավ, Ֆյոդոսլավ, Լյուդմիլա և այլ անունների կողքին կան՝ Իվան, Սերգեյ, Նիկոլայ, Դիմիտրի, Ալեքսանդր, Պյոտր, Պավել, Սերգիյ, Ֆակով, Խիտոսֆոթ և այլ օտար անուններ: Պարսիկների մեջ ընդ իրանական անուններ այժմ շատ քիչ են, այսպես Խուսրե, Դուրգեն և այլն, իսկ Ահմեդ, Ալի, Հասան, Հյուսեյն, Սուլեյման, Աբրահ և այլն օտար են: Այսպես է նաև տաճիկների, վրացոց, բրդերի մեջ:

Այսպես չեն սակայն արարները, հնդիկները, չինացիք, եբրայեցիք, չիին նաև հին հույները, լատինները և այլն: Արարական բոլոր անունները՝ Ալի, Օսման, Օմար, Հասան, Հյուսեյն, Աբրահ և այլն գուտ արարական են և արարներն լեզվով ունեն իրենց իմաստը: Ալի նշանակում է քարձր, Հասան նշանակում է փղեցիկ, Հյուսեյն՝ սիրունիկ և այլն: Հնդիկների բոլոր անունները հնդիկներն են և նրանց մեջ օտար անուն չկա: Զինական անունները միշտ եռափունկ են, ինչպես օրինակ՝ Լոն Ֆու-ղեն, Լի Հունկ-լանկ, Սուի Ֆան-ցեն և այլն: Սրանց մեջ առաջին վանկը ազգանունն է, մյուս երկուսը՝ անուն և հայրանուն:

Սեփական կամ օտար անուններ ունենալու երևույթը կապված է սեփական կրոն ունենալու փաստի հետ: Երբայնցին ունի իր սեփական կրոնը, որ է Մովսիսականությունը և պահում է իր սեփական անունները՝ Մովսես, Արամհամ, Խառնակ, Դավիթ, Սողոմոն և այլն: Արարը ունի իր սեփական կրոնը, որ է մահմեդականություն և պահում է իր արաբական անունները: Հնդիկը, չինացին ունեն իրենց սեփական կրոնները՝ բրահմանականություն, բուդդայականություն, կոնֆուցեականություն, լաոցեականություն և այլն, ուստի և պահում են իրենց սեփական անունները: Իսկ այն ազգերը, որոնք ընդունել են մի ուրիշ ժողովրդի կրոնը, ընդունել են նաև նրանց անունները: Տաճիկները, քրդերը, աֆղանները ընդունել են մահմեդականությունը, որ արաբների կրոնն է, ուստի սեփական անուն չունեն. նրանց անունները բոլոր արաբերեն են: Պարսիկները, հին ժամանակ, երբ հետևում էին իրենց սեփական գրադարձական կամ մաղղեղական կրոնին, ունեին զուտ պարսկական (իրանական) անուններ, իսկ այն օրից, երբ ընդունեցին մահմեդական կրոնը, և մինչև այժմ, գործ են ածում միայն արաբական անուններ: Այս կողմից հետաքրքիր օրինակ են տալիս փարսիները, այն է՝ Պարսկաստանի և Հնդկաստանի արդի կրակապաշտ պարսիկները, որ մինչև այսօր պահում են անաղարտ ին պարսկական (իրանյան) անունները:

Եվրոպան հնապես երկու բաժին ուներ. հյուսիսը և արևելքը բարբարոս էին, իսկ արավելը և արևմուտքը բուհում էին հույներն ու հռոմեացիք, որոնք շատ հին և շատ առաջադիմ մշակույթ էին ստեղծել: Այս երկուսն էլ ունեին իրենց սեփական անունները, հույները զուտ հունարեն և հռոմեացիք զուտ լատիներեն: Մեղանից 1900 տարի առաջ, այս երկու աշխարհներում սկսեց քաղաքակրթական շրջադարձ, որ վերջապես ընդհանուր կրոն դարձավ ու տիրապետեց ամբողջ Եվրոպայում և Ասիայի արևմտյան մասում, Իսպանիայից մինչև Հայաստանի արևելյան սահմանը:

Երբ հույները և լատիները ընդունեցին քրիստոնեությունը, Ավետարանի հետ պիտի ընդունեին նաև Հին Կտակարանը, որ քրիստոնեության պատվանդանն էր կալվածում և հրեաների սրբազան մատյանն էր: Այս պատճառով էլ հրեական այն անունները, որոնք սովորական էին Հին Կտակարանի մեջ, գործածական դարձան նաև հույներին և լատիներին մեջ: Բայց հույները և լատիները, ունենալով նաև սեփական մեծ քաղաքակրթություն, հարուստ լեզու և մեծահարուստ հին գրականություն, լիարժեք

հրաժարվել այս բոլորից, և նորի հետ պահեցին նաև հինը: Այսպիսով քրիստոնեություն մեջ ընդունվեցին մի կողմից հրեական (եբրայական) և մյուս կողմից հուսական և լատինական անունները: Եվ այն բոլոր ազգերը (հայ, վրացի, ռուս, գերմանացի, հունգարացի, անգլիացի և այլն), որոնք ընդունեցին հունա-լատինական քրիստոնեությունը, ընդունեցին նաև հրեական, հունական և լատինական անունները: Ուր որ կա ին հին կյանքին սեփական անուններ, մեծագույն շահով ջնջվեցին՝ իբրև կռակաշտություն մնացող, տեղի տալով նոր կրոնի՝ քրիստոնեության բերած հույն-լատին և եբրայական անուններին:

Այժմ մասնավորեցնք մեր խոսքը հայոց դործածած անունների մասին:

Ո՛չ մի բան այնքան հավատարիմ կերպով չի ներկայացնում մեր պատմական կյանքի զանազան ելևէջները, մեր կրած ազդեցությունները օտար ժողովուրդներից, ինչպես և մեր ներքին ձգտումները, որչափ հատուկ անուններ:

Մենք գիտենք, որ հատուկ անունները երկու տեսակ են՝ տեղանուններ և անձնանուններ: Տեղանունները ավելի հարատև, հաստատուն և տևական բնույթ ունեն քան անձնանունները: Որեւէ լեռ, լիճ, ժով ու գետ մշտնջենական կյանք ունի. որեւէ քաղաք կամ գյուղ հարյուրավոր ու հազարավոր տարիների կյանք ունի. հետևաբար և նրանց անունը ընդհանրապես մնալուն և տևական է: Բայց անձների կյանքը առ առավելն մի դարի տևողություն ունի: Անցնում է սերունդը, փոխվում են զաղափարները, փոխվում են ազդեցությունները և անուններն էլ նրանց հետ միասին անհետանում են, տեղի տալով նորանոր ձևերի:

Անձնանունների տևականությունը որոշ չափով կախված է մի քանի հանգամանքներից, որոնք են.

1. Բառի կառուցվածքը.— Զափազանք երկար անունները շուտ են մոռացվում կամ դոնե այնքան են կրճատվում, որ այլևս անհանաչելի են դառնում.— Արեղնազով, Ազաբանգեղոս իրենց երկարության պատճառով հաջողություն չեն գտել կամ շուտ են մոռացվել: Առաջինի չափ երկար է Աստվածատուր, որ թեև շատ սովորական անուն է, սակայն ո՛չ մի տեղ չի պահված իր բուն ձևով, այլ պանազան կրճատումներով դարձել է՝ Ասատուր, Աստուր, Աստիկ, Ասո, Մատուր, Մատի:— Առհասարակ սիրելի են երկավանկ անունները. երկուսից ավելի վանկ ունեցող անունները կրճատվում են. սրա համար է. որ Մարտիրոսը դառնում է Մարտո, Մրտո. Մարտիկ— Մկրտիչը դառնում է Մկրի, Մկո.

Միկիտ, Միկլի, Մսկուզ.— Հոիփսիմեն
դառնում է Հոոոփ, Հոոոմ, Հոոոյ.— Եղիսա-
րնրը դառնում է Եղիս, Եիսսա, Եիսսո, Սա-
րնր, իսկ Եվրոպական լեզուների մեջ էլ՝
էլիգ, էլիգա, Լիգա, Իգարելյա, Զարել, Բելա
և այլն։

2. Բառի ներդաշնակությունը.— Յուրա-
յանչյուր ազգի և ժողովրդի ղեկավարվածու-
կան ճաշակի համաձայն՝ խժալուր և տգե-
ղաձայն համարված անունները բնականա-
բար շուտով քնչվում են, իսկ ախորժելի
նշյուն ունեցող անունները միշտ ափելի են
փնտրվում։

3. Նշանակության զեղեցկությունը.— Ան-
խմաստ կամ տղեղ համարված մի անուն
ափելի շուտ է հնանում և քաշվում սոսկաբե-
զից, բան թե նշանակությամբ զեղեցիկ մի
անուն.— Վարդունի շատ հին անուն է, դո-
յություն ուներ 5-րդ դարում, հիշվում է
Հայսմավուրքի մեջ և դեռ երկար պիտի
ուպրի։ Այսպես նաև Շուշան կամ Շուշանիկ։
Նույնչափ ախորժելի են Մանիշակ, Միււ-
նուշ, Հրանուշ, Վարունիկ և այլն, մինչդեռ
Աղապի, Եվլարաֆիա, Հեղինե, Կատարինե
մոռացված ու անհետացող անուններ են
տրդեն։

4. Այն հանգամանքը, որ պատահարա-
րայն անունը կրող անձերը եղել են նշանա-
վոր և անմոռանալի մարդիկ, պատճառ է
դարձել, որ այն անունները երկար ապրեն,
այսպես Արգառ, Վարդան, Հայկ, Նևսես,
Աահակ, Ասուրս անմոռանալի անուններ են,
որովհետև մեր պատմության մեջ ունեցել

ենք այս անուններով կոչված նշանավոր
անձնավորություններ, իսկ Վասակ, Հուդա,
Սևրուժան մեռած, անդործածելի անուններ
են, որովհետև այս անուններով գտնված են
նշանավոր մատնիչներ և դավաճաններ, Ա-
նունը ինքնին այստեղ նշանակություն չունի,
Վասակ թաղ իրապես ափելի զեղեցիկ է
քան Վարդան, բայց ուրացող Վասակի վատ
հիշատակը մոռացնել է տվել այդ անվան
զեղեցկությունն ու ներդաշնակությունը։

5. Կրոնական կամ ազգային զաղափա-
ները.— Մրանք ժամանակի բերմունքի հա-
մեմատ են, կար ժամանակ՝ երբ կրոնական
զգացմունքը կյանքի դիմավոր վարիչն էր,
այն ժամանակ անունները ափելի կրոնական
էին, ինչպես Աստվածատուր, Խորոս, Կիրա-
կոս, Մարկոս, Ղուկաս, Մատթեոս, Պետրոս,
Պողոս և այլն, կրոնական զգացմունքը ան-
ջամ գնաց՝ և տեղի տվեց զուտ ազգային
շրջանին։ Դա էր անցյալ դարի կեսին, Այն
ժամանակ կրոնական անունները այլևս ա-
նախորժ դարձան և նրանց տեղ սկսեցին
նայ ազգային անունները— Վարդան, Եր-
վանդ, Զարեհ, Դուրզեն, Արտաշես, Հրաչյա,
Զարմայր, Պարույր և այլն։

Եթե ուզենանք հայ անձնանունները դա-
սավորել իրենց ուրույն խմբերով և ներկա-
յացնել այն ազդեցությունները, որոնց են-
թարկված են նրանք մեր հնադույն շրջանից
սկսած մինչև այսօր, կունենանք, որ նրանք
էազմում են 15 խումբ, որ համապատաս-
խանում են 15 շրջանի, որոնք հետևյալներն
են՝ ժամանակակրթական կարգով.

1. ՆԱԽԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Նախահայկական անունները պատկանում
են այն ժողովրդին, որ գրավում էր Հայաս-
տանը։ Հայոց լեզուն անշուշտ շատ բան
վերցրեց նրանցից, այս կարգին են պատ-
կանում մեր տեղանունները, Գրեթե ստույգ
է, որ Հայաստանի տեղանունները ամենա-
մեծ մասամբ նախահայկական (խալդյան)
փոխառություններ են, ինչպես Արաբատ,
Վառ, Արեն, Մուշ, Կարին, Մասիս և այլն
և այլն, որոնք հայերենով չեն կարող
մեկնվել ամեններին։ Քիչ առաջ բերված պատ-
մասարանությունը՝ շատ ավելի սակավաթիվ

են անձնանունները։ Մրանք մեջ կարող ենք
իշել Արամ և Մանավազ, Առաջինը ան-
շուշտ ծագում է խալդյան Արամի նշանավոր
թագավորի անունից, Երկրորդը շատ նման է
հնում Աենվաս արքայական անվան, բայց
դա պատահական է և Մանավազ իրանական
անուն է։ Մի կողմ էնք թողնում այն բազ-
մաթիվ անստույգ անուններ, մասնավորապես
նախարարական տունանունները, որոնք
դանապան հեղինակների կարծիքով ծաղում
են նախահայկական խալդյան անուններից։

2. ԱՆՄԱՆՈՒԹ ԱՆՈՒՆՆԵՐ

Նորենացին իր Պատմության Ա գրքում
ապրիս է մեզ հայ անունների մի խումբ,
որոնց ծագումը բողոքովին անհայտ է։ Այս
կարգին են պատկանում Հայկ, Արմենակ,
Արամայիս, Արասիա, Հարմա, Արա, Կար-

դոս և այլն և այլն, որոնք ապահովապես
հայերեն չեն, քանի որ չեն կարող մեկնվել
հայերենով։ Թե արդյոք սրանք էլ պատկա-
նում են խալդյան շրջանին և կամ հայկյան
ունունների մնացորդ են և կամ փոյուրս-

կան որեւէ լեզվի՞ց են փոխ առնված և կամ թե վերջապես խորենացու հնարածնե՞րն են (գտնե մի քանիսը), կարեւոր չէ գիտութիւնն այժմյան վիճակում ստուգապէս որոշելու տույզ է ինձ համար, որ Մուշեղ, հայոց

պատմության մեջ այնպես սովորական մի անուն, փոխ է առնված հայկական Մուշեղի անունից։ Այս անունով են կոչվում հայկական մի քանի թագավորներ (տե՛ս իմ Հայոց լեզվի պատմություն, Ա հատոր էջ 149)։

3. ԲՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Բուն հայկական անունների առաջին շրջանը ընկնում է Արշակունյաց ժամանակ, Ագաթանգեղոս, Բուզանդ, Կորյուն, խորենացի, Փարպեցի և Նդիշե ավանդում են մեղայա կարգի բաղմամբիւ անուններ, որոնք կրկնվում են նաև հաջորդ պատմիչների մոտ։ Այս անունները գուտ հայկական ին, որովհետև մեկնվում են հայերեն լեզվով, ինչպես Արծաւ, Տիրայր, Այրուկ, Աւագիկ, Գյուտ, Թաքիկ, Թարուկ, Թոռնիկ, Իշխան, Եղբայր, Երանյակ, Զարմայր, Բագուկ, Գոռակ, Առնակ և այլն։ Բուն հայկական անունների մեջ շատ սովորական են կենդանիների և թռչունների անունները, ինչպես Առյուծ, Այծեմնիկ, Կոյուն, Արտույտ, Գառնիկ, Եղնիկ, Յիկ, Ընչուղ, Մրջունիկ և այլն։ Բուն հայկական անունները, ինչպես ասագինք, պատկանում են Արշակունյաց շրջա-

նին, ավելի որոշ խոսելով՝ նախաքրիստոնեական հայության։ Քրիստոնեությունից հետո սրանք սկսում են կամաց-կամաց տեղի տալ։ Մեծ Անիշխանության կեսից հետո, արաբական տիրապետության և Բագրատունյաց թագավորության ժամանակ լափազանց սակավամբիւ են դառնում և Ռուբինյանց ժամանակ բոլորովին անհետանում են։ 19-րդ դարի կեսից հետո, երբ սկսեց հայկական դարձումը, բուն հայկական անունները նորից կենդանացան և նրանցից լավագույնները, այսինքն իմաստով գեղեցիկները, պատմության էջերից դուրս բերվելով, նորից գործածվել սկսեցին, ոմանք կրոնական, ոմանք էլ աշխարհական շրջանակներում, ինչպես Տիրայր, Կոյուն, Եղնիկ, Գառնիկ, Զարմայր, Երանյակ, Իշխան, Բայց ոչ Մրջունիկ, Յիկ, Արտույտ և այլն։

4. ՊԱՀՆԱԿԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Պարթևական ազդեցությամբ հայոց վրա լափազանց մեծ է Պահլավերենը հայ ազնվականության լեզուն էր. պալատականները և նախարարները այդ լեզվով էին խոսում, դիվանական հարաբերությունները այդ լեզվով էին կատարվում։ Զարմանալի շպիտի թվա ուրեմն, եթե ասենք, թե հին հայոց անունների որոշ մասը, որոնք մենք գուտ ազգային անուններ ենք համարում, պարզապես պահլավական փոխառություններ են։ Այսպես օրինակ Վարդան, Վահան, Բագարատ, Ատրեւսեհ, Դաստամատ, Զարեհ, Սեպուհ, Զոհրապ, Խոսրով, Խոսրովիդուխտ, Համազասպ, Արտաշես, Գիսակ, Գուրգեն,

Անուշ, Աշխեն, Առաստոմ, Արշակ, Սառնաւորուկ, Արտավազդ, Տրդատ, Վրամշապուհ և այլն և այլն։

Պահլավական անուններն էլ իրանյան տիրապետության անկումից հետո սկսեցին մոռացվել։ Ռուբինյանց իշխանության ժամանակ ամենամեծ մասամբ ջնջված են արդեն։ Մնում են միայն նրանք, որ ներկայացնում են մեր պատմության ամենամեծ դեմքերը, ինչպես Վահան, Վարդան, Տրդատ և այլն։ Հայկական զարթումին նորից կենդանացան նրանք և այսօրվա հայության ամենասիրելի անուններն են։

5. ԱՍՈՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Քրիստոնեությունն ընդունելուց հետո, հայերը առաջին անգամ ընկան ասորական ազդեցության տակ։ Հունաստանը հեռու էր, իսկ Միջագետքը շատ մոտիկ։ Բաղմամբիւ ասորի քարոզիչներ կային մեր երկրում, ուր նրանք իրենց լեզուն տարածում էին եկեղեցու բեմից։ Եկեղեցական պաշտամունքի լեզուն ասորերեն էր. Ավետարանը ասորերեն

էր կարդացվում։ Հայ երիտասարդները իրենց ուսումը Նդեսիայի դպրոցումն էին ստանում։ Աստվածաշունչը առաջին անգամ ասորերենից թարգմանվեց։ Այս ժամանակաշրջանում, մեր մեջ մտան մի խումբ ասորերեն անուններ, ինչպես Աշամ, Աբգար, Նդիշե, Գաղիշո, Բարզափրան և այլն։ Ասորական ազդեցությամբ կարճատե եղավ.

շուտով վրա հասան հունական և հետո զուտ հայկական քաղաքակրթությունը, որոնք իրենդեցին ասորականը: Ասորական անուններն էլ ջնջվեցին և նրանցից հաղիվ մեկերկուսը կյանք ունեն այսօր. այն է Արգաբ

և Եղիշե. որոնք ապրում են շնորհիվ այն հանգամանքի, որ ներկայացնում են մեր առաջին քրիստոնյա թագավորի (ըստ ավանդության) և մեր ամենից սիրելի բանաստեղծ պատմագրի անունը:

6. ԵՐԲԱՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Երբայական բաղաբարթությունից խորապես ազդված ազգերի մեջ գտնվում ենք նաև մենք: Դժմարիտ է, թե այս ազդեցությունը անմիջական հարարերությանց արդյունք չէ և հույների միջոցով հասել է մեզ, բայց այնքան սաստիկ է եղել այն, որ շատ տարբեր ձև չպիտի ունենար, եթե անմիջական հարաբերության ծնունդը լինելու քրիստոնեության և Աստվածաշնչի միջոցով երբայեցեղենից անցել է մեզ անձնանունների մի մեծ թիվ, որ 1600 տարուց ի վեր մեր ամբողջ կյանքն է լցնում: Աղամ, Եվա, Աբել, Աբրահամ, Սեբ, Սախակ, Դանիել, Գարեթի, Գավիթ, Խալի, Հակոբ, Ջաֆարիա, Սողոմոն և այլն և այլն հայ ժողովրդի բոլոր խավերի համար այնպես ծանոթ, այնչափ սովորական, այնքան հայացած և այն աստիճան ընտանի

անուններ են, որ դեռ դարեր ու դարեր պիտի ապրեն. և հազիվ թե կարելի լինի ասել, որ երբեքից պիտի կարենան ջնջվել հայության և աշխարհի միջից:

Երբայական անունները անցել են մեզ Աստվածաշնչի թարգմանության միջոցով, և որովհետև մեր Աստվածաշունչը թարգմանված է հունարենից և ո՛չ թե ուղղակի եբրայեցիներից, ուստի այս անուններն էլ կրում են հունական կներ: Այստեղ ամենացայտուն կետը հետևյալն է— հունարեն լեզվի մեջ չկա շ ձայնը. տաստի տը որ երբայերենը ունի շ, հույները դնում է ս: Մենք էլ, թեև ունենք շ ձայնը, բայց հետևելով հունարենի՝ դնում ենք ս: Այսպես օրինակ՝ եբրայեցիներն ասում է Երոշլիմ, իսկ մենք ասում ենք Երուսաղեմ: Այս երևույթը ընդհանուր է բոլոր հիբրեպական ազգերին:

7. ՀՈՒՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Հույներ քրիստոնեության տարածիչ և համաշխարհային քաղաքակրթության դայակն է եղած. չկա սելաարհիս մեջ մի ազգ, որ հունական քաղաքակրթության որևէ բանով պարտական չլինի: Զինացիք անդամ հունարենից փոխառյալ բառեր ունեն: Առանձնապես մեր ազգը ամենամեծ չափով ազդված է հույներից, եթե մեր նախաքրիստոնեական բաղաբարթությունն ամբողջությամբ պարթևական բաղաբարթությունն էր, մեր հետքրիստոնեական քաղաքակրթությունն էլ լիովին հունական է: Սեր զրականությունը հունականի ընդօրինակությունն է. մեր առաջին գրքերը հույն հեղինակներից են թարգմանված, և այս բանը շարունակվել է մինչև Ռու-

սիայանց թագավորությունը. Աստվածաշունչ, Ավետարան, Մաշտոց, Վարք Սրբոց, Հայսմապետք, Խորհրդատետր՝ հունարենից են թարգմանված կամ հունականի օրինակով խմբագրված:

Այսպիսի խոշոր ազդեցության քնական արդյունքն է նաև հատուկ անունների մի առատ թիվ, որ 4-րդ դարից սկսած մինչև այսօր տիրապետում է հայ կյանքի վրա. օրինակ՝ Անաստաս (հարություն), Առնոյ (առյուծ), Վասիլ (թագավոր), Գեուր (երկրագործ), Գրիգոր (արթուն), Թեոդոսոս (առաքածատուր), Փիլիպոս (ձի սիրող), Կիրակոս (տերուհի), Հովիթսիմ (անկյալ), Ազատիլ (սեք), Սոսիմ (պսակ) և այլն:

8. ԱՐԱՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Վերևում ցույց տվեցինք, թե անձնանունները առհասարակ կրոնական բնույթ ունեն և ըստ այնմ կրոնակից ազգերից առնվելով՝ նրանց կրոնի հետ էլ տարածվել են:

Ի նկատի ունենալով այս տիեզերական երևույթը, տարօրինակ է անշուշտ այն հանգամանքը, որ հայերը, նույնիսկ քրիստոնեության ամենից պայծառ տարիներում, ընդու-

նել են կրոնապես իրենց թշնամի ազգերի անձնանունները, ինչպես արաբների և թյուրքերի, Զգիտեմ թե ի՛նչպես պետք է մեկնել այս երևույթը։ Անշուշտ մահմեդականները չստիպեցին մեզ, որ մենք բռնի կերպով ընդունենք իրենց անունները։ Երեկ այս էլ գերիշխան տարրի բնական ազդեցության արդյունքն է։ ազդեցություն՝ որ ամեն ձեռք ու

ամեն հանգամանքի մեջ էլ իր գործը տեսնում է, և փոքր, նվաճված ազգերը իրեն է քաշում, իրեն է միացնում։

Մեր հին պատմության մեջ ծանոթ արաբական անուններ են Աբլխարիպ, Աբուսահլ, Հավամ, Մլեհ և այլն։ Ոմանք նաև գործածված են հայ թարգմանությամբ, ինչպես Ճենդուկ, որ արաբական Հավամ համանիշի թարգմանությունն է։

9. ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Ռուբինյանց օրով, հարաբերության անմահ հետ, շատացավ նաև լատինական անունների գործածությունը, ինչպես Անտոն, Լեոն, Զաբել, Ալիս, Հերոլմ, Օգոստինոս և

այլն։ Ռուբինյանց պետության անկումով լատին անունները չնչվեցին և այսօր հազիվ մի քանիսը կենդանի են նրանցից։

10. ՀԱՅ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Քրիստոնեության տարածումից հետո, երաբայական և հունական անունների հեղեղման ժամանակ, ծագեց հայոց մեջ մի նոր միտք, այն է՝ թարգմանել օտար քրիստոնեական անունները։ Հունական Անաստաս անվան դեմ դրին Հառուրյուն, Ապոստոլի դեմ՝ Առաքել, Թեոդորոսի դեմ՝ Աստվածատուր, Ստավրիի դեմ՝ Խաչիկ, երաբայական Սեբի դեմ՝ Մխիթար և այլն։ Այս երևույթը անշուշտ հունագետ հայրերի գործն էր և ազգային նախանձախնդրության մի ձեռնարկ հայոց մեջ։ Ուշագործություն չեն դարձրել նրանք այն հանգամանքի վրա, թե արդյոք այդ թարգմանված անունների բնաձևը իրապես գործածակա՞ն է հայոց մեջ, թե ոչ։ Որինակի համար՝ Անաստաս, Թեոդորոս և այլն հայոց ծանոթ անուններ են եղած, բայց Ապոստոլ,

Ստավրի և այլն գործածական չեն եղած մեր մեջ։ Թարգմանության հետ զուգընթացաբար մտել են նաև նոր նմանակերտ անուններ, բոլորն էլ քրիստոնեական կյանքի բացատրություններ, հայ ժողովրդի մտքին ու սրբտին մոտիկ ու հասկանալի բառեր, որով մեր անձնանունների բառարանը կրկնապես ընդարձակվել է։ Այսպես են Հավարձում, Զատիկ, Գալուստ, Մարգար, Տիրատուր, Խաչատուր, Քրիստոստուր, Խաչերես, Մերոն, Կառապետ, Մկրտիչ, Ավետիս, Ավագ, Մաքրունի, Մերունի, Տիրունի և այլն և այլն, որոնք, սկսած այն օրից մինչև այժմ, ավելի կամ նվազ լափով գործածական են մեր մեջ։ Մեր մտավոր զարգացման պատմության տեսակետով շատ հետաքրքիր էր որոշել, թե ե՛րբ է այս անունների ծագման ժամանակը։

11. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Հայ կրոնական անուններից դուրս կան բազմաթիվ ուրիշ անուններ, որոնք թեև հայերենի մեջ կազմված անուններ են, բայց քրիստոնեական հավատալիքների շուրջը չեն պտտվում, այլ իրենց իմաստով ներկայացնում են ավելի իրական կյանքը և շատ անգամ ներկայացնում են աշխարհիկ բանաստեղծական սիրուն պատկերներ։ Օրինակ՝ Թուխծամ— մազերը սև, Շաղոսկի— որ սկի է շաղում, Վարդիթե— վարդի թերթ,

Հերիֆեազ— հերիք ինչքան նազ ես անում, Այս շարքի անուններից են՝ Զաւագան, Վարդերես, Լույսպարոն, Նորաբե, Վարդմպու, Անճրեվարդ, Նորվարդ, Նորտիկին, Վարդաւնուկ, Քնարիկ և այլն։

Հայ հասարակ ժողովրդի, շինականի բնիկ, հարազատ, յուրակերտ անուններն են սրանք, որ եկեղեցական դասի պաշտած կրոնական անունների և ազնվական դասակարգի սիրած օտար անունների շրջանակում բացառիկ փայլով ցույց են տալիս։

12. ՍԵԼՋՈՒԿ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Հայ ժողովրդական անուններին գրեթե ժամանակակից են այն բազմաթիվ անձնանունները, որ հայ ժողովուրդը փոխ է առել թաթար, սելջուկ և նորապարսիկ մահմեդական ազգերից: Հայ ժողովուրդը ընդհանրապես շատ լավ գիտեր այդ լեզուները, որով շատ դյուրավ թափանցում էր անձնանունների ներքին իմաստին և նրանց մեջ տեսած դեղեցիկ պատկերներից հրապուրված՝ վերցնում ու որդեգրում էր նրանք: Որինակ՝

Ասլաւ — առյուծ, Զիվաճիւր — մատաղ առյուծ, Բահալու — թանկագին, Բալլաւ — դուռակ, Դուլլաւաւ — զարնանային վարդ, Դուլլաստա — վարդի փունջ, Դուլմեյիւ — վարդերի թագուն, Դուլմիզար — վարդանկար, Հալսլանդա — ծառա Աստուծո, Հախնազար — Աստվածատես, Նրար — բազկան է, Թամաւ — կատարյալ, Թանգլիդուլի — Աստուծո ծառա, Թուրֆանա — նորահաս նուրար, Խուրլումեյի — (թաթարերեն) երջանիկ կամ օրհնյալ թագավոր:

13. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Բոլորովին նոր ժամանակի փոխառություններ են սրանք, որ առնված են ֆրանսերենից, իտալերենից և անգլերենից, գործածական էին բացառապես արեւմտահայոց, հատկապես կաթոլիկ հայոց մեջ, ինչպես ժողեք կամ ժողովուրդ (Հովսեփ), Ճիվան (Հովհաննես — իտալական Զիովաննի), Կալանտին, Ալբերտ, Էդուարդ, Վիկտորիա, Էմեն, Վերմին, Ադուլֆ, Ռոդոլֆ և այլն և այլն: Սրանցից իտալական ձևերը արդեն անհետացան արեւմտահայոց մեջ, իսկ մյուսները

շատ գործածական չեն այժմ, բացի իզական անուններից, որոնք արականներից ավելի սիրելի են դարձած, այն պատճառով, որ իզական անձնանունների մի ճոխ մթերք պակասում է արեւմտահայոց մեջ: Վերջին ժամանակներս Կովկաս էլ մուտք գործեցին եվրոպական անունները, ինչպես էմմա, Էլեոնորա (կրճատ՝ Նորա), Զուլետա, Օֆելյա, Վալենտինա, Էդուարդ, մինչև իսկ Նապոլեոն, Համլետ, Հենրի և այլն:

14. ՌՈՒՍԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Վերջին ժամանակներս զուտ ռուսական անունները սկսել են բազմանալ ռուսահայ աշխարհում (Կովկաս և մանավանդ Ռուսաստան): Ռուսահայերից ոմանք ռուսական համապատասխան մի անուն փնտրում զրույնում են իրենց մագնիսի անվան տեղ և այս ձևով էլ գործածում առհասարակ, այսպես՝ Նիկոլոսը դառնում է Նիկոլա, Գեորգը Գեորգի կամ Եգոր, Հովհաննեսը՝ Իվան, Դեմիտրի՝ Դեմիտրի և այլն:

Այս աշխատանքը այնքան է առաջ գնացած, որ բոլորովին անհամապատասխան անուններ էլ շատ անգամ լծորդվում են իրար պաշտոնապես, լավական է, որ երկու բաների մեջ նմանահնչյուն մի տառ կամ մի ձայն գտնվի: Այսպես՝ Մկրտիչը դառնում է

Նիկիտ, Հարությունը՝ Արտեմ կամ Արտյոմ, Սահակը՝ Սավա, Մարտիրոսը՝ Մարտին, Վադարչակը՝ Վոլոդյա, Արշակը՝ Արկադի և այլն, որոնք իրար հետ ո՛չ մի առնչություն չունեն ամենեին: Այս «արվեստ»ի մեջ նշանավոր են հատկապես Նոր-Նախիջևանի հայերը:

Առանձնապես հարգի և սովորական են փաղաքշական անունները, ինչպես Միշա (Միքայել), Սաշա (Աղեքսանդր), Մաշա (Մարիամ), Թոդյա, (Թեոդորոս), Լիզա (Եղիսաբեթ), Կոլյա (Նիկողայոս), Կատյա (Կատարինա) և այլն:

Նոր ռուսական անուններ են՝ Վլադիմիր, Օլգա, Օլյա, Օլիմպա, Դուսյա, Դուենյա, Մարուսյա և այլն:

15. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՈՒՆՆԵՐ


Այս անվան տակ դասավորում եմ այն հայերեն անձնանունները, որոնք հայկական ազգային ինքնագիտակցության զարթոնից հետո սկսեցին գործածվել մեր մեջ, այն է վերջին 80-ամյակում: Այս ազգային ինքնագիտակցությունը, որ մերժելով զուտ կրոնական և օտար անունները, պատմության էջերից դուրս բերեց գրեթե մոռացված հայ պատմական անունները և նրանք ընդհանուր գործածության դրեց, շրավականացավ միայն պրանցով և սկսեց ստեղծել հատուկ անուններ, բոլորն էլ զուտ հայերեն լեզվով և հայ ազգային գաղափարների շրջանակում:

Ահավասիկ այսպիսի նոր անունների մի փոքր ցանկ— Հայաստան, Արաքսի, Մասիս, Արարատ, Արմենուի, Հայկունի, Ագատ, Արաճուն, Վարսանու, Հրանու, Հրազդան, Հրայր, Հրաչունի, Բեկունի, Վշտիկ, Մարտիկ (ո՛չ թե Մարտիրոս բառից կրճատված, այլ հայերեն մարտիկ *սկզբնորդ*), Հայկազն, Հայկաբաժ, Աղավնի, Արծվիկ, Հասմիկ, Քնարիկ, Արփեցիկ, Ազնիվ, Սիրական, Լուսիկ, Լուսնրագ, Գեղունի, Ազատունի, Փայլակ և այլն:

Անունները կախում ունեն նաև տեղից ու հանգամանքից: Հայության բոլոր հատվածները, թե՛ Հայաստանում և թե՛ գաղթավայրերում, միշտ մի միակ տիրապետության նպատակ չեն եղել և հետևաբար մի ազդեցության չէին ենթարկված: Պահպանական անունները կարող էին Հայաստանի արևելյան մասերում տարածված լինել, մինչ հունական անունները՝ ավելի արևմտյան մասերում, իսկ ասորական անունները՝ հարավային մասերում: Տեղական զանազանությունը ավելի որոշ է ներկայումս. Կովկասի հայերը գործ են ածում ռուսական անուններ, որոնցից ո՛չ մեկը չի մտած արևմտյան Հայաստան և գաղութները: Հունգարիայի, Լեհաստանի և Ռումինիայի հայերը բնականաբար ունեն հունգարական, Լեհական և ռումինական անուններ, որոնք մեր մեջ իսպառ մուտք չեն գործած:

Հանգամանքներն էլ մեծ ազդեցություն ունեն անունների տարածման վրա—բարձր դասակարգը, իրեն նորության ու փայլի սիրահար, սովորաբար հինն ու բնիկը շուտ է մոռանում, օտար անունները ավելի է սիրում և նրանց առաջին փոխառուն է, մինչդեռ հասարակ ժողովուրդը իր ունեցածին ավելի հավատարիմ է: Պահպանական անունները առաջին անգամ ազնվական դասակարգի մեջ մտան. թափափորները, իշխաններն ու նախարարները սիրում էին կոչվել Արշակունի ու Սասանյան արքայական տների անուններով: Ասորական, եբրայական և հունական անունները կրոնական դասակարգի մեջ մուտք գործեցին նախապես և նրա միջոցով տարածվեցին ժողովրդի մեջ: Դրա համար է, որ երբ մեկը ընդունում է կրոնական կոչում, նրա աշխարհական անունը (մանավանդ եթե հեթանոսական է) հանում են և տեղը դնում կրոնական անուն, որ լինում է հունական, եբրայական կամ ասորական: Այսպես՝ երբ Տրդատը թողեց արքայական գահը և ճգնավոր դարձավ, կոչվեց Հովհաննես: Ռուբինյանց Հեթում սպարապետը երբ թողեց սուրը և վանք մտավ, կոչվեց Անտոն: Այս սովորությունը շարունակվում է մինչև հիմա: Հայ ազգային անունները գլխավորապես Կոստանդնուպոլսում հնարվեցին և կամաց-կամաց դեպի Արևելք տարածվեցին, որը ես ձևվեցի (Կոստանդնուպոլիս, 1876 թ.) կարծեմ երկրորդն էի, որ Հրաչյա անունն ստացա. մինչդեռ այժմ Հրաչյա անունը սովորական է դարձել: Եթե գնանք մի խուլ գյուղ, մեր լսած սովորական անունները պիտի լինեն եբրայական, հունական և թյուրքական անունները. իսկ բուն հայկական, պահպանական, եվրոպական, ռուսական և հայ ազգային անունները՝ հազիվ երբեք: Մինչդեռ Կոստանդնուպոլիս, Երևան և ուրիշ կրթված կենտրոններ (Թիֆլիս, Զմյուռնիա), առաջիններն արդեն անգործածական են դարձել և ավելի այս վերջինները գոյություն ունեն:

(Շարունակելի)



II. ԵՐԵՄՅԱՆ

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՋ ՍԱՐԳԻՍ ՊԻՇԱԿ

(14-րդ դար)

3. ԿԵԼԵՅԱՆ ԱՐՈՒՆՍԱԿԵՏԸ

Կելիկյան հայ հոյակապ նկարչական արվեստի ամենից իրապաշտ, փայլուն և խնքնատիպ դեմքերից մեկն է Սարգիս Պիժակը, որ ապրել ու ստեղծագործել է 14-րդ դարի առաջին կեսում: Ռուբինյանց շրջանում հանդես գալով ստեղծագործական ասպարիզ, նա հայ մանրանկարչական արվեստի ըստ պատշաճության արաահայտիչն է հանդիսանում, իսկ իր վրձինով Դրազարկի և Սահ արքայական դպրոցի «գերահամբաւեալ» և յոյժ հմուտ նկարագրութեան արուեստի» ոչանաւոր մանրանկարիչը, դիմանկարիչը, գրաֆիկ նկարիչը, ոսկողը և զարդանկարիչը հուշակվում: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ռուբինյան մանրանկարչությունն, իր ծագման փայլուն նվաճումներից հետո, ապրում էր իր վերջին շրջանը, ուր ցոլանում է նաև Սարգիս Պիժակի պայծառ կերպարը: Առհասարակ, նրա կյանքի ու նկարչական գործունեության շրջանն ամբողջովին ընդգրկում է կելիկյան միջնադարը և դրանորում ժամանակի տիրող գեղարվեստական իրականությունը:

Նշենք մի կական հանգամանք ևս—Պիժակի վրձինի արտագրություններն, իրենց ինքնատիպ ոճով, ժանրով և ստեղծագործա-

կան տեխնիկայով վկայում են, որ նա լավ է տիրապետել նկարչական արվեստի բազմազան ձևերին ու միջոցներին, իսկ նկարչի արվեստի ամբողջ կոմպոզիցիոն (կապ-մոխյան) կառուցվածքը և ժանրային ու ոճային առանձնահատկություններն ընդգրծում են նրա ստեղծագործական խոշոր ձիրքի մասին: Այդ արվեստում ցայտուն կերպով դրսևորվում են նաև հայ բազմահարուստ նկարչական մշակույթի լավագույն ավանդները:

Անժխոտելի է և այն, որ Սարգիս Պիժակի ստեղծագործական վրձինի համարձակ թռիչքն ու որոնումները մեծապես նպաստել են նրան արվեստի յնագաժառուժ կերտելու իր խնքնատիպ նկարչական դպրոցը, իր ուրույն ու վճիռ մանրանկարչական ոճը: Առհասարակ, բազմազան են այն ծառայությունները, որ նկարիչը մատուցել է հայ արվեստին:

Ապրելով և գործելով «մեծափառ և հրաշակաւոր տնապաւտ» Դրազարկում ու մայրաքաղաք Սսում, նա ոչ միայն պայքարել է հանուն հայ մասնագիտական մանրանկարչության պարզացման, այլև որպես իր կոշման բարձրության վրա կոպտած մանրանկարիչ՝ իրական կյանքը պատկերող իր մանրանկարներով և պծային նկարներով նշել է, թե նկարչության հիմնական նպատա-

* Շարունակված ամսագրի 1953 թվականի անպատեմքերի համարից:

կը պիտի լինի կյանքի պատկերումը: Նա առաջ է քաշել ռեալիստական արվեստի անհրաժեշտությունը: Այդ հասկացողությամբ էլ նա վրձինն է իրական կյանքը զրսնորով մի շարք մանրանկարներ, որոնք ուշագրություն են զրավում իրենց գեղարվեստական արժանիքներով:

Այդ նկարներն առաջին հերթին փայլում են իրենց պարզությամբ, հստակությամբ ու նոր բովանդակությամբ: Պիժակը հայ առաջին նկարիչներիցն է, որ վրձինն է ոչ միայն ժողովրդի հասկանալի ու հարազատ նկարներ, այլև նրան մատչելի արվեստով: Այդ նկարներով նա հանդես է եկել որպես հա-



Կիլիկյան հովիվներ

Մանուսկար Սարգիս Պիժակի

սարակական նկարիչ, որն ամբողջովին համակվել է դարաշրջանի գեղարվեստական առաջավոր գաղափարներով: Այդ մանրանկարներով նա հանդիսացել է նաև իր ժամանակի մանրանկարչության դրոշակակիրը: Առհասարակ նա իր վրձինով մեծապես դարձել է սով. ռուսիայան շրջանի ռեալիստական նկարչությանը, հանդիսանալով նրա տաղանդավոր մի ներկայացուցիչը:

Սարգիս Պիժակի արվեստի մի այլ կարելիոր առանձնահատկությունը նրա ինքնուրույն անմիջականությունն է: Նրա մանրանկարներն իր անձնական և հասարակական ապրումների ու մտածումների գեղարվեստական արտահայտությունն են: Նա իր

ստեղծագործական հղացումները ո՛չ միայն զարմանալի վարպետությամբ կարողացել է նկարչական երանգների հիասքանչ ներդաշնակությամբ վերարտադրել և այնքան ներթափանցիկ դարձնել, որ սակայն երաժշտության միջոցով կերտել է գեղեցիկ մանրանկարներ: Խորացնելով նրա մի շարք մանրանկարների մեջ և այնտեղ պիտի տեսնեք արվեստի ներուժը, գեղեցիկ ճաշակ, հարուստ կոմպոզիցիա, ներդաշնակ գույների երաժշտություն, լուրահատուկ ոճավորություն, գունագեղություն, միաժամանակ մտքի խորություն և բանաստեղծական պատկերավորություն, հատկանիշներ, որոնք կազմում են Սարգիս Պիժակի մանրանկարչության հմայքն ու գեղեցկությունը:

Պիժակի բազմաժանր ստեղծագործությունների մեջ գրավիչ են նաև խոսուն և արտահայտիչ դիմանկարներ: Այդ հանգամանքը վկայում են նրա գծած մի շարք դիմանկարներ: Նրա վրձինի շնորհիվ է, որ այսօր ծանոթանում ենք 14-րդ դարի հետաքրքիր և պայծառ կերպարների հետ: Այնտեղ հանդես են գալիս թագավորներ, թագուհի, կաթողիկոս, զինվորականներ: Այնտեղ երևում են Ռուբինյան հայոց արքան՝ Լևոն Դ-ը, ժամանակի Հակոբ Բ. կաթողիկոսը, Կոստանդին Բ. ի կինը՝ Մարիոն թագուհին:

Նշանակալից է և այն, որ նկարիչը հասարակական բարձր դասի տիպարների հետ նկարել է նաև ժողովրդական խոնարհ դասի կերպարները — հովիվներ, անապատականներ, կանացի դեմքեր: Դա Պիժակի ստեղծագործության ուշագրավ հատկանիշներից մեկն է:

Փաստ է, որ միջնադարյան հայ նկարիչներից շատերն իրենց վրձինի նյութ շեն դարձրել ժողովրդի չքավոր դասը: Պիժակն առաջիններից մեկն է, որ սիրելի և գնահատել է ժողովրդական հասարակ տիպարները: Եվ դա հասկանալի է ու քնական: Իրեն իսկական նկարիչ, իրեն իր կոշման բարձրություն վրա կանգնած արվեստագետ, Պիժակը չէր կարող անտարբեր մնալ ժողովրդի պարզ և հարազատ կերպարների նկատմամբ: Նա գծել է դիմքեր, որոնք բնության և աշխատանքի հարազատ դավաններ են:

Պիժակի նկարչական արվեստի շնորհիվ էլ այսօր ծանոթանում ենք ո՛չ միայն ռուսիայան հասարակության տարբեր խավերը պատկերող քնորոշ արտահայտության հետ, այլև ցայտուն դադափար ենք կազմում դարաշրջանի տեղական տիպիկ գեղեստների մասին:

«Հասարակ գեղատույն թագաւորին, այլև ղ ժողովրդականաց՝ ցուցցէ մեզ, — կարդում ենք Զ. Ղևոնդ Ա իշխանի «Միութեան»:

ում,— պատկեր նկարեն (... ի ծանօթ նկարչէ՝ Պիժակ Սարգսէ, որոյ էր և պատկեր Աւետարանին Դրագարկի), յորում թերևս պատուականանադոյն քան զգնատուցն գրելի է մեզ ցուցակութիւն կերպարանաց (ևսն Դ., որդւոյն Օշնի, որ աներկրայօրէն իսկական կենդանադիր է թագաւորին, նկարեալ յամի 1331, յորժամ էր նա ամաց քսան և երկուց կամ երեց» (էջ 481)։

Ահա թե ինչու Սարգիս Պիժակի մի շարք նկարներն ունեն ոչ միայն նկարչական, այլև ազգագրական մեծ արժեք։ Առհասարակ, նկարչի վրձինի արտադրութիւնները, իրենց ինքնատիպ արվեստով, մանրանկարչական ուշագրավ ստեղծագործութիւններ են և կիլիկյան զնգարվեստի մեծ արժեք ներկայացնող նկարների շարքում կարող են ուրույն տեղ գրավել։

4. ՆԿԱՐՁԻ ՍՆՈՂՆԵՐԸ

Սարգիս Պիժակի ծնողների մասին, դժբախտաբար, կենսագրական շատ քիչ տրված լայնէր կան։ Նրանց անուններն արձանագրված են 2. Ղևոնդ Ալիշանի «Սիսուան»-ի մեջ (1885 թ.) 236-րդ էջում, ուր կարդում ենք — Գրիգոր Բահանայ — կիճէ Զեղինէ։

Զեռագիր մատյանների հիշատակարաններին գիտենք նաև այն, որ նկարչի հայրը՝ Դանդիսացի է իր դարաշրջանի զնգարվեստական ձերքով օժտված վաստակավոր մշակներից մեկը։ Հասարակական կյանքում նա փայլել է ոչ միայն որպես «պատուական վարժապետ», այլև երաժիշտ, որի հոբելանս ներքին եղանակները տարածվել են ժողովրդի լայն խավերում։ Նա հռչակվել է նաև որպես ճարտար գրիչ և դրական արվեստի գծով արել է ուշագրավ նվաճումներ։ Այդ մասին վկայում են նրա ավանդ թողած ձեռագիր մատյանները, որոնք վայելուղ գրութիւն զնգեցիկ նմուշներ են։ 14-րդ դարի այս արժեքավոր արվեստագետի մասին

Անժխտելի է և այն, որ Սարգիս Պիժակը, որպես նկարչության յավազույն դրոշակակիր, միայն մեկ գերագույն նպատակ է ունեցել — հայ մանրանկարչության զարգացումն ու վերելքը։ Այդ գիտակցութիւնը էլ նա վրձինել է նկարչական արվեստի նոր և արժեքավոր էջեր։ Նույնպես անժխտելի է, որ նա իր բովանդակային գործունեութիւնը և հարուստ ստեղծագործութիւնը ազդեցութիւն է գործել հայ նկարչական արվեստի զարգացման ընթացքի վրա։ Պարզ է և այն, որ նա մեկն է ուրիշիան զարաշրջանի արվեստի վերածնութիւն ակնաւոր կերտողներից, որի մանրանկարչական ժառանգութիւն հարուստ փորձից, տեխնիկական միջոցներից ու նկարչական ինքնուրույն արվեստից երիտասարդ նկարիչները կարող են շատ քան սովորել։

2. Ղևոնդ Ալիշանն ընդգծել է այսպիսի բնորոշ տողեր.

«Ընդ այն ժամանակս էր պատուական վարժապետն և երաժիշտն, և առաջին Բաբուղարն Սոյո Գրիգոր, ու մակ հույն, որ ասեն թէ մոմ գնէր յականջն՝ առ ի յսել զդրանս աշխարհականս, վասն այն կոչեցաւ խոյլ. որ ճարձ գաւելորդն, և զպական լցոյց զՇարականին. որ նոյն սրինակքն կոչին խլկի. զոր ստուղնալ է նորա, և են Սոյո բուն կոչեցեալ։ Միս ևս արուեստ ներայւոր խլին՝ Բաբուղարուրիւն կամ զԴուրիւն յոյժ ի պատուի էր և քաջ յաջողեալ ի Սիսուան, ի դրան արքունի և ի վանորայս, որոյ և կենդանի իմն վկայք մնան ձեռագիր մատնանքս»։ Ահա այս արվեստագետ հոգեւորականի արժանավոր դասակն է Սարգիս Պիժակը, որ իր զնգարվեստական գործունեութիւնը պատվավոր տեղ է գրավում հայ նկարչության, հետևաբար նաև մշակութային պատմության էջերում։

5. ԼՆՁՈՒԻ ՊԻՇԱԿԻ Է ԿՈՉՎՈՒՄ ՆԿԱՐԻՉԸ

Սարգիս Պիժակը պատկանում է մեր անցյալի այն նկարիչների շարքին, որոնց կյանքի վերաբերյալ եղած տեղեկութիւնները խիստ աղքատիկ են և պակասավոր։ Հայտնի չէ, ամենից առաջ, նկարչի ազգանունը, ոչ էլ ծնողյան և մանկան ճիշտ իմացանք։ Այդ առթիվ կան միայն որոշ տվյալներ, որոնց համաձայն նա ապրել է 14-րդ դարի առաջին կիսում։ Գիտենք նաև, որ վաստական կրթութիւն է ստացել և իրեն նվիրել թահանայական կոչմանը, իսկ իր իսկական անունն է Սարգիս։ Այդպես էլ արձանագրել,

է նա իր քահանայական ինքնանկարի վերին մասում, Հայտնի է նաև Սարգիս Նրեց անունով, իսկ իր գրած հիշատակարաններում իրեն կոչում է «սուտանուն», «Սարգիս Նուստ քահանայ», կամ իրեն նահմացում է որպես «անարժան», «բարձրամեղ»։

Թե ինչպես է ծագել նրա «Պիժակ» մականունը, այդ մասին տալանդավոր բանաստեղծ և բանասեր 2. Ղևոնդ Ալիշանի «Սիսուան»-ի 517-րդ էջում կարդում ենք հետևյալ լուսարանութիւնը.

2. Ղևոնդ Ալիշան, Սիսուան, էջ 517.

«Թուի Սարգիսս այս նույն ինքն ծանօթն մեր ճարտար Պիծակն, և որդի հույ Փրիգորի քահանայի, զորոյ և մականուան ծագումն յայտնի է, որպէս թէ երբեմն յառնելն ծաղկի և ի նկարելն, պիծակ մի նստաւ հանդէպ նմա ի լուսամուտն, որ և շուտ նկարեաց զնա, զոր տեսնալ մերձակայիցն կարծեցին թէ պիծակն եկեալ Շատաւ. զոր ընդ ձեռքն վարելն նոցա զնա, ծիծաղեալ տէր Փրիգորն, ապա դի-

տացին զիրն, և զարմացեալ կոչեցին զնա Պիծակն:

Զուեննք այնուհետեւ Սարգիս Պիծակի րնտանեկան և տնտեսական դրութեան վերաբերյալ ճշգրիտ տվյալներ. Պարզ է միայն, որ իր կնոջ մահից հետո ձեռնագրովում է վարդապետ, ինչպես այդ երևում է արեղայական ինքնանկարից. Առհասարակ, նկարչի կյանքի հետ կապված որոշ հարցեր դեռ մնում են անորոշ և մութ:

6. ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿԻ ՄԱՍԻՆ

Հայ բանասիրության պատմության մեջ Սարգիս Պիծակի մասին կարդում ենք թեև հակիրճ, բայց ուշագրավ տողեր, որոնք իրենց բովանդակությամբ որոշ գաղափար են տալիս նրա գեղարվեստական գործունեու-

ղութ, Սարգիս քահանայ կամ արեղայ, որդին Փրիգորի քահանայի և Հեղինեայ. որոյ ճարտարութեան մատանց և կերպարանի դիմաց ցուցակ լիցի պատկերս այս՝ ճշգրիտ քաղափարեալ յաւետարանէն (1331 ամի). յորում նշանաւոր է և խաշմիշը դրօշ աշտարակի տաճարածէ շինուածոյն կամ բերդին. յաւելաք յեղերս պատկերի անտարանչին և գոմանս ի վարդուց նոյն գրոց. որ ի լուսանցս իջիցն, ի ստորե պատկերի Ս. Ղուկայ գրէ նկարին հակիրճ. «զՍարգիս անարժան քահանայ զծաղկող սուրբ ան. և զծն. յիշեա... Յաջողութեան Սարգսի յարուեստի նկարչութեան և ոսկելոյ՝ ցոյցք են և այլ ևս մատենաք... որսիսի են այլ աւիտաւրան գրեալ յամի 1334, ի նոյն Փրիգոր գրչէ առաջնոյ անտարանչին (որ յամի 1325), յորում նոյնպէս կոչէ զինքն «Սարգիս սուտանուն քահանայ... ծաղկող սուրբ տառիս և ոսկող»:

Տաղանդավոր մանրանկարչի մասին նպաստավոր կարծիք հայտնել է նաև արվեստագետ-բանասեր՝ Կիւրիկո Փարեգին Ա. կաթողիկոսը. «Կաթողիկոսարանի ցուցահանդեսը խորագրով հղվածում նա գրել է.

«Դրադարկիդ... Սարգիս Պիծակ քաղմափաստակ նկարիչ, որ ի միջի այլոց ունի նկարած լեոն Դ.ի, Յակոբ Բ. կաթողիկոսի և Մարիոն թագուհու պատկեր-

»: Կիւրիկոսյի նշանավոր վանքերի շարքում իր պատվավոր տեղն ունի Փրազադեր, որ 12—14-րդ դարերի Հայ մշակութային շարժման մեծ, գլխավորապես առմենատի գծով, խոշոր դեր է կատարել Այնտեղ ժամանակի վաստակավոր գործիչները՝ Սիմեոն, Վահան, Ավետիք (սյոգնահամբար նկարաչներ), Սահակաւոս վանական քահանան, Թորոս Զոռմկալեցիին և ուրիշներ իրենց գոած ձեռագրերով ո՛չ միայն զարկ են տվել Հայ գրչական արվեստին, այլև Հայ մատենագրության էջերը հարստացրել են նորանոր երկերով. վանքի նամարների ներքո էլ ուսել է և դաստիարակվել մի ամբողջ սերունդ. Թերևս րնգգծված երևույթներով էլ այստի բացատրել, որ Փրազարկն իր դպրոցով ժամանակին մեծ հռչակ ու համբաւ է վայելել:

Հայ իշխան

Մանրանկար Սարգիս Պիծակի

(Հայկ. ՍՍՍՌ Պետական մատենադարանի ձեռ. № 2027)

Թյան մասին: Այդ տեսակետից բնորոշ են 2. Ղևոնդ Այիշանի «Սիսուանաի 235-րդ երեսում սրձանագրված հետևյալ տողերը.

«Արժանի յիշատակի և ծանօթութեան է վերոյիշեալ ոսկողն և ծաղկող, այն է նկարիչ՝ անտարանչին գրելոյ յամի 1325, և նախալիշելոյն ևս անտարանչի գրելոյ յամի 1331, որ առ մեզս է, անթերի ամենայն մասամբ և պէսպէս գտնադեղ զար-



ները... շատ նշանավոր ու բազմաշխատ նկարիչ է»¹։

Կիլիկիո ժամանակագիր՝ Վահրամ Բարուհի եւ նկարչին սեղծ տողերով հիշատակում է այսպես.

«Սարգիս երկն՝ քնոտրգի Ստեփանոսի վահկացու, աւարտեալ է զգրութիւն հրաշագան եւ նկարագարդ գրոցն Արարածոց, զսկզբնատրեալն յաւուրս Բ. Լեոնի յանկելեալ յաւուրս Դ. Ինս»²։



Դավիթ մարգարե

Ստեփանոս Սարգիս Պիծակի

(Հավել. IIIII Պետական մատենադարանի ձեռ. № 2427)

Բանաձեւ եւեւ Հ. Ս. Էփրիկյանի «Բնաշխարհիկ բառարան» (Վենետիկ, 1902 թ.) ուր ընդգծված են հետևյալ տողերը.

«Տիշենք նաև սրբաւոր քահանայն Սարգիս Պիծակ՝ որ ժամանակին հայ նկարաց, ոսկողաց եւ ծաղկողաց մէջ առաջինն կրեալ համարուիլ։ Դրազարկ շէն եւ բարդաւած եղած է գրեթէ ժԲ. դարու սկիզբէն մինչև ժԳ. դարու կեսը»։

Սարգանք նաև քահաներ Կարապետ Հ. Բասմաշյանի «Հայոց ինն գեղարվեստի վարպետներ» խորագրով երկից հետևյալ տողերը.

1. «Հասկ», 1946 թ., № 12.

2. Ղևոնդ Ալիշան. «Սիրսուտ», էջ 317.

«Գործած է 1310—1334-ին. որդին է Խույ Գրիգոր քահանայի եւ իրավամբ «Շուշկաւորն» կոչված է մեր հիններեն. Գծած է կրոնական բազմաթիվ գրչագիրներու նկարները։ Ասոր ձեռքով զարդարված գրչագիր մը կգտնվի Կ. Պոլսո Խաւդյուղ Թաղին հայոց եկեղեցիին մեջ»։

Սարգիս Պիծակի արվեստը վերլուծել է նաև օրիորդ Սիրարփի Տեր Ներսեսյանը. որի՝ «Սիրոն» ամսագրում գրած «Հայ մանրանկարչության նկարագիրը ժԲ—ժԳ. դարում» շրջանին» խորագրով հոդվածից առաջ բերենք մի էջ.

«ժԳ. դարու վերջերը, ազնվապետական այս արվեստը իր տեղը կուտա ավելի ժողովրդական նկարագրով նկարչության մը. որուն լիուրի բարգավաճումը գործն է Սարգիս Պիծակի. Կարծես թէ ազգային ավանդության պատկանող եւ Կիլիկիա ապաստանած նկարիչները երբեմն ներմուծված արվեստը կվերածնի այդ թվականին փոքր ինչ տարրեր ձևով մը... Սարգիս Պիծակի դպրոցը ավելի կախորժի գործածել կապաղովկական տարազներու ժԲ եւ ժԳ. դարերու նկարչության ոճը ավելի ձկուն է։ Անհերք, իրենց կանգնազեղ ձևերով, թե՛ ավելի վայելուչ, եւ թե՛ ավելի պնդալիտուն կիցվածքներ ունին»³։

Չորս տարի անց, 1942 թվականին, օրիորդ Տեր Ներսեսյանն ավելի խորադնելով իր տեսակետը, «Հայաստանայց Եկեղեցի»-ում տաղանդավոր մանրանկարչի մասին գրել է.

«... Բայց Սարգիս Պիծակի եւ իր աշխատակիցներու ձեռագիրներուն մեջ մարգարիները գրեթէ չկան, բուսական եւ երկրաչափական մոտիվներն բաղկացած տառերը ավելի պարզ են... Սարգիս Պիծակի ոճը արևելյան դրոշմ մը ունի»⁴։

Այնուհետև, 1952 թվականին, Սիրարփի Տեր Ներսեսյանը, Հայեպոլում, կիլիկյան արվեստի վրա տված բանախոսության ընթացքում Սարգիս Պիծակի մասին ընդգծել է հետևյալը.

«14-րդ դարում՝ արդյունավոր աշխատանք մը ցույց կուտա Սարգիս Պիծակ. սրմե մեծ թիվով ձեռագիրներ մեղի հասած են։ Սարգիս Պիծակի համարվոր տարածված է նաև Կիլիկիո առժամանակներն դուրս։ Հայաստանի արևմտյան նահանգներուն միջ կգտնենք Սարգիս Պիծակի ձեռագրերն մի քանիսն»⁵։

¹ «Սիրոն», 1936 թ., № 7, էջ 216.

² «Հայաստանայց եկեղեցի», 1942 թ., № 1, էջ 91.

³ «Մարմարագ», № 2957, մայիս 30, 1932 թ.

Ահա՛ Գեղարվեստի խմբագիր և արվեստագետ Գարեգին Լևոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» խորագրով հատորը, որի 36-րդ էջում կարդում ենք.

«Հետևյալ 13-րդ և 14-րդ դարերում գեղարվեստական գրքի զարգացումն աչնպիսի բարձրության է հասնում, որ ո՛չ մի տեղ և ո՛չ մի ժամանակ չէր հասել Հայաստանում: Այս դարերը տվել են երկու խոշորագույն մանրանկարիչ արվեստագետներ՝ Թորոս Ռոսլին և Սարգիս Պիծակ, թե՛ մեկը և թե՛ մյուսը հայ գրքի մանրանկարչության արվեստը հասցրին իր գագաթնակետին, ինչպես՝ Հակոբ Դպիր, Ավագ Կիրակոս և ուրիշներ»:



Կալյու Հովնանուն
Մանրանկար Սարգիս Պիծակի

Արձանագրենք նաև Ռ. Դրամբյանի «Խնորոշումները, 1939 թվականին Մոսկվայում, ռուսերեն լեզվով հրատարակված «Ապոկալիպսիսի» Հայաստանի արվեստի պատմությունից» խորագրով գրքում (էջ 19—23) նա գրել է.

«Սարգիս Պիծակի մանրանկարները (մինիատյուրները) համեմատաբար ավելի կոպիտ են, չոր և անկյանք, Ալքի խփում են մարդակազմական սխալները, միշտ չափազանցող կերպով մեծ են գլուխները: Սարգիս Պիծակն իր ժամանակին եղել է հայտնի նկարիչ և, ինչպես հրեում է, շատ արդյունավետ: Նրանից զարդանկարված բավական ձեռագրեր են մնացել: Նա

ներկայանում է այն ժամանակ, երբ կիլիկյան արվեստը գտնվում էր իր անկման շրջանում: Անհասկանալի է, թե ինչի վրա է հիմնված այս փաստը, որ տրադիցիոն կերպով պահպանվում է մինչև օրս: Այս բոլորը անհասկանալի են»:

Նույն գրքի 23-րդ էջում Ռ. Դրամբյանն իր կարծիքն ավելի է զարգացրել.

«Ռոսլինից հետո եկող նկարչական սերնդի մեջ Սարգիս Պիծակն է. իր մասին արդեն հիշել ենք և որի աշխատանքն արդեն տալիս են կիլիկյան արվեստի անկման նշանները: Մենք կարող ենք լրիվ պատկեր կազմել բավականին միակերպ նկարչի մասին իր չորս աշխատանքներից, որոնք պատկանում են տարբեր շրջաններին, 1320—1352 և որոնք գտնվում են Կրեանում: Սարգիս Պիծակը հանդիսանում է շարունակողը կիլիկյան արվեստի այն գրաֆիկական ճյուղի, որին պատկանում է Մարտիրոս նկարիչը, Ավետարանի «Եզրի» նակը, որը գտնվում է Հայաստանի կերպարվեստի պետական թանգարանում, № 78, և Սարգիս Պիծակի հայրը՝ նկարիչ Գրիգորը, Պիծակը բավական միակերպ նկարիչ է, որը միևնույն ձևերն է օգտագործում: Նրա մոտ դիմքերը կատարված են կազապարային ձևով, մեկը նման է մյուսին, երիզված ուղիագծով: Նրա մոտ գույների ներդաշնակությունը շատ աղքատ է (երկնագույն, մոխրագույն, կանաչ), ոսկու գործածությամբ»:

Առաջ բերենք նաև երիտասարդ բանասեր Պերճ Էրզյանի քննողշումը: Պոլսում հրատարակվող «Սուրբ Փրկիչ» խորագրով ամսագրում «Հայ նշանավոր մանրանկարիչ Սարգիս Պիծակի անհայտ մեկ գործը» հոդվածում (1950 թ., Ա. տարի, № 9) նա գրել է.

«... Պիծակի արվեստը լի է խորանոր յղացումներով և գույներու հիանալի ներդաշնակությամբ... Պիծակի գիծերը քրեքույր են ու ակնահաճո, ոճավորված ծաղիկներուն և տերևներուն ու մոտիվներուն մեջ կան ալլազանություն, բայց ոչ մեկ տեղ չափազանցություն կամ խճուղում: Անզուգական այս արվեստագետը գույնի-րույալ լավ վարպետ մըն է միանգամայն... Ներկա գործին մեջ կտրապետին նախ ոսկեգույնը, ծիրանի կարմիրը, կապույտը և ձիթենիի կանաչի զանազան երանգավորումները, սրճագույնը, ճերմակը և ալյն: Պիծակ զարդանկարներու առնթքեր, մեծ վարպետություն ցույց տված է նաև մարդկային նկարներու մեջ»:

(Շառունակեյի)



ՆԱԿԱՆԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ,

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՑԻ ԴԵՐԸ ԽԱԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԵԿԵԼԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶԻՆ ՄԵՋ



այ երաժշտության պարզացումը դուզրնթաց է եղած հայ գեղարվեստի մյուս ճյուղերուն։ Մեր անցյալի մշակույթին ունինք շոշափելի կոթողներ, իսկ երաժշտությունը իր անցյալը ներկայացնող գեղջուկ երգերն ու հայ եկեղեցական նղանակները միայն տնի։ Այդ եղանակները բոլորովին անծանօթ պիտի մնային, եթե չգտնվեր անոնց բանալին՝ խաղերգության գաղտնիքը։

Եւնե 4-րդ դարու սկիզբն էր, որ քրիստոնեությունը Հայաստանի մեջ դարձավ պետական կրոնը, բայց մեկ ու կես դար մեր ժամերգությունները կատարվեցան օտար լիզվով։ Սակայն հետզհետե օտար ծեսը տեղի տվավ Հայ եկեղեցիի հարադատ ծիսակատարության առջև։ Այդ շրջանին, Կոբյունեն և Աղաթանգեղոսեն կհիշվին «հոգևոր երգեր»՝ սաղմոսերգություններս։

Երկար դարեր մեր հին վանքերը եղեր են նաև երաժշտանոցներ։ Երգը վանքերու մեջ առաջ միայն հիշողությամբ կտրվեր։ Հետագային ազավագումներու առաջը առնելու համար խաչատուր Տարոնեցիին կհորինե հայկական խաղաղությունը, որով գրի կառնվին մեր եկեղեցական երգերը։ Այս մասին կարևոր և հմտալից աշխատություն մըն է Կոմիտասի ռճայոց հին եկեղեցական երաժրությունը։ Կոմիտասի գիտական տեսարանական պրայտումներուն մեջ ամենակարևորներեն մեկը հայ խաղաղության հետադուրությունն է։

«Նազ» համարժեք է լատիներեն *neuma*-ին (նեումա), Այս խաղերը նախ կնմանեն արդի սղադրական դիրքերուն, բայց 10-րդ դարեն սկսյալ արևմտյան ժողովուրդները զործածեցին քառակուսի խաղեր՝ երկու կամ

չորս զուգահեռական դիժերու վրա։ Հետո քառակուսի «խաղերը» փոխվեցան բոլորածնի, և դիժերն այլ երկուքի կամ չորսի տեղ՝ հինգի։

Արևելքը մինչև 16-րդ դար պահեր է այդ խաղերը, որոնք սակայն քաղաքական աննպաստ պայմաններու բերումով մոռացության մատնվեցան։ Հետո հույներուն և ասորիներուն պես հայերն այլ դադարեցան որոշ ժամանակով իրենց սեփական խաղաղությունը դարձնելու։

Կիրակոս Գանձակեցի պատմիչը, խոսելով հայկական խաղաղության մասին, կհիշատակե խաչատուր Տարոնեցիի անունը, որ հայկական խաղաղություն կսորվեցներ ամեն կողմ շրջելով։ Վիեննայի համալսարանի արևելյան խաղերու մասնագետ պրոֆեսոր Վիլհելմ Կհաստատեն, թե հայկական խաղաղությունը ավելի հին է քան բյուզանդականը և թե վերջինս իրը հիմք ունի հայկականը։ Հայկական խաղաղությունը ծագում կառնե յոթներորդ դարեն։ Կկարծվի, թե մեր խաղաղության սկզբնական ձևը կազմած են քերականության մեջ դորժածիլոդ առողանության նշանները՝ բուրբ ('), շեշտը (') և սլարույկը (')՝ ծայնաստիճանի, իսկ երկայնն (") ու սուրը (°)՝ տնողության համար։ Այս առողանության խաղերը արևելյան ծագում ունին։ Հայկական այս խաղաղության մասին հիշատակարան մաղաղաթնիկ կան հնագույն շրջանին։

Հայկական խաղաղությունը մինչև 16-րդ դար մոռացության մատնված էր, բայց 19-րդ դարուն պոյսահայ Պապա Համար-ձում կիմոնճյան (1768—1830-ին) վերակենդանացուց դայն և ռստ Կոմիտասի, 198 խաղերն րնտրեց միայն 7 հատ (փուշ, էկորճ, վերնախաղ, բենկորճ, խոսրովային, ներքնա-

խաղ և պարույկ), որոնցմով ստեղծեց հայկական ծանոթ ձայնագրությունը՝ քե, խո, նե, պա, պո, նե, վե, բե: Հետո անոր աշակերտները՝ Ություխյան, Գարրիել Երամյան, Օհանեսյան և մանավանդ նիկողոս Թաշճյան¹ կշարունակեն անոր գործը և կկատարելագործեն զայն:

Խաղագիրները շատ հարգանքով կմոտենային երաժշտության խաղանշաններուն, այդ պատճառով ալ պատարագի երգեցողությունը, ժամագիրքն ու շարականները գրչագրած ու զարդանկարած են: Անոնք մեղեդիական արվեստի նկատմամբ անհուն սեր մը ունեին և անհուն երկյուղածություն մը: Այս պատճառով է, որ հինն մնացած խաղերը գրված են մեծ խնամքով, ծիրանի, կապույտ, կանաչ և այլազան գույներով պայծառացած, ոսկիի և արծաթի շողշողումներով գեղազարդված և զարդարված:

Սակայն, երկար ժամանակ, անհնար էր դարձեր թափանցել խաղերու գաղտնիքին, քանի որ, րյուզանգական և ասորական խաղագրություններուն պես, հայկականն ալ մատնված էր մոռացության:

Ձեռնարկելով հայ գեղջուկ երգի պատմական ակունքները գտնելու և հերևան ժողովուրդներու երաժշտության հետ դանոնք թաղդատելու դժվարին գործին, Կոմիտաս վարդապետի համար առաջնահերթ խնդիր էր դարձեր գտնել հայկական խաղագրության գաղտնիքը: Կոմիտաս իր ստեղծագործական կյանքի ամբողջ ընթացքին անընդհատ աշխատեցավ այդ ուղղությամբ: Այդ տեսակետով հատկանշական է Մակար Եկմալյանի պատարագի մասին ըրած իր քննադատությունը. «... Եղանակն ու տաղաչափությունը ուղղելիս, առաջնորդ ունենալ ձեռագիր պատարագամատուցները և հին խաղերը, որոնք անշուշտ ավելի խոսում են՝ մեռած լինելով, քան մեր արդի կենդանի մեռած ձայնանիշերը: Կոմիտաս, իր երաժշտական պրպտումներուն և ուսումնասիրություններուն ընթացքին՝ կդիմեր իր շնչավորած հայկական խաղագրության, Ուրեմն ան գտած էր խաղագրության գաղտնիքը—մտերմներու վկայությամբ, ինք ըսած էր արդեն, թե հայկական խաղագրության տառերեն 132 հատը գտած ու վերծանած էր ու մտադրած էր մոտ ատենին հրատարակել:

1915 թվականի աղետի հետևանքով Կոմիտաս չկարողացավ ավարտել նաև այդ խոշոր աշխատությունը, և հակառակ իր փափակին՝ չկարողացավ հրատարակել զայն: Այսօր Երևանի երաժշտական դիտահետա-

դատական՝ Կոմիտասի դիվանին մեջ գրտնրվող ներքոհիշյալ նյութերը² կպարտնապեն նաև այդ ասպարեղին մեջ Կոմիտասի ձեռք բերած այն հաջողությունները, որոնք կուված են բավական լույս սփռելու հայկական խաղագրության հիմնական խնդիրներու վրա և հիմք ծառայելու այդ ասպարեղին մեջ հետագա դիտահետադատական աշխատություններու:

Կոմիտասի դիվանին մեջ գեղեցիկ է նոր նյութերու ցանկը հետևյալն է.

1. Ժողովրդական երգեր, նոտագրված հայկական ձայնանիշերով, 236 էջ:

2. Հեքյարի և Մշո շորոր, դաշնամուրի համար, 18 էջ:

3. Շարական, հին եղանակ, 1905 թ., Ս. Էջմիածին, 140 էջ:

4. Արեւելյան թյուրքական եղանակներ:

5. Ձայնամարդություն, Ֆրից Ալբերտի, Թարգմանություն Կոմիտաս վարդապետի, Ս. Էջմիածին, 1904 թ., 64 էջ:

6. Շնկարագիր երգոցս Հայաստանեայց հեղեցուց, Ն. Մ. Տնտեսյանի, տպագիր, որուն մեջ կան Կոմիտասի նշումները և որուն հետ կազմված է նաև Ն. Շ. Թաշճյանի «Դասագիրք եկեղեցական ձայնագրություն հայոց»:

7. Խաղարանություն, բառերը՝ հանված հին հայկական ձեռագիրներեն և տպագրյալ գիրքներեն:

8. Անտիպ երգեր, Կոմիտաս վարդապետի, 65 էջ, ընդօրինակված բնագրեն:

9. Տարական երաժշտություն, սևագրություն, պակասավոր:

10. Տետրակ, իշումներ, խաղեր և անոնց նշանակությունը, գրված միայն սկիզբեն, 3 էջ:

11. Հոգևոր եղանակներ, 34 էջ, գրված են միայն սկիզբի 15 էջերը:

12. Խառն նյութեր, որոնց մեջ կան երգերու բառեր, քարոզներ, մանկական խաղեր,

1. Թաշճյան հղած է հորս ուսուցիչը 1870-ական թվականներում, Գում-գարուի Պեղեյան մայր վարժարանին մեջ:

2. 1951 թվականին պատվարժան պրոֆ. Աշոտ Արաճաճյանի միջոցով Բնյուրթեն ուղարկված Կոմիտասի նոր նյութերու դիվանական ծրարը արդեն կգտնվի: Երևանի երաժշտական դիտահետադատական կարենետի Կոմիտասյան դիվանային բաժնին մեջ, Տողևրս գրողը 1952 թվականի հոկտեմբերին մեծ հետաքրքրությամբ պրպտեցի այդ նոր նյութերը, որոնք եկած են ղգալիորեն հարստացնելու հանճարեղ Կոմիտասի անվան հետ կապված ազգագրական, երաժշտական, գիտահետադատական ուսումնասիրություններու, երաժշտական ստեղծագործություններու այն ձեռագրերն ու դիվանական նյութերը, որոնք մեծ խնամքով կպահպին Հայկական ՍՍՏ Գիտություններու ակադեմիայի Արվեստի պատմության ու տեսության բաժանմունքին մեջ:

հանելուկներ, մանկական դաստիարակության խորհրդավոր զրույցներ, խրատներ և հայոց նշանազոյներ:

13. Անշատ թերթերու ծրար մը, 53 էջ:

14. ռեթա ըսելով ի՛նչ կը հասկնանք, 3 պրականոց տետրակ մը:

Հայտնագործելով հայ երգի երաժշտական առանձնահատկությունները, Կոմիտաս նշեց է, որ հայ եկեղեցական երաժշտությունն ու գեղջուկ երաժշտությունը նույն հիմքերն ունին:

Կոմիտաս հայ գեղջուկ երգի ուսումնասիրության և մշակման զուգընթաց, առանձնահատուկ ուշադրություն է դարձուցնել նաև հայ երաժշտության վրա, զայն համարելով հայ երաժշտական մշակույթի կարևորագույն եվանտներեն մեկը:

Հայ եկեղեցական երաժշտության նկատմամբ Կոմիտասի ցուցարարած մասնավոր նետարբերությունը կակսի ճեմարանի ուսանողական տարիներին:

Կոմիտաս հայ գեղջուկ երաժշտության ստեղծագործության սկսել էր դեռ Բեռլինի իր ուսանողական տարիներին:

1899 մայիս 10-ին Բեռլինի երաժշտական միջազգային համագումարին մեջ Կոմիտաս կատարեց իր անդրանիկ դասախոսությունը, դերմաներեն լեզվով, նյութ ունենալով «Հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտությունը»: Այս ընկերության նիմնադիր անդամներեն մեկն էր ինք: Բեռլինի իր այդ դասախոսության մասին կզրեն. «Հայր Կոմիտաս համառոտապես նկարագրեց Հայոց եկեղեցու «Ռ՛վ դարմանալի», «Տէ՛ր, ողորմե՛ա» և ժողովրդական երգերից «Սոնալար», «Անձրեն եկա՛մ», «Ա՛յ տղա», «Հովարեք: Կոմիտաս վարդապետ երգեց յրդերեն, պարսկերեն և տաճկերեն երգեր, ցույց տալով համար նրանց և հայկական եղանակների միջև եղած տարրերությունը: Նա ցույց ուվեց, թե ինչպես է կարդացվում Հայոց Ոկեղեցում Ավետարանը, դրա համար նա կարդաց թի սկզբանէ էր բանն»: Ապա Հին Կտակարանի մարգարեների գրվածները, կամ սաղմոսները ինչպես են կարդացվում: Որդեց պանագան շարականներ և հայ ժողովրդական երգեր, նրանց համեմատությունն արավ: Ինչ ատթիվ դերման նշանավոր սրտի: Սակար Յուլյէրը գրում է. «Բեռլինի սիջազային երաժշտության ընկերակցության սրահին մեջ Կոմիտասի արտասանած դասախոսությունը հայ հոգեւոր և ժողովրդական երաժշտության մասին պիտի մնա անբնշխի մեր ամենքուս մտքերուն մէջ: Առաջին անգամն էր, որ Բեռլինի մեջ կունկնդրվելու նման դասախոսություն մը և թերևս ինչն հիմա ալ Փարիզի երաժշտական կու-

նադին մեջ անգամ չէ լսված այնպիսի պարունակի դասախոսություն մը»:

1914 թվականին Փարիզի միջազգային երաժշտական համագումարին մեջ Կոմիտասի ելույթը՝ հայ գեղջուկ և եկեղեցական երաժշտության մասին՝ ձայնողունավեցավ: Բացի այդ հայտնի է, որ Կոմիտաս ո՛չ միայն ձայնագրեր ու մշակեր էր հայ եկեղեցական երաժշտության գուհարները, այլև քաղմածային վերածելով անոնցմե շատերը, դանտիք իր համերգային հայտագրերուն մեջ մտցուցեր էր:

Հատկապես ուշագրավ է Կոմիտասի մշակած ու րադմածայնած պատարագը՝ Մեջ մեջ պատարագի երգեցողությունը՝ երգաշնակողներեն տաղերը եղավ Կարա-Մուրզան (1854—1905): Ան շահեք շինայից իր քառածայն պատարագը տարածելու, հակառակ մամուլ ընդդիմադիրներն ունենալուն: Կարա-Մուրզայի այդ գործը ունի գեղարվեստական նախնական քնույթ, Կարա-Մուրզային հետո պատարագը խառն խումբի համար քառածայն էր Գեորգ վարդապետ Զորեցյան (Ամենայն Հայոց Վեհափառ Գեորգ Զ. Կաթողիկոս), որուն աշխատանքը քարծորեն ղեկավարվել է Պետերբուրգի երաժշտանոցի վարչությունին, բայց զծրախտարար նյութական պատճառներով մնացել է անտիպ:

Հետո սուրբ պատարագը դաշնակորույց եղավ Կարա-Մուրզայի ժամանակակից Մա. կար Նկմալյան, որ ավարտած ըլլալով Պետերբուրգի երաժշտանոցը, իբր հմուտ երաժիշտ դաշնավորեց պատարագը՝ երեք տեսակ. ա) եռածայն՝ արական խումբի համար, բ) քառածայն՝ արական խումբի համար, գ) քառածայն՝ խառն խումբի համար: Սրեքն ալ, 1896 թվականին Լայրցիգի մեջ տպագրվեցան Գրիգոր Միլունյանի մեկնեմատությամբ:

Արեմտահայոց մեջ առաջին անգամ սուրբ պատարագը քաղմածայնեց Զուհանյանի և Ռաշնյանի աշակերտ Լեոն Զիլինկիրյան, երկու տեսակ. ա) եռածայն՝ արական խումբի համար և բ) եռածայն՝ խառն խումբի համար:

Եւան տակավին հնդկահայոց քառածայն պատարագը՝ սրիորդ էմի Արզարյանի, Զուհանյանի միջոցը քառածայնն ու Մխիթարյան հրատարակությունը՝ Զ. Մովսես վարդապետ Սրապյանի:

Փառարագի բոլոր այդ դաշնավորումներու հիմնական թերությունն այն է, որ, ինչպես Կոմիտաս կնշել, անոնք չեն գոհացնել հայ

3. Վեհափառի մեջ տված տեղեկության համաձայն առաջիկային լույս պիտի ընծայվի իր քառածայն պատարագը, խմբագրությամբ կրթարագետ գիտնական Մուշեղ Աղալյանի:

երաժշտության յուրահատուկ պահանջները: Այս պահանջները գոհացնելը անհրաժեշտ խնդիր է հայ եկեղեցական երաժշտության համար, քանի որ այնտեղ յուրաքանչյուր եղանակ ունի տարրեր բնույթ ու տարրեր բովանդակություն: Թե ո՞րքան խստապահանջ էր Կոմիտաս այդ տեսակետեն՝ այդ կերևա այն դրախտականներեն, որ ան ժամանակին գրեր է Լևոն Զիլինկիրյանի և Մակար Եկմալյանի բազմաձայնած պատարագներու մասին:

Զիլինկիրյանի եռաձայն պատարագը երբ Կոմիտասի կղզկվի որպեսզի իր դիտողություններն ընեն, ան կգրեն. «Այս բոլորի մեջ, և թե՛ կա, հայկական տարրն այնքան շնչին է, որ առանց ցավելու, կարելի է մեկ կողմ դնել, ուրիշ կողմը չնք լինի»:

Եկմալյանի դաշնավորած պատարագի հրատարակության առթիվ Կոմիտաս Բնույնեն գրած է խիստ քննադատական մը («Արարատ», 1898, էջ 111—117), ուր, ի միջի այլոց, կրսե, թե «Բազմաձայնությունը Հայնորի ծնի չէ»: Եկմալյան պատասխանած է Կոմիտասին համակ կիրք եղող բաց նամակով մը: Կոմիտաս իր այդ հոգվածին մեջ կգրեն. «Մի՛ մոռանաք և այն, որ ճշմարիտ արվեստագետը օրենքների ստրուկ չպիտի լինի. օրենքը կարող է ծառայել միայն իբրև ուղեցույց, ստեղծագործություններն օրենքից լին ըխում, օրենքն է ըխում նրանցից»:

Մոտենալով հայ եկեղեցական երաժշտության ստեղծագործողի հմտությամբ, Կոմիտաս նախ կրացահայտե այդ երաժշտության օրենքները և ապա անոնց վրա կկառուցե իր յուրաքանչյուր բազմաձայն դաշնավորումը: Կոմիտաս խորապես զգացեր էր ու գիտակցեր այդ գործի լրջությունը, և տարիներ շարունակ անձնուրաց կերպով կաշխատեր իր պատարագի մշակման ու վերամշակման վրա: Պատարագը ան քառաձայններ էր իր էջմիածնական տարիներեն և երգել կուտար զայն հանգիսավոր օրերուն, սակայն անդադար փոփոխություններու կենթարկելու:

Կոմիտաս դեռ իր վերջին խոսքը շէր ըսած իր պատարագի մասին, երբ 1915-ի աղետը

եկավ վերջ տալու իր մշակած ծրագիրներուն:

Կոմիտասի թերաժարտ քառաձայն պատարագը փորձեց ամբողջացնել իր աշակերտներեն Վարդան Սարգիսյան, հրատարակելով զայն 1933 թվականին Փարիզի մեջ, Հայկահյուն Վարդանյանի մեկենասությամբ:

Կոմիտաս, իր «Երգեցողութիւնք սրբոյ պատարագի Հայաստանեայց Եկեղեցւոյ» դրոժին մեջ, հայկական երգին տալով եվրոպական կանոնավոր չափ, պահած է անոր հատկանիշները ամբողջությամբ, գործածած է հայկական միջնորդ, ուր կիսաձայնամիջոցները կտարբերին եվրոպականեն: Մեղեդիական կշռույթներու պեսայիսությամբ, հայկական ոճի գունավեցությամբ հարուստ և ամեն մի քայլափոխի անակնկալ քաղցրություններով կրկնապես դրավիչ հոյակապ գործ մըն է Կոմիտասի քառաձայն պատարագը:

4. Պոսահայ ժողովուրդը, 1911-ին սկսյալ, ազգային-եկեղեցական մեծ տոներու առթիվ հաճախ վայելի է Կոմիտասի քառաձայն պատարագը՝ հեղինակի խմբավարությամբ և երգակցությամբ: Հիշողությանս մեջ թարմ է անոր վերջին պատարագը: Կոմիտաս, աջսորեն վերադարձին, 1915-ի ամառը, կիրակի օր մը, իր վերջին պատարագը կմատուցաներ Գում-Գարուի Մայր Եկեղեցին մեջ: Կոստանդնուպոլսո ամեն թաղերեն այնտեղ խանված հավատացյալներուն մեջ կային հարյուրավոր հայ և օտարազգի ակաճավոր երաժշտագետներ, որոնք եկած էին Կոմիտասի ներգաղնական քառաձայն պատարագը լսելու: Այդ օրվան Կոմիտասյան քառաձայն պատարագը, նամանավանդ «Հայր մեր» և «Տէր, ողորմեա՛ն առհավետ անմոռանալի պիտի մնան» — Գում-Գարուի Մայր Տաճարին մեջ հանդիսավոր սուրբ պատարագ կմատուցվեր: Կպատարադեր խնջը՝ Կոմիտաս, աջսորեն վերջ իր առաջին ու զժրախոտաբար վերջին պատարագը, որը եղավ անոր կարուպի երգը: Վարք, դասեն, դպիրներու բաժինը կերգեր անոր 60 հոգինոց երկսեռ երգչախումբը: Այդ օրվան Կոմիտասի քառաձայն պատարագի ղեկավար երաժշտությունը եկավ անգամ մը ևս վիճելու, որ անոր քառաձայն սուրբ պատարագը ոչ միայն անկրկնելի գեղեցկություն մըն է հայ երաժշտական արվեստի մեջ, այլ նաև լիքնազանցված նվաճումներին մեկը հայ եկեղեցական երաժշտության:





ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հ. ԱՐԱՄՅԱՆ

Վ. Ա. Ր. Պ. Ե. Տ. Ը.

(Ավետիք Խաճակյանի ծննդյան 78-ամյակի առթիվ)



Արավոր հարուստ մշակույթի տեր հայ ժողովուրդը մի առանձին խմաստ է ղնում «վարպետ» բառի մեջ, իբրև ստեղծագործ շինարար, հմուտ մարդու անուն, որի ձեռքով ստեղծվել և ստեղծվում են մեր վեհանիստ, ցեղատեսիլ շենքերը, տաճարները, պատմական հուշակապ կոթողները:

«Վարպետ» բառը, որ հասարակ անուն է ինչպես մեր, այնպես և աշխարհի բոլոր լիզուներում, այժմ մեզանում դարձել է հատուկ գոյական անուն այն մարդու, որն իր տաղանդի մեծ ուժով կերտել է հայ ժողովրդի անվերադարձ անցյալի «երգերն ու վերքերը» նրա իղձերն ու ցանկությունները, ինչպես և նոր Հայրենիքի վեհությունն ու երջանիկ առօրյան արտացոլող ստեղծագործությունները:

Առօրյա խոսակցությունների մեջ, Ավետիք Խաճակյան անուն-ազգանվան հետ համահավասար, «վարպետ» կոչումը գործ է ածվում որպես այդ անուն-ազգանվան հոմանիշ:

«Վարպետի նոր քանաստեղծությունը կարդացի՞ր»:

«Վարպետը եկի՞ր համերգի»:

«Վարպետին տեսա՞ք այսօր»:

Այսպես են ասում մարդիկ, և բոլորն այդ բառով հասկանում են՝ «Ավետիք Խաճակյան»:

Մեր քանաստեղծների նստավայրի վայելած անսահման ժողովրդականության ամենազայտուն արտահայտություն է այս:

Վարպետի վայելած այս համատարած սիրտ և հարգանքի, մեր գրականության և ողջ մշակույթի պատմության մեջ ցարդ շտեմարված այս ժողովրդականության առկայությունը մեր Հայրենիքում՝ ևս տեսել, զգացել, համարյա շոշափել էի ղեռ ավելի քան ութ տարի առաջ՝ 1945 թվականի ամառնամուտին, երբ ժամանակավորապես եկել էի Հայրենիք ազդային-եկեղեցական համագումարի կապակցությամբ: Եվ այդ՝ մեկն էր այն բաղմամբով պայծառ երևույթներից, որ տեսնում էինք մեր նորաստեղծյալ հայրենի երկրում, մեկն այն երևույթներից, որ խիստով ու խանդավառությամբ էին լցնում իմ սիրտը:

Հունիսյան արևաշող մի առավոտ ավտոբուսով մեկնում էինք մեր մայրաքաղաքից էջմիածին: Սիրտս արտակարգ խռովոյ էր ցնծության մեջ էր — այդ օրն առաջին անգամ պիտի տեսնեի Վարպետին...

Իրենան — էջմիածին ամբողջ ճանապարհին սրտիս հետ միտքս էլ զրադված էր Վարպետով: Փորձում էի ինքս ինձ գտնել, վերլուծել նրա ժողովրդականության բոլոր պատճառները: Կողքիս նստել էր Աշուղ Զիվանու որդին՝ հայտնի գրականագետ-բանասեր Գաբրիել Լևոնյանը, որի հետ նախորդ օրը ծանոթացել էինք հյուրանոցում:

— Ինչն է, Ձեր կարծիքով, Վարպետի ժողովրդականության գաղտնիքը. — հարցրի պրնի գրականագետին:

— Վարպետի ժողովրդականության ակնադրյուրը՝ իր ժողովրդայնությունն է, — պատասխանեց Լևոնյանը լակոնիկաբար:

«Եվսփ է ասված, սեղմ և արտահայտիչ — մտածեցի ես, — բայց լրիվ բացատրություն չէ, չի լիացնում միտքը, չի բավարարում»։
Հետո տարվեցի Արարատյան դաշտի շքեղանքով, տարվեցի կապույտ, վճիտ երկնքի մեջ իր ադամանդափայլ բաշը մխրճած Մա-

Արագածի զմրուխտ կանաչի ու ծաղիկների հետ... Կարծես բնությունն ինքն էլ է ոգեւայդ երգերը։

Վաղուց անցած-գնացած մանկության խորքերից, ինչպես անմոռաց հուշ, մտքիս մեջ վերհասնել էին Վարպետի գրչից տող-



Վ ա Ր Ա Յ ե տ ր

սիսի մազնիսող տեսարանով ու մի պահ կարծես մոռացա ինձ հուզող հարցը, մոռացա Վարպետին... Բայց մի բույն հետո շրթունքներս մրմնջում էին Վարպետի սրբապարար երգերը, Ինչքան կապված անդրանք Հայրենիքի, նրա դյուքիչ բնապատկերի, մարդկանց, վեհափառ Մասիսի, պերճ

ված ջերմ, սրտահույզ մառերը ու շարահարվում էին մտքիս մեջ, գալիս էին շուրթերիս՝ որպես մրմունջ։

Մտքումս դրոշմվել, սրտումս պահվել — պահպանվել էին Վարպետի բանաստեղծությունները, արձակ էջերը, մանկությանս և առաջին պատանությունս տարիներից, իբր

«չ շատ օրեր անաչ առաջին անգամ տեսիլ էի տեսնում Մայր Արաքսը, գնացքի լուսամուտի առաջ, արտատրոփ և ակնապիշ դիտելով գետը, շշնջացել էի, Վարպետի քառերով».

«Մենք սարերեն, մո՞թ ձորերեն
Ուր-մոլոր կերթաս. Արա՞ք.
Ա՞յ սարեր, ջա՞ն սարեր,
Այմաստի՞ սարեր...»

Ավտորուսը ընթանում էր դանդաղ, որպեսզի արտասահմանյան «հյուրերը» կարողանային երկար վայելել հայրենի տեսարանները:

«Արտասահմանյան հյուրեր»-ը, այդ մե՞նք էինք... Հեռավոր դարերի «անխույզ խորություններից» եկող և տարիների ընթացքում (կրոնականի, նախադպրոցի, Բաֆֆու, Հովհաննիսյանի, Թումանյանի, Իսահակյանի և շատ այլոց արվեստի շուրջը իմ սրտում ստեղծված հմայքը, ներկա Հայաստանի շքեղափայլ ու ողևորիչ պատկերի առաջ ընդունված իմ հայրենասիրությունը ընդլզում է այդ որակումի՞ գեմ... Իս՞ «արտասահմանյան հյու՞ր» իմ սիրելի, իմ հարազատ Հայրենիքում: Որոշում էի Հայրենիքիս մշտական ընկեր իմ քաղաքացի դասնայ ձեռք որ անարավոր լինելու:

Անհաղ հայացքով դիտում էի դուրս Մասիսները, այնինչ շրթունքներս շարունակում էին մրմնջալ հնօրյա դասադրերից՝ մտքումս և սրտումս մնացած ուրիշ տողեր՝ Վարպետի վսեմական ընտրից.

«...Մոթ անտառում լուռ մահ կուզում,
Յողը կը շաղէ ծառերին.
— «Ա՞յ, խնդ՞ մղղա, վերքըդ խորն է.
Վերադ կուզանք...» — ինձ կրսեն...»

Ինչքան պարզ, ինչքան ջերմ ու առօրյա կան էին այս տողերը և ինչպե՞ս համապատասխանում էին ջարդի և աքսորի ճանապարհներից նոր վերադարձած պատանայակի իմ թախծալից տրամադրություններին:

«Վարպետի ժողովրդականության ուղևորությունը յուրաքանչյուր հայի կույրան մեզ է» — եզրակացրի ես՝ գիտ տուննց հրաժարվելու լրիվ բացատրություն ունեցող և ցանկությամբ նպատակադրումից...:

Վեհարանի դա՞շիհում Գարեգին էրենյանը ծանոթացրեց ինձ Վարպետին:

— Մենք արդեն ծանոթներ ենք. — ասացի ես:

Վարպետը կիտեց ինձ ու քաղաքացիները, կկոպեց աչքերը և ուշադիր նայեց ինձ.

— Ի՞նչ եմք նախդպրոցի միմյանց, — հարցրեց Վարպետը իր հաճելի բարիամոտով. — չեմ հիշում...:

— Քանհիմա տարի առաջ, — պատասխանեցի լրջությամբ:

— Այն ժամանակ դուք երեխա պիտի լինեիք, չեմ կարող հիշել: Ո՞ր երկրում եմք նախդպրոցի...:

— Իմ դասագրքերում. — ասացի ես զգացված:

Վարպետը ժպտաց հայրաքար, անհուն քաղցրությամբ:



Ավետիք Իսահակյանի ստեղծագործություններում հաճախ հանդիպում ենք նրա խոսքերը, թե իր քնարը միալար է. ունի միայն մեկ հատիկ լար՝ սիրո լարը...:

«...Ես վեր եյա ոգի առած՝

Ջարկի սրտիս լարերին.

Սիրտս խնդաց, կուրծքս թնդաց —

եվ լարերը խզվեցին...»

— Միայն սիրո լարը մնաց

Սրտիս անհուն խորքերում.

Ու վառ սիրո երգը շուրջ

Կյանքիս ամեն ծալքերում...»

Մանթանալով Վարպետի ամբողջ ստեղծագործությանը, նկատվում է, որ այդ սերն էլ հենց նրա սամբոզ քնարն է, որովհետև Վարպետի մոտ «սեր» բնորոշումը համալսապարպակ է, սիրո զգացումը ընդգրկում է ամբողջ մարդկությունը՝ իր բոլոր հույզերով ու խոհերով, բովանդակ տիեզերքը իր բոլոր երևույթներով: Ոչ ոք այնքան ջերմ ու անմիջական տաղերով չի երգել մայրական սերը, սերը դեպի կին լակը, սերը դեպի ընկեր մարդը, սերը դեպի ծննդավայրը, դեպի Հայրենիքը, սերը դեպի բնությունը, սերը դեպի ամեն շնչող և անշունչ լակ և իր, որ կա աշխարհում՝ փոքրից մինչև մեծը: Վարպետի մոտ սերը հեռու է սահմանափակ չի ներկայացնում, տիեզերական ընդգրկում ունի: Այնքան սրտառու, մտնամիկ բառերով իր մոտ մոտ զարդը լացող, այնքան նեղ անձնական զգացմամբ իր «Շուշանին» սիրո քաղցր խոսքեր շշնջացող քանադասներ կարողանում է նաև, խորասկզբով բոլոր սահմաններ, թնամել տիեզերական անհունություններին մեզ:

Փոքրիկ սողներով, փոքրիկ տաղերով սիրող, քնքուշ զգացումներով բարին, ազնիվն ու զնգեցիկը դուրսդուրով քանադասներ գիտն նաև ատենությունների թույլ խոսքերով, բացավառ «ստորահինքով» մտքակալ մարդկությունը տառապանքնող բռնականներին, ծառանալ կեղևներումներին, կեղծիքի և կապանքներից ցնձ-հանդիման, յուրաքանչյուր (ուներու-

(Լալա-Մահարի)։ Այդտեղ էլ ատելության փոթորկալույն շառաշուտի միջից վերջին «աշվով սեղն է պոռթկում» անհուն տերը՝ դեպի ազատությունը, սերը դեպի «արևը», որն այդ պոռթում ունի առանձին, խորհրդավոր իմաստ՝ մարդարեաշունչ բանաստեղծի պայծառատեսությամբ ընկալված, ըմբռնված...

Քնքուշ, մտերմաշունչ լիրիկը, որպիսին է Վարպետը, ուժ ունի դառնալու նաև հզոր դյուցազնեղբայր՝ ինչպես «Սասմա Մհեր» պոեմում։ «Ռամկի», հասարակ աշխատավոր ժողովրդի հանդեպ իր անսահման սիրո ամենացալստուն արտահայտություններից մեկն է այս էպոպեան՝ նորից սեր, նորից սիրո լարը, միշտ նա...։

Ինչ էլ ստեղծագործի Վարպետը (և ի՞նչ չի գրել նա՝ բանաստեղծություն, լեզունդ, առակ, հեքիաթ, պատմվածք, վեպ՝ շափածո թե արձակ), միշտ և շարունակ ի մոտի ունի ո՛չ թե ընթերցողների մի առանձին խավ, այլ նախ և առաջ՝ իր այնքան սիրած ժողովուրդը։ Իր բանաստեղծությունների մի էական մասը գրել է նա այնպես, ինչպես հասարակ ժողովուրդն է բանահյուսում, ժողովրդական բառամթերքով, ասելաձևերով, պատկերներով, ժողովրդական համ ու հոտով, ժողովրդական մոտիվներով գրված իր տաղերը, որոնցից շատերը երգի են վերածված և երգվում են ժողովրդի կողմից, հասկանալի են և սրտադուլ յուրաքանչյուր հայի համար։ Ասես ժողովրդի ծոցից դուրս ելած մի գուռան է խոսում կամ Երգում։

Վարպետի ստեղծագործություններն այնքան սրտաբույս են, այնքան անմիջական, այնքան ջերմ ու վարակիչ, որ անգիր անելու հատուկ ձիւ գործադրես թե ոչ, անպայման մնում են հիշողությանդ մեջ կա՛մ ամբողջապես, լրիվ, կա՛մ էլ՝ վեթ իրենց յնորոշ համ ու բույրով, իրենց պիմով։ Նրա գործերից մի բան մնում է հիշողությանդ մեջ, ընդմիշտ կառույց մը, կազմում քս խոր էություն մի մասը։

«Անտուն թույնակս, իմ խնդ, տխուր երգ,
Դու իզուր թաք իմ սիրող սրտես».

Գլուխ դնելու մեկ տեղ դու երբեք,

Գիտեմ, չես գտնի, ինչքան

Թափառես...»

Այսպիսի տաղով դիմում է Վարպետն իր սեփական բանաստեղծություններին, 1902 թվականներին, Երր դեռևս չգիտեր, թե ի՞նչ ճակատագիր է վերապահված իր ստեղծագործություններին։

Այժմ, հիսուն տարի անց, ամեն մարդ դիտե, Վարպետն ինքն էլ դիտե, որ նրա բանաստեղծությունները, նրա ստեղծագործ-

ություններն ընդհանրապես գտել են ժողովրդանկա ջերմ, հաստատուն տեղ՝ հայ ժողովրդի սիրտը։



Վարպետին սիրում են բոլորը՝ մտավորականությունն ու գյուղացին, բանվորն ու ծառայողը, տարեցներն ու երիտասարդները, պատանիներն ու մանուկները։

Առաջին հերթին հիշենք Վարպետի կերպարները գրչեղբայրներին, որոնք անսահման սեր ունեն դեպի իրենց նահապետը, որ իրենց նախագահ է երկար տարիներից ի վեր։ Սովետահայ բանաստեղծներից ամենակարկառուն ու հեղինակավորը՝ Նաիրի Հարյանը, Վարպետի ծննդյան յոթնասուներամյակի կապակցությամբ շարադրված և «Հայ ժողովրդի ամենասիրված բանաստեղծը, Հայրենիքի, ազատության և սիրո երգիչը» վերնագրված իր հոդվածում Վարպետի մասին ասում է, թե նա «հայ ժողովրդի ամենասիրված բանաստեղծն է», որ «մահահայանք մեծ բանաստեղծ է։ Հայ գրականության լեռնաշխարհում նա մեկն է այն գագաթներից, ուր կնքված են հավերժական ձյունով նարեկացի, Քուլակ, Սայաթ-Նովա, Արուսյան, Թումանյան — այս լեռնապարի հեկտներից է Ավետիք Իսահակյանը»։ Վարպետին շատ են սիրում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իր պաշտոնակիցները՝ ակադեմիկոսներն ու գիտնականները։

Վարպետին շատ են սիրել ու սիրում մեր հին ու նոր երաժիշտները, որոնք հիացել են նրա երաժշտական, պարզ ու սրտազարավ բանաստեղծություններով, որոնցից «Ռ-ից ավելին վերածել են երգի։ Վարպետի լիրիկական բանաստեղծությունների տեքստերի վրա եղանակներ հորինած մեր կոմպոզիտորներից հիշենք Գ. Արուստամյանին, Ա. Տիրաբեյանին, Ս. Մելիքյանին, Գ. Սյունուն, Հ. Ստեփանյանին, Ազատ Մանուկյանին, Մ. Միրզոյանին, Տ. Ավետիսյանին, Այսյանին, Վ. Տալյանին, Դ. Ղազարյանին և մի տասնյակ ուրիշների, որոնցից մի քանիսը՝ ինչպես Ալեմշահը, Օ. Պերպերյանը, Ծ. Պերպերյանը՝ արտասահմանյան երաժիշտներն են։ Ինչքան մեզ հայտնի է, ուրիշ ո՛չ մի հայ բանաստեղծի այդքան մեծ թվով բանաստեղծություններ երգ չեն դարձած։

Վարպետը սիրելի է նաև մեր կերպարավետագետներին, որոնք գործվանքով վրձին են նրա նկարը կամ քանդակել նրա անդրին։ Հիշենք Մարտիրոս Սարյանին, որ Վարպետին նկարել է երեք անգամ, Փանոս Թերլեմեզյանին, Միշա Նալբանդյանին, Ախիկյանին, որոնք նույնպես հորինել են Վարպետի դիմանկարները։ Քանդակագործ-

նեքից հիշենք Սուրեն Ստեփանյանին, Ուրարտուին, Քեֆենյանին, Խարկն, դեռ լրիվ չէ այս ցուցակը:

Մեր կերպարվեստագետները նկարում են ոչ միայն բրոնզ Կարպետին, այլև հորինում են նրա ստեղծագործությունները և ներշնչված գործեր, իլյուստրացիաներ: Վերջերս բացված զննարկմանտական ցուցահանդեսում մենք Հանդիպեցինք երիտասարդ նկարիչ Սուրեն Մուրադյանի «Սաղիի վերջին դարուն» և «Խարիբալդիականը» անունով նկարները, որոնց համար նյութ են ծառայել Կարպետի նույն վերնագրերով արձակ գործերը:

Հիանալի է, որ Կարպետն անշաղի ժողովրդականություն է վայելում բոլոր բնագավառների մեր մտավորականների մոտ, ուսեց ավելի հիանալիս այն է, որ ժողովրդականությունը ընդգրկում է բուն իսկ ժողովրդին, շարքային աշխատավորին:

Մի կապակցությամբ, երբ ես խոսում էի Կարպետի հետ այն մասին, թե ինչքան լայն տարածում ունի նրա ստեղծագործությունը ժողովրդական լայն խավերի շրջանում, սա նկատեց.

— Այդ բոլորը գալիս է մեր դպրուղիներից: Բեր ամենահամեստ աշխատավորներն իսկ ձրի, պարտադիր և ընդհանուր կրթության սկզբունքի կիրառումով. գրող-կարպետից են, առնվազն տարրական դպրոց տեսած: շատերը յոթնամյա դպրոց են ավարտել. կան նրանց մեջ մինչև իսկ այնպիսիները, որոնք լրիվ միջնակարգ դպրոցի շրջանավարտ են. իդուր չէ, որ պետական ժողովուրդ ենք, իդուր չէ, որ մեր երկիրը պատած է հարյուրավոր յոթնամյա և միջնակարգ դպրոցների ցանցով: Դպրոցներում, ապագա ինտելիգենտների շարքում, ապագա բանվորներն ու արհեստավորները նույնպես սովորում են հայ գրողների մասին, ի միջի այլոց և՛ իմ մասին: Սովորում են կարդալ, հասկանալ և սիրել հայ գրողներին:

Հայ դպրոցի հիշատակումը Կարպետի կողմից՝ որպես ազգակ հայ գրողների ստեղծագործության ճանաչողության, որպես նրանց գործերի և անձերի ժողովրդականացման ոչախ՝ վերաբաժնեց իմ մեջ վաղուցվա մի ցանկություն՝ լինել Կարպետի անունը կրող լրիվ միջնակարգ դպրոցում, տեսնել, թե ի նշակա է սովորում մեր մատուց սերունդը, ի նշակա է կապված Կարպետի և նրա ստեղծագործությունների հետ: Զանկությունս հայտնեցի մեր սիրելի բանաստեղծին, որ ասաց.

— Մի օր կզնանք միասին. ես մեկ-մեկ այցելում եմ, բայց այս վերջին ամիսներին

չեմ գնացել: Այս օրերս Հանդիպիր, կամ գանգ տուր, պայմանավորվեմք. գնա՛նք:

— Կարպետ քան, գնա՛նք հենց հիմա:

— Մի բան կա—Ձեզ, հաջանաբար, հետաքրքրում է հայոց գրականության դասը, այնպես չէ: Զանգ տանք, տեսնենք, թե այսօր հայոց գրականության դաս կա՞ և ո՞ր ժամին:

— Ավելի լավ է, որ գնանք առանց նախապես ազդարարելու, անակնկալ:

Կարպետը համաձայնվեց:

Քառորդ ժամ հետո, Կարպետի ավտոմեքենան կանգնեց Սրենի կայարանի հրապարակում, որի վրա է Ավետիք Իսահակյանի անվան իգական միջնակարգ դպրոցի գեղակառույց, ընդարձակ շենքը:

Դալարիքի և ծաղկանոցների միջև առայանում էինք դեպի դպրոցը: Դասամիջոց էր (Սփյուռքի ընթերցողներին ավելի հասկանալի բառով՝ զբոսանք): Հնուվից մեզ հասնում էր մանկահասակ դպրոցական աղջիկների թռչնային ճովողությունը, որոնք վազվզում էին կամ խումբ-խումբ հանդարտ զբոսնում ընդարձակ բակում: Մտանք գլխավոր դարասից ներս: Երբ աշակերտուհիները նկատեցին Կարպետին, բուսանաբար թողնելով իրենց խաղերն ու զբոսանքը, ցնծադին ճիչերով ձայն տվեցին միմյանց.

— Կարպետն է... Կարպետն եկավ... Կարպետը...:

Իրենց՝ դպրոցականի մուգ-սրճագույն գեղեցիկ համազգեստների մեջ, որոնց վրա զվարթության շեշտ էին դնում պիոներական կարմիր վզկապները, մատաղներամ բազմությունը խոնվեց Կարպետի շուրջը. երանելի ժպիտներով բարևում էին, ցնծում, թուրում...:

Բայց հանկարծ մեկ ականթարթում մեր շրջապատն ամայացավ. բոլորը վազում էին շենքից ներս՝ թեև զանգը չէր տված... Նրբ մենք էլ նրեխաների ետևից մուտք գործեցինք շենքը, պարզվեց այդ շտապ անհետացման պատճառը: Կարմիր վզկապավոր շարանճիները երկու շարքով շարվել էին մուտքի մոտ և երկրորդ հարկ տանող մոտեմենտայ սանդղաղների վրա: Նրբ Կարպետն անցնում էր նրանց միջով, երկրորդ հարկ բարձրանալու համար:

— Երկա՛ր ապրի մեր սիրելի Կարպետը, ուռա՛,— գոչեց տասնչորս տարեկան մի պիոներուհի:

— Ուռա՛,— ձայնակցեցին բոլորը միահամուռ: Եվ թնգացին ծափեր:

Մանկահասակ աշակերտուհիները սիրո՛ւ և հարգանքի տուրահատուկ ցույց էր՝ անմիջական և շերմ:



Խոր մտորումների մեջ եմ ընկղմվում եմ՝ մինչև ավտոն մեզ Միկոյան և ապա Ստալինյան պողոտաներով վերադարձնում է Քաղաքային պողոտան, որի մոտ է պետության կոդեքսի վարչատնիսն նվիրված շքեղ վիլլան... Մտորումներից մերթ Երեմյանի սթափեցնում է ինձ վարպետը՝ մատնանիշ անելով մի հոլովակապ նորակառույց այդ պողոտաներից մեկն ու մեկնում, մատնանիշ է անում հարստությանը, հրեականից, Շիրակի այս պանծալի որդին, Անի քաղաքի այս վաղմիկ և մոլեռանդ հիացողը, հայ ճարտարապետության և հայ ճարտարապետների այս հիասքանչ երգիչը անզուսպ հրեմանքով է լցվում, երբ տեսնում է հայ ազգային ճարտարապետության ռեզիս և նորազույն տեխնիկայով ամեն օր շքեղ ու պերճափայլ դարձող մեր մայրաքաղաքի նորանոր նվաճումները:

— Ահա, թե ինչ է նշանակում սեփական պետություն ունենալ, — ասում է վարպետը:



Մտնում ենք վարպետի դրաքարանը, որը միաժամանակ իր աշխատասենյակն է, ընդարձակ, ճոխ, մեծ բանաստեղծին և քաղաքահայտ ակադեմիկոսին վայել: Միասին նայում ենք սովետական շրջանում նրա հրատարակած գործերը, 1930 թվականին լույս է տեսել, Երևանում, վարպետի ռեանաստեղծությունները վերնագրված ժողովածուն, 5.000 տպաքանակով (տիրաժողով), 2 հատոր: 1950—1951 թվականներին Երևանում լույս ընծայվեց Երեմյանի ժողովածուն, 5.000 տպաքանակով, 4 հատոր: Հիշենք և Մոսկվայում հրատարակված Քենտրի երկերը, 1 հատոր, 6.000 տպաքանակով, Ն. Զարյանի առաջարկով:

Այս գործերը ոչ միայն զարգարում են հազարավոր անհատական գրողարարներ, այլև գտնվում են հանրային գրադարաններում, որոնց ցանցով նույնպես ծածկվել է մեր երկիրը՝ շնորհիվ մեր պետության: Այդ գրողարարները վարպետի ժողովածուները մատչելի են դարձնում տասնյակ հազարավոր ընթերցողների և՛ քաղաքներում և՛ գյուղերում:

— Նախասովետական շրջանում, և այժմ էլ Սփյուռքում 5.000 կամ 6.000 տպաքանակը հայ գրողի համար երա՛զ էր և է՛— նկատում եմ ես:

— Եիշտ է՛ իմ ժողովածուները փոքր հատորներով, լույս էին տեսնում 1.000 կամ առ առավել 2.000 օրինակով: Մեր սքանչելի Սայաթ-Նովայի բանաստեղծությունների ժողովածուն առաջին անգամ լույս է ընծայվել Գեորգ Լախվերդյանի նախաձեռնու-

թյամբ, 1852 թվականին, միայն 500 օրինակով: Մինչև իննսուական թվականների սկիզբը դեռ կարելի էր այդ գրքուկից ճանաչել Կովկասի հայ գրականագետները մոտ. ամբողջ 50 տարի 500 օրինակը դեռ չէր սպառվել... Քիչ էր հայ դպրոցների թիվը, Հայ գրողը դժբախտ էր ամեն տեսակետով, Զոհանիք պետություն, չունեինք հոգաբարձի:

Պետության հոգատարությամբ 1940 թվականին նշվեց վարպետի ծննդյան 65-ամյա հոբելյանը, 1945 թվականին՝ 70-ամյակը, 1950 թվականին՝ 75-ամյակը, որոնց արձագանքեցին նաև Մոսկվան և մյուս եղբայրական ռեսպուբլիկաները: վարպետի արժանացավ իննի շքանշանին, որ Սովետական Միության բարձրագույն շքանշանն է, արժանացավ Ստալինյան մրցանակի լուրբատի կոչման (առաջին աստիճանի, 100.000 ռուբլու պարգևով):

Հայ ժողովրդի սիրելի բանաստեղծը սիրելի է նույնպես Սովետական Ռուսաստանում, Ուկրաինայում, Քիռոռուսիայում, Վրաստանում, Ադրբեյջանում, որոնց ժողովուրդների, ինչպես նաև սովետական մի շարք ուրիշ ժողովուրդների լեզուներով թարգմանված և ժողովրդականացված են իր ստեղծագործությունները:

Ռուսները միշտ սիրել են վարպետի ստեղծագործությունները, բարձր գնահատել այս մեծաքանցար բանաստեղծին: Դեռ 1916 թվականին ռուս հայտնի բանաստեղծ Ալեքսանդր Բլոկը Ավետիք Իսահակյանի մասին գրել է. «Գուցե այդպիսի պայծառ ու անմիջական բանաստեղծ հիմա ամբողջ Եվրոպայում չկա: Նույն թվականին, աշխարհահռչակ ռուս կոմպոզիտոր Ռախմանինովը եղանակ է հորինել վարպետի ուսերենի թարգմանված Ամեն գիշեր իմ պարտիզոնում՝ Զոհ համար: Ռուս կոմպոզիտորներ Իվանովն ու Ցեզար Գիլը նույնպես երգի են վերածել վարպետի ստեղծագործություններից մի քանիսը:

Այն գրողը, այն արվեստագետը, որը հարգատ է իր ժողովրդին, օր իսկական թարգմանն է իր ժողովրդի հոգուն, — և այդպիսին է մեր վարպետը, — հեղինակություն է նաև ուրիշ ժողովուրդների մոտ: Նրա բանաստեղծությունները, բացի ռուսերենից և վերը հիշված լեզուներից, թարգմանված են նաև անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն լեզուներով: Մեծ բանաստեղծի Ակրու-Լալա Մահարիան համաշխարհային արձագանք է ստացել՝ թարգմանված լինելով ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, չեխերեն, հունարեն, վրացերեն, ադրբեյջաներեն, պարսկերեն, արաբերեն, եբրայերեն, յապոներեն լեզուներով:

Մերությունն ընդհանրապես րադիատիվում է ձմռան հետ, ներկայացվում է ձմռան պատկերով: Մեր ժերունագարդ բանաստեղծը ամբիջի նման է սշնան, Լեռաբառայան դաշտի պայծառ, պայար, պուղատուտ և երկարատև աշնան:

Նա լրացրեց իր յոթանասունութերորդ տարին, յայնք երիտասարդական եռանդով մասնակցում է մեր զրահուն-հասարակական կյանքին:

Նա մեր Գերադույն Առվևտի ղեկավարում է, մեր Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Հայաստանի սովետական գրողնե-

րի միության նախագահ, և գործուն մասնակցություն ունի այդ օրգանների հասարակական, դիտական և դրական աշխատանքներին: Նախագահում է հանդեսների, ելույթներ է ունենում, զեկուցումներ կարդում, առաջարկներ գրում կուսիկ խարդմատությունների համար, խմբագրում հայ կյանքիչների գործեր և շարունակում է ստեղծագործել: 75 տարեկան էր արդեն, երբ գրեց իր ամենաերևելի գործերից Դեկը՝ «Հայ ժողովրդի նամակը»:

Հայ պետության հոգաբարձությունը, հայ ժողովրդի սերն ու գործունեները երիտասարդ ու կենսառոգը են պահում մեր սիրելի վարպետին:





ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԵՐԿԱՆ ՁԵՆՔԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ



րեստաներկու տարի առաջ, երբ հիմնադրվում էր Երևանի պետական համալսարանը՝ Սովետական Հայաստանի տառքին լրացրածությունն առաջնական հաստատություններ, ամենայն սրությամբ հարց ծագեց՝ որտե՞ղ տեղավորել նոր ստեղծված հաստատություններ: Դյուրին չէր լուծել այդ խնդիրը, քանի որ այն ժամանակվա Երևանը հնուց ժառանգել էր, շատ քիչ բացառությամբ, միայն կալաշեն տնիս: Եղած սակավթիվ քարաշին, քիչ թե շատ հարմար շենքերն անկարող էին բավարարել քաղաքի նոր, մի անդամից աճած պահանջներին:

Հարկ եղավ համալսարանը տեղավորել դպրոցներից մեկում՝ երկհարկանի մի շենքում, Արտվյան փողոցի վրա:

Այն ժամանակից ի վեր շատ լուսն է փոխվել այդ շենքում: Ավելի շուտ այն դարձել է միանգամայն անճանաչելի: Համալսարանի դարգացման հետ միասին վերակառուցվել, մի քանի անգամ ընդարձակվել է այն, գառնալով քաղաքի խոշոր շենքերից մեկը: Նրա բազմաթիվ լսարանները, աշխատասենյակները, փորձասրահները, մեծ ու փոքր սենյակները և ուսումնական այլ հարմարությունները հնարավորություն են տալիս ստույգանելու ավելի քան հրկու հոգար ուսանողների վեց ֆակուլտետներում:

Սակայն այնուամենայնիվ այս շենքը տնկարող է լիովին բավարարել համալսարանի բոլոր կարիքները, մանավանդ եթե նկատ


տի տննանք նրա հետագա զարգացման հեռանկարները: Այդ իսկ պատճառից հարց դրվեց կառուցելու նոր շենք:

Սովետական կառավարությունը, որն իր խաղաղ ստեղծագործական աշխատանքում բացառիկ ուղադրություն է նվիրում կուլտուրական շինարարության գործին, սիրով ընդառաջ գնաց այդ պահանջին և դրական լուծում տվեց համալսարանի շենքի կառուցման խնդրին:

Շենքի նախագծման աշխատանքների համար հրավիրվեցին լավագույն մասնագիտանիր՝ ճարտարապետ Է. Տիգրանյանի ղեկավարությամբ, որին և պատկանում է հեղինակության պատիվը:

Ինչ է իրենից ներկայացնելու համալսարանի նոր շենքը: Մեր առաջ է նրա զծագրական նկարը: Փորձենք համառոտակի նկարագրել այն:

Նոր համալսարանի իրենից ներկայացնելու է 5—6 հարկանի շենքերի մի ամբողջական կոմպլեքս (խումբ): Այդ շենքերից յոթը հատկացվելու են ուսումնական կորիքների համար, սրանցում տեղավորվելու են ֆակուլտետները: Նրանք կունենան այն բոլոր հորմարությունները, որոնք անհրաժեշտ են ուսման համար: Բուլտիկան է ասել, որ ֆակուլտետները կունենան 45 սարքեր, հատուկ կառուցված և նորագույն գործիքներով կահավորված փորձասրահներ (լաբորատորիաներ): Ուսանողներն փրենց սրամագրության տակ կունենան 675 լսարան և առան-



Գրեկոսցի Պետական համալսարանի կառուցման ժամանակից հետո գտնվող Վենետիկյան պալատը՝ նախկին Մոսկովյան թանգարանը:

ձին աշխատանքային, մուրաքանչյուր ֆակուսետ կունենա իր ընդհանուր դահլիճը հավաքությունների և հանդեսների համար: Բացի այդ, ընդհանուր համալսարանի համար կլինեն երկու առանձին մեծ դահլիճներ, որոնցից մեկը մոտ 2.000 մարդու համար:

Ուսումնական շենքերից բառի, համալսարանը կունենա բազմաթիվ այլ շենքեր կենցաղային և մյուս կարիքների համար: Կառուցվելու են երկու խոշոր հինգ հարկանի տներ տասնողական հանրակացարանների համար՝ իրենց բոլոր հարմարություններով: Այդ տներում տեղավորվելու են հրկու հազար ուսանողներ: Ցուրաքանչյուր սենյակում բնակվելու էն 2—3 հոգի:

Ուսանողական հանրակացարաններից բացի, կառուցվելու է առանձին բնակելի տուն համալսարանի պրոֆեսորների և դասախոսների համար: Այդ տան յուրաքանչյուր բնակարանը բաղկացած է լինելու 3—4 սենյակից՝ իր բոլոր հարմարություններով:

Համալսարանը կունենա փր առանձին ճուշարաններ, բազնիքներ, լվացքատուն, շենքուման կաթնալատուն, էլեկտրական ենթակայան, մարմնամարզական դահլիճներ և քաջօդյա հրապարակներ, զբոսայգին, կինո-թատրոն, ակումբ:

Շենքի նախագծի հեղինակն իր գծադրություններում վարպետորեն և լայն կերպով օգտագործել է հայկական հին ճարտարապետության լավագույն նմուշները, որոնք կառուցումներին կտան վեհաշուք և հույակերտ տեսք: Բոլոր գլխավոր շենքերը երեսպատվելու են սրբատաշ քաղաղտով և Հայաստանի բազմերանգ, գեղեցիկ տուֆերով, որոնց մեջ գերիշխողը կլինի Լոռվա բաց մարմնագույն, հիանալի շինաքարը, որը շինարարներին հայտնի է ֆիլզիտ անունով: Շենքերի ճակատները զարդաոված կլինեն հայկական հարուստ զարդաքանդակներով, խոյակներով, սյուներով ու կամարներով:

Հարկ է նշել, որ համալսարանի նոր շենքի հետ միասին, ներսի ողջ կահավորանքը ևս լինելու է նոր, ձին շենքից այստեղ ոչինչ չի փոխադրվելու: Ամեն ինչ՝ սկսած փորձասրահների գործիքներից, ռաումական այլ պիտույքներից և վերջացած լսարանների ու հանրակացարանների կահավորանքներով՝ լի-

նելու է նոր, որոնց պատվիրման համար այժմյանից ձեռք են առնվում միջոցներ:

Համալսարանի շինարարության համար քաղաքի արևելյան մասում, Ալեքստան կոչված թաղամասում, հատկացված է շուրջ 9 հեկտար տարածություն: Այս թաղամասը Երևանի նորակառույց թաղամասերից մեկն է, որ իրար Կոնից բարձրանում են նոր կառուցվող բնակելի տներ, հասարակական շենքեր:

Շինարարական աշխատանքներն սկսվել են ընթացիկ տարվա դարձանից և հաջողությամբ առաջ են տարվում: Ավելի արագ է ընթանում բիոօգեական ֆակուսետի շենքի կառուցումը: Սկսված է մյուս գլխավոր շենքերի հիմնադրումը:

Շինարարության վայրն փրենից ներկայացնում է մի հուզիչ տեսարան: Օրենքում այստեղ չի դադարում աշխատանքային նոսրերը: Անդադար լսվում են մեքենաների աղմուկը, քարտաշների մուրճերի զարկը, բանվորների ուրախ բացազանությունները: Շուրջն ամենուրեք նկատելի են շինարարական նրբերի՝ փայտի, քարի, ավազի, ցիմենտի, կրի հսկայական կույտեր:

Կառավարական մարմինները մեծ ուշադրություն են նվիրում համալսարանի կառուցմանը: Նրանք ձեռք են առել բոլոր միջոցները, որպեսզի շինարարությունն ապահովված լինի բանվորներով, շինարարական մեքենաներով և նյութերով, փոխադրական և դրամական միջոցներով:

Կառուցողների եռանդուն ջանքերի շնորհիվ անցած ամիսների շինարարական առաջադրանքները կատարվել էն: Ընթացիկ տարվա համար հատկացված միջոցները յուրացված են:

Պետական համալսարանի շենքի կառուցման համար նախատեսված է ծախսել 54.000.000 ռուբլի:



Քաղաքի ուսանողական թաղամասում, այնտեղ, ուր կենտրոնացված է Երևանի բարձրագույն ուսումնական հաստատությունների մեծ մասը, կառուցվում է Պոլիտեխնիկական ինստիտուտի նոր շենքը:

